

Գիրքը լուսապատճենահանվել է  
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից և ներկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՅՐԿՈՒՄՆԸ ՈՒՆԵԱՆԱԼ, ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ  
ՀԱՅՄԱԳՈՅՏՔԵՆԱԶԱՆԵԼԻ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՄՇԵՂՈՒՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՆ՝

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԸՆԴՈՒՄ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՆ:  
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:



ԳՐՔԻՔ ՄԵՔ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

# ԿՈՌՈՐՊՈՐԱՏԻՎ

(բացառական ձեռնարկ)

ԵՐԵՎԱՆ 2005



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

This publication was made possible through support provided by the Office of Economic Growth, Bureau for Europe and Eurasia, U.S. Agency for International Development, under the terms of Award No. EMT-G-00-02-00008-00. The opinions expressed herein are those of the author(s) and do not necessarily reflect the views of the U.S. Agency for International Development.

Սույն ձեռնարկը ստեղծվել է ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության Եվրոպայի և Աֆրասիայի բյուրոյի տնտեսական զարգացման գրասենյակի աջակցությամբ՝ EMT-G-00-02-00008-00 դրամաշնորհի պայմանների համաձայն: Ներկայացված կարծիքները պատկանում են հեղինակին/հեղինակներին և պարտավոր չէ, որ համընկնեն ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության տնտեսկետներին:

Данное издание было создано при поддержке Офиса по экономическому росту Бюро Европы и Азии Агентства США по Международному Развитию в рамках условий гранта No. EMT-G-00-02-00008-00. Точка зрения, отраженная в указанных документах, либо заявлениях может не совпадать с точкой зрения Агентства США Международного Развития (USAID).



Ձեռնարկը տպագրվել է  
«Կոռուպցիայի դեմ պայքարի տեղեկատվական  
աջակցում» ծրագրի շրջանակներում  
Ծրագրի ղեկավար Կազա Ամիրխանյան

«ՀԱԿԱՍՏՎԵՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱ ՔԱՌՅԱՆ

ԿՈՌՈՒՊՑԻԱ

*(բացատրական ձեռնարկ)*

ԵՐԵՎԱՆ - 2005

ՀՏԳ. 342.5 (479.25)  
ԳՍԴ. 67.99 (2Հ)  
Ք. 247

Գիրքը հրատարակվել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի  
գիտական խորհրդի երաշխավորությամբ

**Քառյան Արա**

Ք. 247 Կոռուպցիա.-Եր.: Գասպրիմա.- 2005 թ., 108 էջ:

Ձեռնարկում մատչելի ձևով ներկայացված են կոռուպցիա երևույթի հիմնական հասկացությունների բացատրություններն ու մեկնաբանությունները: Այն հանդիսանում է նման մոտեցմամբ Հայաստանում կոռուպցիան ըսյն հանրությանը ներկայացվող առաջին փորձը: Ձեռնարկի կարգը է ճանաչողական առումով օգտակար լինել բոլորի համար, ովքեր հետաքրքրվում են սույն հիմնախնդրով: Այն առավելապես օգտակար կարող է լինել լրագործների և ուսանողության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության բոլոր սուբյեկտների համար:

**Corruption (explanatory manual)**

The explanation and interpretation of major definition of corruption are presented in the manual. It is the first attempt to present the corruption to wider public in this approach in Armenia. The manual can be useful for all in cognitive matter, who are interested in the issue. It can be maximal use for journalists and students, as well as entities of civil public.

ԳՍԴ. 67.99 (2Հ)

ISBN 99941-42-33-X

## Բովանդակություն

	Ներածություն	5
1	Կոռուպցիայի հասկացությունը և սահմանումը	8
2	Կոռուպցիա տերմինի ծագումնաբանությունը	10
3	Կոռուպցիայի տեսակները	11
4	Կոռուպցիայի երևութաբանական էությունը	14
5	Կոռուպցիայի վրա ազդող հիմնական գործոնները	15
6	Կոռուպցիոն երևույթների պատմական ժառանգությունը	16
7	Կոռուպցիան որպես կուլտուրայի քաղաղրիչ	17
8	Կոռուպցիայի հասարակական ընկալումները և պատկերացումները	19
9	Կոռուպցիայի հետևանքները	20
10	Պետական և մասնավոր հատվածների տարանջատման պահանջը	22
11	Կոռուպցիայի գնահատման եղանակները	23
12	Անցումային փուլին բնորոշ կոռուպցիայի առանձին դրսևորումները և առանձնահատկությունները	27
13	Համակարգային կոռուպցիա	30
14	Աղքատությունը և կոռուպցիան	31
15	Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական մոտեցումները	32
16	Հակակոռուպցիոն քարեփոխումների հիմնարար սկզբունքները և համազգային վարքագծի կանոնները	34
17	Վերահսկողության արդյունավետ համակարգը	35
18	Հակակոռուպցիոն պայքարի սկզբունքը	36
19	Տնտեսական բարեփոխումները և ստվերային տնտեսությունը	36

20	Պետական ֆինանսական համակարգի թափանցիկ գործունեության սկզբունքները	37
21	Մեխանիզմների իրավունքի պաշտպանությունը և հետմասնավորեցման շրջանի հիմնախնդիրները	42
22	Մրցակցության պաշտպանությունը	42
23	Գործարարությունը սպասարկող պետական ծառայությունների ոլորտում կոռուպցիոն ռիսկերի սահմանափակումը	43
24	Հակակոռուպցիոն պայքարի անհաջողության պատճառները	44
25	Հակակոռուպցիոն պայքարում մասնակցության սուբյեկտները	45
26	Հավելվածներ	47
27	Եվրոպայի խորհուրդ, Կոռուպցիայի քրեական իրավունքի համաձայնագիր	47
28	Կոռուպցիայի քաղաքացիական իրավունքի համաձայնագիր	70
29	Եվրախորհրդի հրահանգը «Փողի լվացման նպատակների համար ֆինանսական համակարգերի օգտագործման կանխարգելման մասին»	77
30	Վարքի օրենսգիրք (Կոռուպցիայի դեմ պայքարի Անկախ հանձնաժողով, Նոր Հարավային Ռուդա, Ավստրալիա)	97



## Ներածություն

Հայաստանը ներկայիս անցումային շրջանում գտնվում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, պետական կառավարման համակարգի բարեփոխումների նոր փուլում, որի կայևոր բաղադրիչներից են նաև կոռուպցիայի հիմնախնդրի համարժեք լուծումները: Կոռուպցիայի դեմ պայքարի համակարգման նպատակով ՀՀ կառավարությունը 2003 թվականի նոյեմբերի 6-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների» ծրագիրը:

Կոռուպցիայի հաղթահարումը հանդիսանում է տնտեսական և սոցիալական զարգացման կարևոր գրավական: Կայուն տնտեսական աճը, երկրի համար խիստ կարևոր ներդրումների, հատկապես արտաքին ինստիտուցիոնալ ներդրումների կողմից իրականացվող ներդրումները, միջազգային կազմակերպությունների և դոնոր երկրների օժանդակության շարունակականությունը, Եվրամիության հետ սկսված Հայաստանի ինտեգրման գործընթացը՝ հանրային կյանքում ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության, տնտեսության ոլորտում ազատականացման և անուղղակի կարգավորման անբողջական համակարգի արմատավորման հետ մեկտեղ պահանջում են կոռուպցիայի դեմ հետևողական պայքարի իրականացում:

Այդ պայքարի բարդությունն ըմբռնելու համար հարկ է նկատել այն, որ.

- Ինչպես կապիտալն է իր էությանը ունակ հոսելու առավել եկամտաբեր ոլորտներ, այնպես էլ պետական իշխանական լիազորությունների զավթումը՝ կոռուպցիայի առավել վտանգավոր դրսևորումը, առաջին հերթին կատարվում է այն ոլորտներում, որտեղից հնարավոր է ստանալ առավելագույն արդյունք՝ անօրինական տնտեսական ռենտայի տեսքով:
- Կոռուպցիոն միջավայրում բարոյագրվում ու կապիտուլյացիայի է ենթարկվում հասարակության մեծամասնության հեռաբանն ունեցող երկրի դիմագիծը բնութագրող քաղաքական էլիտան, և փոխարենը ձևավորվում է պսևդոքաղական «էլիտա», որը սակայն չի կարող ունենալ իրական ժողովրդավարական հեռաբան և հիմնվում է կոռումպացված իշխանական համակարգի վրա: Կոռուպցիան արդյունքում ունակ է որակագր-

կել հանրային կյանքի ժողովրդավարության ձևաչափն ու կառուցակարգերը:

Հակակոռուպցիոն ծրագրի ընդունումը հանդիսանում է իշխանությունների կողմից այդ հիմնախնդրի հաղթահարման քաղաքական կանքի դրսևորումներից, որով իշխանությունները կոչ են արել սատարել հասարակությանը այս ոժովարին և խիստ հետևողականություն պահանջող պայքարում: Այն ենթադրում է.

- երևույթի օբյեկտիվ վիճակի՝ մասշտաբների և վտանգավորության գնահատում,
- հանրության իրազեկում և անհրաժեշտ ուսուցում,
- կանխարգելիչ գործիքների լիարժեք կիրառում,
- հակակշիռների ամրագրում՝ օրենսդրական կարգավարման և վարչական կառավարման կառուցակարգերում,
- իշխանության բոլոր թևերում կառավարող բոլոր օղակների հաշվետու լինելու պարտադրանքի իրագործում,
- իշխանությունների կառավարման գործընթացների հրապարակայնության, թափանցիկության ապահովում,
- օրենքի պարտադրանքի և կոռուպցիան իրավախախտումների համար պատժի կիրարկման բարձր ռիսկ:

Հայաստանում կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված ուսումնասիրությունները վկայում են վերջին տարիներին կոռուպցիայի կրճատման որոշակի միտումների մասին: Մասնավորապես՝ Համաշխարհային Բանկի (ՀԲ) ու Չարգացման և Վերակառուցման Եվրոպական Բանկի (ՉՎԵԲ) կողմից 1999 և 2002 թվականներին քիզնես գործունեություն իրականացնող սուբյեկտների շրջանում անցկացված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ 1999 թվականի համեմատ 2002 թվականին Հայաստանում կոռուպցիայի դրսևորումներն զգալիորեն կրճատվել են՝ ինչպես բացարձակ, այնպես էլ համանման ուսումնասիրության ենթարկված այլ երկրների հետ համեմատական գնահատման առումով: Մասնավորապես՝ ՀԲ և ՉՎԵԲ-ի կողմից իրականացված Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային 24 երկրների ուսումնասիրությունների արդյունքներով, տնտեսվարողների կողմից գործունեության իրականացման համար պետական տարբեր պաշտոնյաներին տրվող, այսպես կոչված «կաշառային հարկի» մեծությունը 1999 թվականին Հայաստանում կազմել է իրացման շրջանառության 7.5 տոկոսը: Ընդ որում, Հայաստանում «կաշառային հարկը» 2002 թվականին 1999 թվականի համեմատ կրճատվել է ավելի քան 8 անգամ և կազմել է իրացման շրջանառության ընդամենը 0.9 տոկոսը: Ընդ որում, նույն ժամանակաշրջանում ուսումնասիրված երկրներում այդ ցուցանիշը կրճատվել է ընդամենը 3.7 անգամ: Ընդգծենք, որ եթե 1999 թվականին Հայաստանում «կաշառային

հարկի» չափը 1.4 տոկոսային կետով բարձր է եղել ուսումնասիրվող երկրները միջին չափից, ապա 2002 թվականի տվյալներով նշված ցուցանիշը արդեն 0.7 տոկոսային կետով ցածր է եղել ուսումնասիրված երկրների միջին ցուցանիշից:

Մեկ այլ բնութագրական ցուցանիշով, այն է՝ քիզնեսը կառավարելու համար կառավարիչների ընդհանուր ժամանակի ծախսում պետական կառույցների հետ շփման համար անհրաժեշտ ժամանակի մասը կամ այսպես կոչված «ժամանակային ծախսը» Հայաստանում 2002 թվականին 1999 թվականի համեմատ կրճատվել է 4 անգամ: Ընդ որում, ուսումնասիրված 24 երկրներում այն կրճատվել է ընդամենը 1.3 անգամ: Նկատենք, որ եթե 1999 թվականին Հայաստանում նշված ցուցանիշը 2 տոկոսային կետով բարձր է եղել 24 երկրների միջին ցուցանիշից և կազմել է 11.7 տոկոս, ապա 2002 թվականի տվյալներով նշված ցուցանիշը 4.7 տոկոսային կետով ցածր է եղել ուսումնասիրված երկրների միջին ցուցանիշից և կազմել է 2.8 տոկոս<sup>1</sup>:

Նշված միտումները հիմնականում պայմանավորված են վերջին տարիների ընթացքում օրենսդրական և վարչարարական համապատասխան լուծումներով: Առանձնացնենք դրանցից մի քանիսը. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կազմակերպություն գրանցելու համար պահանջվում է ստավելագույնը 5 օր, ընդ որում, տիպային կանոնադրության գրանցման դեպքում կապահանջվի ընդամենը 2 օր, անհատ ձեռներեցների գրանցումը պահանջում է 2 օր:

2001 թվականին էապես սահմանափակվեցին լիցենզավորման ենթակա ոլորտները: Ավելին, լիցենզավորման գործընթացը տնտեսավարման տարբեր ոլորտների համար իրականացվում է պարզ կամ բարդ ընթացակարգերով: Բարդ ընթացակարգով լիցենզավորումը պահանջվում է խիստ սահմանափակ թվով ոլորտներում: Պարզ լիցենզավորման ընթացակարգը պահանջում է ընդամենը 3 օր: Ընդ որում, անձի կողմից պետական մարմնին համապատասխան հայտ ներկայացնելուց հետո 3 օրվա ընթացքում չներժվելու պարագայում համարվում է, որ հայտատուն ստացել է հայտով ներկայացված լիցենզիավորման իրավասություն:

Պետական մարմիններ - քիզնես փոխհարաբերություններում ուղղիչ հանդիսացավ «ՀՀ տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը, որով հստակ սահմանվեց ստուգման լիազորություն ունեցող կազմակերպությունների ցանկը և ստուգման կարգն ու հաճախականությունը: Սահմանափակվեց ստուգումների անցկացման հաճախականությունը, որպես

<sup>1</sup> «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», 2003, N 7, էջ 4

կանոն այն պետք է իրականացվի տալիս մեկ անգամից ոչ ավելի՝ նախապես տեղեկացնելով ստուգվող անձին: Ստուգումների բնույթին համապատասխան սահմանվել են նաև այդ նորմի օբյեկտիվ բացառությունները:

Իշխանությունների կողմից բիզնեսի խթանման հետևողականության մասին է վկայում այն, որ անցած մի քանի տարիների ընթացքում հարկման գրեթե բոլոր տեսակների դրույքաչափերն ունեցել են սուղակի նվազման միտում: Ավելին, հաշվի առնելով փոքր և միջին բիզնեսի ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական և սոցիալական նշանակությունը, այդ բիզնեսի հարկումը Հայաստանում իրականացվում է հարկման պարզեցված եղանակով, որը այդ բիզնեսը վարողներին թույլ է տալիս հարկային պարտավորությունները կատարել առանց բարդ հարկային հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման համակարգերի:

Երկիրը բարեկեցիկ և ժողովրդավարական դարձնելու բաղադրիչներից են կոռուպցիայի հաղթահարման համապարփակ ու ծրագրային մոտեցումները հանրային կյանքի բոլոր ոլորտներում: Առաջին հերթին՝ թափանցիկ, ազնիվ ու վերահսկելի պետական կառավարման համակարգի ձևավորումը, քաղաքացիական հասարակության բազմազան ինստիտուտների մասնակցությունը պետական և հանրային կառավարման գործընթացներին:

Սույն հրապարակման նպատակն է հասարակության լայն շերտերին ներկայացնել կոռուպցիայի երևույթի հետ կապված հիմնական հասկացություններն ու որոշ առանձնահատկությունները, որա դեմ պայքարի հիմնական միջոցներն ու ձևերը: Ձեռնարկը նպատակաուղղված է նպաստելու քաղաքացիական հասարակության և իշխանությունների կողմից հակակոռուպցիոն պայքարի արդյունավետությանը: Այն չի հավակնում սպառիչ պատասխան տալ կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդրի բազմազան հարցերին: Կրելով ուսուցողական բնույթ՝ այն նպատակ ունի ներկայացնել ու մեկնաբանել կոռուպցիայի և որա դեմ պայքարի առանցքային հասկացությունները:

## Կոռուպցիայի հասկացությունը և սահմանումը

Կոռուպցիան օբյեկտիվորեն բնորոշ է եղել բոլոր հասարակարգերին: Այն պահից, երբ առաջ է եկել պետական իշխանության ինստիտուտը և դրան բնորոշ իշխանական լիազորությունների պատվիրակումը որա ենթակառույցներին, միավորներին և առանձին անհատներին, այդ պահից էլ առաջացել է այդ լիազորությունները ուզուրպատելու (բռնա-

տիրելու) կամ սեփական շահերին ենթարկելու գայթակությունն ու ռիսկը:

Կոոուպցիայի երևույթը առկա է բոլոր երկրներում՝ անկախ դրանց սոցիալական մոդելից: Տեսականորեն կոոուպցիան հնարավոր է իսպառ վերացնել միայն պետականության ինստիտուտի վերացման հետ, դրան բնորոշ իշխանական հիերարխիկ աստիճաններով, իրավասություններով ու լիազորություններով, դրանց պատվիրակման տարբեր եղանակներով:

Կոոուպցիայի վերաբերյալ ամենաախիռ վկայությունները մեզ են հասել մ.թ.ա. 14-րդ դարից՝ Հին Բաբելոնից: Ըստ այդ տեղեկությունների՝ Լահաշի (քաղաք-պետություն) թագավոր Ուրուինինինը բարեփոխումների ենթարկեց իր երկրի պետական կառավարումը, նպատակ ունենալով կանխել պետական այրերի և դատավորների չարաշահումները, ինչպես նաև կանոնակարգել և նվազեցնել կրոնական քրմերի կողմից ծիսակատարությունների համար գանձվող վճարները<sup>1</sup>:

Բազմաթիվ երկներում կոոուպցիան դատվում է պետության և հասարակության նկատմամբ կատարվող ծանրագույն հանցագործությունների շարքին: Ամերիկյան սահմանադրությամբ կաշառակերությունն այն երկու հանցանքներից մեկն է, որը կարող է առաջացնել ԱՄՆ-ի նախագահի հրաժարականի պահանջ: Չինաստանում դրա համար սահմանված է մահապատիժ:

Վերջին տարիներին կոոուպցիայի դեմ պայքարը ամբողջ աշխարհում դիտարկվում է առավել հրատապ ու արդիական խնդիրների շարքում, ելնելով այն հանգամանքից, որ.

- կոոուպցիան էական վնաս է հասցնում արդյունավետ կառավարմանը,
- տնտեսական աճին, սոցիալական կայունությանը,
- իշխանությունների նկատմամբ վստահությանը,
- իսկ դրա որոշակի մակարդակի պարագայում սպառնում է ապակայունացնել հասարակության վիճակը և խարխլել պետականության հիմքերը,
- էական անկայունացնող գործոն է հանդիսանում միջազգային ու միջպետական հարաբերությունների համար: Կոոունպացված պետական վարչակազմերը, որպես կանոն, դուրս են մղվում միջազգային համագործակցության տարբեր կառույցներից և ձևաչափերից:

Ներկայումս միջազգային պրակտիկայում ձևավորված տեսական միտքը կոոուպցիան բնորոշում է որպես *վստահված իշխանության չարաշահում կամ հանրային իշխանության չարաշահում՝ հոգուտ մաս-*

<sup>1</sup> Խորհրդային մեծ հանրագիտարան, Մոսկվա, 1977, հատոր 27, էջ 94

*ճակոր շահի:* Ընդ որում, մասնավոր շահի դրսևորումներ են դիտվում անհատ անձանց, հասարակության առանձին սոցիումների, խավերի, խմբերի, կուսակցությունների և այլ միավորների շահերը: Կոռուպցիայի էությունը չի սահմանափակվում պետական, ներառյալ՝ տեղական ինքնակառավարման մարմինների շինովնիկների կաշառվածությամբ, այն ենթադրում է նաև հանրային ծառայությունների և անգամ առևտրային կազմակերպությունների ծառայողների կողմից իրենց ծառայության դիրքի «օգտագործումը» և «շահագործումը» տվյալ ծառայության շահերին հակառակ: Միևնույն ժամանակ, ավանդաբար, կոռուպցիան դիտվում որակապես առավել վտանգավոր երևույթ պետական և մունիցիպալ իշխանության համակարգում:

Այսպիսով, կոռուպցիան բնորոշ չէ բացառապես պետական կամ հանրային հատվածին: Չայետք է անտեսել, որ այն գոյություն ունի նաև մասնավոր հատվածում, որտեղ կառավարման լիազորությունների պատվիրակման հիերարխիան ունի բազմաթիվ հարթություններ: Մակայն կոռուպցիայի համար առավել բնութագրական են պետական ծառայողների կողմից թույլ տրվող չարաշահումները:

## Կոռուպցիա տերմինի ծագումնաբանությունը

Կոռուպցիա բառի ծագումնաբանությունը հետևյալն է. հուներեն «cor» կամ «com» կամ «c» «միասին», «մեկտեղ», «միջոցով» նախածանցն ավելանալով բազմանշանակ «rumpere» բային, այն է՝ «ջարդել», «քանդել», «մխրճել», ձեռք է բերել նոր իմաստներ՝ «խախտել խաղաղությունը, պայմանագիրը, օրենքը», «վնասել ստանդարտը», «բաց թողնել հնարավորությունները», «գայթակղել կանանց», «բարոյագրկել երիտասարդներին», «խեղաթյուրել իմաստը», «կեղծել արդյունքները»: Դրա իմաստներից մեկն էլ եղել է կաշառել որևէ մեկին դրամով կամ առատաձեռն ընծաներով: «Cor» նախածանցն ի սկզբանե սահմանել է, որ կոռուպցիան երևույթ է, որն ունի գործողության համամասնակից:

Կոռուպցիայի ժամանակակից ըմբռնման համար կարևորվում են հատկապես Նիկոլո Մաքիավելիի աշխատությունները: Մաքիավելին կոռուպցիան համեմատում էր հիվանդության հետ. որը սկզբում դժվար է ախտորոշվում, սակայն հեշտ է բուժվում: Իսկ եթե այն անուշադրության է մատնվել, ապա այն հեշտությամբ կարելի է ախտորոշել, սակայն դժվար է բուժել: Ըստ նրա, եթե նոր առաջացող հիվանդությունը ժամանակին հայտնաբերվի, որին ունակ են իմաստուն իշխանավորները, ապա դրանից կարելի հեշտությամբ ազատվել, իսկ եթե այն խորացել է այնքան, որ տեսանելի է բոլորին, ոչ մի դեղամիջոց այլևս չի օգնի:

## Կոռուպցիայի տեսակները

Չնայած կոռուպցիայի բազմազան ձևերի առկայությանը, դրանք, իրենց դրսևորման առանձնահատկություններից ելնելով, դասակարգվում են հետևյալ հիմնական տեսակների.

ա. կառավարման ներքո գտնվող ունեցվածքի յուրացում, հաիշտակություն և վատնում,

բ. կաշառք,

գ. կլիենտելիզմ՝ հովանավորչություն իր տարատեսակներով՝ նեպոտիզմ, քրոնիզմ, ֆավորիտիզմ, պատրոնաժ և այլն.

դ. շահերի բախման նպաստավոր օգտագործում,

ե. քաղաքական կոռուպցիա:

*Կառավարման ներքո գտնվող գույքի հանցավոր յուրացում կամ վատնում:* Դրա դրսևորումների բազմազան են. պետական ձեռնարկությունների գույքի, ներառյալ՝ ֆինանսական միջոցների անօրինական և հանցավոր ճանապարհներով ձեռքբերումը, եկամուտներ (օգուտներ) քաղելու նպատակով այդ գույքի անվերահսկելի օգտագործումը, պետական գույքի անօրինական և կամ օրինական ձևերի պահպանմամբ՝ ի վնաս պետության մասնավորեցումը, բյուջետային և պետական այլ ֆինանսական միջոցների յուրացումը և այլն:

*Կաշառք:* Կաշառքը մի դեպքում տրվում է, երբ անձը մտադիր է ձեռք բերել մի բան, որի իրավունքը չունի, և օրենքը խախտելու համար կաշառում է պետական պաշտոնյային, և մյուս դեպքում, երբ կարծում է, որ պաշտոնյան բույլ չի տա այն, ինչը օրենքով է ընձեռված, եթե դրա դիմաց նրան որևէ կերպ չշահագրգռի: Պետական ծառայությունների մատուցման դիմաց անօրինական գանձվող վճարը, որպես կանոն, գանձվում է դրամական տեսքով, սակայն կարող է տրամադրվել հնարավոր այլ եղանակներով, այդ թվում՝ տարաբնույթ ծառայությունների տեսքով: Կաշառքը կարող է հանդիսանալ պետական ծառայություններից օգտվողների առաջարկության կամ պետական ծառայողի կողմից իր «հաճախորդներից» շորթման արդյունք: Կաշառքը, իր հերթին, դրա որոշ դրսևորումների ընդհանրացման դեպքում կարելի է դասել ներքոնշյալ խմբերում.

ա) որոշումների ընդունումը պետական պաշտոնյաների հայեցողությունից կախված լինելու դեպքում, կաշառքը տրվում է .

1) օգուտ ստանալու նպատակով,

2) որևէ բանի համար նախատեսված օրինական չափով կատարվող վճարումից խուսափելու համար:

Ընդ որում, անօրինական գործողության արդյունքում կարող է ձեռք բերվել ինչպես փոքր չափերի, այնպես էլ խիստ մեծ չափերի հասնող օ-

գուտներ, կապված վստահված լիազորությունների խախտման աստիճանից, կաշառքի չափերից և այլ գործոններից.

բ) վճարվող կաշառքի դիմաց ակնկալվում է ստանալ այնպիսի ծառայությունների մատուցում, որը կբերի առավել շատ օգուտներ,

գ) կաշառքի նպատակն է որոշակի անձանց շրջանում բաժանվող միջոցները ցանկալի ձևով վերաբաշխելը:

*Շարքումը*, ըստ էության, հանդիսանում է կաշառակերության տալատեսակ, որը երբեմն առանձնացվում է՝ ելնելով նրա վտանգավորության աստիճանից: Այն ենթադրում է պաշտոնական դիրքի օգտագործման միջոցով անօրինական վճարման և կամ այլ աղժեքներ ստանալու, կամ որոշակի վարքագծի դրսևորումով գործողություններ կատարելու պարտադրանք՝ անհրաժեշտ գործողությունների կամ անգործության դիմաց:

*Կլիենտելիզմ՝ հովանավորչություն իր տարատեսակներով՝ նեպոտիզմ, քրոնիզմ, ֆավորիտիզմ, պատրոնաժ և այլն:* Կլիենտելիզմը հովանավորչություն է, որը բնորոշվում է խմբային, ընկերական, կլանային, կուսակցական, ազգակցական և այլ կարգի կապերի ու ծանոթությունների վրա կառուցված շահերի պաշտպանությամբ, օգտագործելով պաշտոնական դիրքի ընձեռած հնարավորությունները:

*Նեպոտիզմը* հովանավորչության տեսակ է, որի հիմքում շահերի բախումն է: Իշխանական լիազորություններով օժտված անձը, օգտագործելով իր պաշտոնական դիրքը, նպաստում է և օգուտների՝ աշխատանքի կամ վաստակելու հնարավորություն է ապահովում բարեկամների, իր ընտանիքի անդամների, մերձավորների համար: Պետք է սակայն նկատել, որ նեպոտիզմի դեմ պայքարը չի կարող իրականացվել պարզունակ ընդհանուր սահմանափակումներով, քանի որ այն առնչվում է մարդու իրավունքների և անհարկի դիսկրիմինացիայի հետ: Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է ուշադիր որակել նեպոտիզմի երևույթը և չգերազանցել այն սահմանը, որը կհանգեցնի մարդու իրավունքների սահմանափակման: Նեպոտիզմը չի որակվում որպես քրեական երևույթ: Նեպոտիզմի դրսևորումը որևէ կառույցում պատճառ է հանդիսանում տարաբնույթ կոնֆլիկտների և, ի վերջո, նվազեցնում է կառավարման արդունավետությունը:

*Քրոնիզմը* ավելի լայն հասկացություն է, քան նեպոտիզմը և ներառում է իրավիճակներ, երբ որոշակի լիազորություններ ունեցող անձի կողմից ուղղումների կայացման դեպքում առաջնությունը տրվում է նաև ընկերներին ու տարբեր հիմքերով ձևավորված ընդհանուր կապերի մեջ ընդգրկված անձանց: Հարկ է նկատել, որ նեպոտիզմի և քրոնիզմի երևույթներից գերծ չէ նաև մասնավոր հատվածը:

*Շահերի բախման նպաստավոր օգտագործում:* Շահերի բախման նպաստավոր օգտագործումն ունի բազմաթիվ դրսևորումներ, մասնավոր-



լուսպես՝ այն դեպքում, երբ պաշտոնյան անձնական շահ ստանալու նպատակով օգտագործում է ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը, պաշտոնապես կամ անուղղակի ձևով ընդգրկվում է իր տեսչական կամ վարչական վերահսկողության տակ գտնվող կառույցների կառավարման մարմիններում և այլն: *Իրավական նորմերի կիրառման կամայականություն.* այն, ըստ էության, իր հերթին հանդիսանում է կոռուպցիայի նշված խմբի (շահերի բախման) ածանցյալ տեսակ, և դրա առանձնացման նպատակն է ընդգծել կոռուպցիայի այդ տեսակի թաքնված վտանգավորությունը: Այն դրսևորվում է, երբ պաշտոնյան, օգտագործելով իր պաշտոնական դիրքը, օրենսդրության այս կամ այն պահանջը կիրառում է ընտրանքային ձևով, անձնական շահ ստանալու մղումով, հետևողական կիրառում է օրենքի տառը, երբ դա բխում է իր շահերից, և անտեսում դա, երբ չունի որոշակի շահեր:

*Քաղաքական կոռուպցիան:* Լոբբինգի անթույլատրելի մեխանիզմների կիրառմամբ նպաստավոր որոշումների կայացում, ընտրությունների և ընտրարշավների մասին օրենսդրության խախտումներ, ներառյալ՝ ընտրարշավների անօրինական ֆինանսավորում (անօրինական նվիրատվություններ ու ներդրումներ), պառլամենտական վեճերի անօրինական ճանապարհներով կարգավորում:

Տեսության մեջ և սյրակտիկայում կարելի է հանդիպել կոռուպցիայի այլ դասակարգումների, որոնցով կոռուպցիայի առանձին դրսևորումները ներկայացվում են որպես դրա տեսակներ: Մակայն դրանք որոշակի շահորոշիչներով բնորոշելու պարագայում դասվում են վերը նշված տեսակների մեջ:

Հարկ է նկատել, որ կոռուպցիան կարող է դրսևորվել խոշորամասշտաբ՝ «գրանդ», և մանր կամ փոքր չափերով և արտահայտվել վերը նշված բոլոր տիպերով: Մակայն պետք է նկատել, որ խոշոր կոռուպցիայի դրսևորումները առավելապես կապված են իշխանական բարձրաստիճան լիազորությունների չարաշահումների հետ: Այս մոտեցումն ամրագրված է մասնավորապես «Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների» ծրագրում, որտեղ սահմանված են կոռուպցիայի երկու՝ «վերևների» և «ներքևների» մակարդակները:

Կոռուպցիան հաճախ հանդես է գալիս և, հետևաբար, բնութագրվում է սինթետիկ ձևերով, որը ենթադրում է դրա մի քանի տեսակների համատեղված դրսևորում, մասնավորապես՝ «վարչական կոռուպցիա» հասկացությունը ենթադրում է իշխանական լիազորություններով օժտված անձի կամ պետական պաշտոնյայի կողմից կաշառքի, շորթման, պետական գույքի յուրացումների, իրավական նորմերի կիրառման կամայականության, շահերի բախման գործունի նպաստավոր օգտագործման և կոռուպցիայի այլ տեսակների համատեղված և կամ միաժա-

մանակյա դրսևորումներ: Կոռուպցիայի մեկ այլ սինթետիկ տարատեսակ է «պետության գավթումը» կամ, ավելի ճիշտ, «իշխանական լիազորությունների գավթումը», ուր կարող է հանդես գալ քաղաքական կոռուպցիայի, կլիենտելիզմի, շահերի բախման նպաստավոր օգտագործման և կոռուպցիայի այլ տեսակներով:

## Կոռուպցիայի երևութաբանական էությունը

Կոռուպցիայի երևութաբանական էությունը (ֆենոմենը) հասկանալու համար հարկ է անդրադառնալ կոռուպցիայի տնտեսական, իրավական (հանցավորության) և բարոյականության խնդիրներին: Կոռուպցիան բազմակողմանի երևույթ է: Այն իր մեջ ներառում է իրավական նորմերի՝ քաղաքացիա-իրավական, վարչական, քրեական, ինչպես նաև էթիկական նորմերի խախտումներ: Երբ առողջասլախության կամ կրթության ոլորտի հանրային աշխատույն արդարացնում է իր կողմից անօրինական զանձվող վճարները նյութական ծանր վիճակով, համեմատելով իր արարքը մեծ լիազորություններ և իշխանություն ունեցող շինովնիկների այն յուրացումների հետ, որոնց մասին ինքը չի կարող անզամ երազել, խնդիրը դրվում է տնտեսական և բարոյականության հարթության վրա:

Մյուս կողմից, եթե այդ նույն հանրային աշխատողը վարձատրվեր այնքան, ուր հատուցեր նրա կատարած աշխատանքը և ապահովեր նրա կենսական կարիքները, նա իր անօրինական գործողություններն արդարացնելու համար հազիվ թե դիմեր համեմատման փաստարկին: Կոռուպցիան և նրա դրդապատճառներն ախտորոշելու նպատակով առաջին հերթին այն դիտարկվում է շահերի տեսանկյունից: Կոռուպցիոն հանցավորությունը բխում է շահերից և, ի վերջո, հանգում է նյութական շահերին, չնայած դրա գեներացմանն ու տարածմանը նպաստող գործոնները բազմազան են, մասնավորապես, իշխանական առավել բարձր օրակներում կոռուպցիոն ռիսկերի և գործողությունների պատժելիությունը կարող է ունենալ առավել նվազ աստիճան, սակայն դա բուն պատճառ չէ, այլ նպաստող գործոն:

Հաճախ և մեծամասամբ խոշոր կոռուպցիայի երևույթները հնարավոր չէ գործող օրենսդրության շրջանակներում որսկել որպես հանցավոր արարք, քանի որ պետական միջոցների յուրացումը կատարվում է օրենքների ընձեռած նույր սույանցքների կիրառմամբ: Հարց է առաջանում, ինչպե՞ս որակել այդ երևույթը՝ բարոյականության խախտո՞ւմ, թե՞ հանցավորություն: Այդ առումով պետք է նկատել, որ կոռուպցիան քաղաքական, սոցիալական, տնտեսական, բարոյական և իրավական երևույթ է: Կոռուպցիոն գործողությունների պատժելիության խնդիրը հնարավոր է միայն իրավական տեսանկյունից: Օգուտներ ձեռք բերելու

նպատակով (շահադիտական բնույթի) սյուեզրված և իրականացվող լուսարժեքային արտադրության սկզբունքների խախտումները, որոնք նորմատիվային արտացոլում չունեն օրենսդրության մեջ, նույնպես որակվում են որպես կառույցիոն հանցավորություն, որի իրավական հիմնավորումը և դրանից բխող պատժի սահմանումը հնարավոր չէ, սակայն հետևողական հանցակառույցիոն պայքարի դեպքում դրանց տրվում է հանրային համարժեք գնահատական, այդ թվում՝ քաղաքական դատապարտում՝ դրանից բխող համարժեք հետևանքներով:

## Կոռուպցիայի վրա ազդող հիմնական գործոնները

Կոռուպցիան ազգային և վերազգային երևույթ է: Ազգային ատանձահատկությունը կապված է տվյալ ազգի աշխարհընկալման արժեքներից ու համակարգից, որն իր արտացոլումն է ստանում մասնավորապես երկրի օրենսդրության մեջ, տնտեսական, ազգային ոլորտների իրավահարաբերություններում ու ավանդույթներում: Հետևապես, կոռուպցիան տարբեր երկրներում ունի տարբեր դրսևորումներ և դիմագծեր, այն կապված է նաև տարբեր քաղաքակրթությունների պատմական և հոգևոր-մշակութային առանձնահատկությունների հետ: Մյուսույն ժամանակ, իշխանական լիազորությունների կամ պաշտոնական դիրքի չարաշահումներն իրենց ընդհանրական գծերի հիման վրա խմբավորվում են մի քանի տեսակների մեջ, սակայն դրանք իրենց կոնկրետ դրսևորումներում խիստ բազմազան են:

Կոռուպցիայի վրա ազդում են նաև բազմաթիվ գործոններ, որոնք ևս ընդհանրացվում են երեք հիմնական գործոններում, դրանք են.

- հանրային բարիքներից օգտվելու բոլորի համար ընդհանուր մակարդակի մատչելիության տարբեր աստիճանը,
- կոռուպցիոն գործարքների բնույթը և շխալը,
- իշխանական լիազորությունը չարաշահող կողմերի՝ կաշառք առաջարկողի և կաշառք վերցնողի միջև սակարկելու հնարավորությունը:

Կոռուպցիոն գործարքների մեջ գիտակցաբար մտնում են ինչպես կաշառք սվողները, այնպես էլ կաշառք վերցնողները: Անօրինական օգուտները (շահույթները) և դրանց ընձեռած հնարավորությունները համարվում են բացահայտված լինելու ռիսկի և հնարավոր պատժի խստության հետ: Կոռուպցիան ի հայտ է գալիս պատեհ առիթի ու կոռուպցիոն սնունդների գուգակցումից և կարող է հանդես գալ որպես գործարքի ցանկացած կողմի մախաձեռնության արդյունք. այաշտոնատար անձին կարող է կաշառք առաջարկվել, կամ վերջինս ինքը կարող է անօրինական վճար պահանջել և կամ շորթել այն:

## Կոռուպցիոն երևույթների պատմական ժառանգությունը

Հայաստանի պատմական տարածքում 11-րդ դարից հետո պետականությունից զրկված Հայաստանը, բնականաբար, չէր կարող ձևավորել արդյունավետ կառավարման ավանդույթներ: Պարսկական, թուրքական և այնուհետև ռուսական կայսրությունների կազմում գտնվող Հայաստանում առավել պետք է արմատավորվեին տիրակալին հաճոյանալու վարքագծի կանոնները, այդ թվում՝ կաշառքի բազմազան ձևերով, քանզի այդ պայմաններում, այն, լատ էության, սեփական շահերը պաշտպանելու դյուրին և արդարացված ձև էր: Խորհրդային Հայաստանում կազմավորված պետականությունը, դրան բնորոշ կառավարման ինստիտուտների ձևավորումը, իր բոլոր թերություններով հանդերձ, Հայաստանի համար պատմական առաջընթաց էր պետականության և կառավարման համակարգերի ձևավորման առումով: Միևնույն ժամանակ, այդ համակարգի ժողովրդավարության գաղափարախոսությունը մատուցում էր իրական ժողովրդավարության հետ անհամատեղելի տոտալիտարիզմի և ավտոկրատիայի համադրությամբ: Համընդհանուր ժողովրդական սեփականությունն իրականում հանդիսանում էր յուրացումների և վատնումների համընդհանուր աղբյուր: Պահանջարկի մշտական անբավարարվածության հետևանքով առկա դեֆիցիտը ձևավորում էր սև շուկա և այդ համակարգին յուրահատուկ սովեթային տնտեսություն, որը, բավականաչափ ազդեցիկ մասշտաբային դրսևորումներով, որպես կանոն, գոյծում էր հենց պետական ձեռնարկությունների ներսում: Վերը նշված գործոնները, խորհրդային ժամանակաշրջանի պետական կառավարման, տնտեսական և այլ ոլորտներում կոռուպցիայի մասին բարձրաձայն խոսելի խստագույն արգելանքի (տուրուի) տակ էր դրված: Կաշառակերության առկայությունն այդ տարուից դուրս էր: Սակայն կոռուպցիան, որպես համակարգին բնորոշ մասշտաբային երևույթ, չէր կարող ընդունվել, քանի որ դա սայառնում էր համայնավարական գաղափարախոսությանն ու նրա համակարգի հիմքերին:

Խորհրդային մտածելակերպի իներցիան խոր ազդեցություն է թողել հետխորհրդային իրականության մեջ՝ մարդկանց վարքագծի վրա: Հատկապես՝ վնասաբեր այն մտածելակերպը, որ պետական միջոցները հանդիսանում են լրացուցիչ շահույթներ ստանալու՝ բարոյական առումով այսպարացված աղբյուր, քանի որ յուրացվում են «ոչ մեկին չսպառնականող միջոցները»: Սակայն պետք է նշել, որ դա չի հանդիսանում կոռուպցիայի դեմ պայքարի անհուղթահարելի պատճեն, քանի որ կոռուպցիայի ցանկացած դրսևորում հանգում է շահերի արտահայտությանը: Այդ առումով հարկ է արձանագրել, որ պատմական անցյալը, հոգևոր-մշակութային ժառանգությունն իրենց բացասական կամ դրական ներգործությունն ունեն կոռուպցիայի դրսևորումների և դրանց տարածման

վրս, սակայն պատմական հիշողությունը և ներկայիս իրական շահերը կշեռքի նույն նժարին չի կարելի դնել: Պատմական անցյալի ու բալույակուն գործոնների քացարձականացումը չեն նպաստում այդ երևույթի ղյւն արդյունավետ պայքարին, այնքանով, որքանով ճիշտ չեն հատակցվում և նպատակաուղղվում այդ պայքարի գերակայությունները:

Կոռուպցիայի բնական առաջացման փաստարկներից մեկն էլ հանդիսանում է այն, որ այդ երևույթը հանդիսանում է զարգացող շատ երկրների մշակույթի անբաժանելի մասը: Այն փաստը, որ այս կամ այն երկրի բնակչությունը հանգիստ է ընդունում տարբեր ծառայությունների համար չինովնիկներին տրվող փոքր ծավալների նվիրատվությունները, ամենևին չի նշանակում, որ հասարակությունը դա ընկալում է որպես ցանկալի արդյունքի հասնելու առավել իրատեսական և ցանկալի միջոց: Հաճախ կոռուպցիան հանդիսանում է իշխող այլ երկրների կողմից պարտադրված սովորույթ: Դրա վառ օրինակներից է գաղութային համակարգը, որտեղ տեղական իշխանությունները հաշվետու էին միայն մետրոպոլիայի առջև, իսկ տեղական ադմինիստրացիայի գործողությունները ենթակա չէին քննադատության երկրի ներսում: Դատական համակարգը գոյություն ուներ, սակայն այն ևս ուղղված էր գաղութային իշխանության տիրակալության ապահովմանը: Այս ռեպրեսիվ կառավարման հանսկարգը իր բոլոր ավանդույթներով այնուհետև անցել է ազատագրված երկրների ազգային կառավարման վարչակազմերին: Տարբեր մշակուրային ավանդույթներում արտաքուստ նմանատիպ երևույթները կարող են ունենալ տարբեր մոտեցումներ: Փոխադարձ հարգանքի դրսևորումը և երախտագիտությունն էապես տարբերվում են կաշառքի ձևաչափով վարձահատույց լինելուց: Որևէ երկրում կոռուպցիոն ձևաչափում արմատավորված ավանդույթները չի կարելի բացատրել ազգային մշակույթի ստանձնահատկությամբ, քանի որ փորձը ցույց է տալիս, որ զարգացող երկրներում արդյունավետ բարեփոխումների պարագայում կոռուպցիոն ձևաչափի գործողությունները հնարավոր է լինում մեծ արդյունավետությամբ արմատախիլ անել, և պատմական հիշողության մեջ մնացած պսևդոնշակութային կոռուպցիոն վարքագծի նորմերը չեն ձգտում պահպանվել և վերարտադրվել:

### Կոռուպցիան որպես կուլտուրայի բաղադրիչ

Հասարակության մեջ կոռուպցիոն կուլտուրան մեծապես պայմանավորված է ոչ պաշտոնական կապերի համակարգից օգուտներ ձեռք բերելու նշանակալի դերով: Խորհրդային ժամանակաշրջանում դրա արդյունքում ի հայտ եկան երկու առանձնահատուկ սոցիումներ. խորհրդային բյուրսկրատիան կամ «նոմենկլատուրան» և հասարակության

մեջ իր որոշակի ազդեցիկ դերն ունեցող «կլեպտոկրատիայի» («օրենքով գողերի») համակարգը: Նամենկլատուրան, ըստ էության, համոլիսանում էր խորհրդային օլիգարխիան, որն իր հսկողության տակ էր պահում իշխող կուսակցության ներսում, այդ թվում՝ քաղաքական դաշտում կլանների, խմբերի, խմբավորումների, ուժերի դասավորությունը, ինչպես նաև՝ նյութական ռեսուրսների և հասարակական բարիքներից օգտվելու բաշխման համակարգը, այդ թվում՝ հանրային ոլորտից ստվերային ոլորտ գնացող միջոցների հոսքերի հսկողությունը:

Ոչ պաշտոնական կապերի օգտագործման «բարի ավանդույթը» Հայաստանում հետխորհրդային շրջանում որդեգրվել և լավ պահպանվել է: Ընդ որում՝ Հայաստանում ոչ պաշտոնական կապերի շահադիտական օգտագործումը՝ նպատակներին հասնելու, «գործը առաջ տանելու» առումով, իմնականում հիմնված է «քրոնիզմի»՝ լնկերական կապերի, ֆավորիտիզմի, և մասնակիորեն՝ «նեպոտիզմի»՝ բարեկամական, արյունակցական կապերի վրա: Հատկանշական է նաև այն, որ հաճախ քաղաքական կուսակցություններում մասնակցության մոտիվացիան մարդկյն դիտարկում են հենց այդ տեսանկյունից՝ որպես նպաստավոր կապեր և դրանցից համարժեք օգուտներ ձեռք բերելու հարմար միջոց: Այլ կերպ դժվար է բացատրել նաև այն «քաղաքական գործիչների» վարքագիծը, որոնք շարունակ փոխում են իրենց կուսակցական սյատկանելությունը, սակայն ցանկացած պահի հաջողությամբ հայտնվում են տվյալ պահին իշխանական լծակներ ունեցող կուսակցությունում կամ քաղաքական հոսանքում (պառլամենտական մեծամասնություն և այլ ազդեցիկ դիրքեր ունեցող):

Հասարակական գիտակցության մեջ դեռ բավականաչափ անուր է այն համոզումները, որ անձը պետք է օգնի իր ազգականներին, մտերիմներին, ընկերներին՝ օգտագործելով իր դիրքի ու պաշտոնի ընձեռած հնարավորությունները: Երբ անձն իրեն այդպես չի դրսևորում, նրա հանդեպ առաջանում է կամ զայրույթ, կամ՝ կարեկցանք, և դա հիմնավորվում է նրանով, որ պաշտոնական լծակները կորցնելուց (թուլնելուց) հետո այդ անձը կորցնում է հաջողությունն ու դիրքը հասարակության մեջ: Ուստի, եթե պաշտոնավարման լնթացքում նա «օգտակար չի եղել» իր հարազատներին ու մտերիմներին, դրանից հետո նա չի կարող անգամ վայելել նրանց հարգանքը: Հովանավորչության այսօրինակ սովորությունների հետևանքով հասարակության մեջ համարժեք գիտակցում չի ստացել շահերի բախման երևույթից օգուտներ քաղելու կոռուպցիոն ռիսկի հետևանքների վտանգավորությունը:

## Կոռուպցիայի հասարակական ընկալումները և պատկերացումները

Մարդիկ նվազագույն և անհրաժեշտ կենսամակաբաշակի ապահովման իրենց դժվարություններն ու բարդությունները գնահատելիս, գիտակցաբար կամ ենթագիտակցորեն, դրանք կապում են շրջապատում տիրող անարդարությունների և կոռուպցիայի հետ: Դա տեղի է ունենում բոլոր մակարդակների քննարկումների՝ ընտանեկան, ընկերական, հասարակական այլ շփումների ընթացքում:

Կոռուպցիայի հիմնախնդրի հասարակական հնչելության ապահովման առումով իր ծանրակշիռ դերն ունի ազատ լրատվությունը, որն, ընդհանուր առմամբ, այդ խնդիրը դիտում է առավել մտահոգիչ և սուր լուսաբանվող խնդիրների շարքում: Միևնույն ժամանակ, հաճախ լրատվամիջոցները կոռուպցիոն գործողությունների հնչեցումը կիրառում են նաև որպես այս կամ այն անձանց դեմ ուղղված պայքարի, ինչպես նաև վարկաբեկման փորձված գործիք:

Բոլոր դեպքերում, կոռուպցիայի՝ հասարակության մեջ ձևավորված դիտարկումներն ու ընկալումները, որպես կանոն, որակվում են որպես արտաոց երևույթ, որը սակայն վերաբերվում է հիմնականում իշխուսնության բարձրաստիճան օղակներում գտնվող անձանց և իշխանական լծակներ ունեցող բոլոր կարգի շինովնիկներին: Երևույթի այսօրինակ ընկալումը տարբերվում է զարգացած ժողովրդավարական երկրներում նույնի հասարակական ընկալումից: Տարբերությունը հանգում է նրան, որ մեր գիտակցության մեջ կոռուպցիան խթանող սմենոյա որոշակի գործողությունները, մասնավորապես, առողջապահական, կրթական և այլ հանրային հաստատությունների աշխատակիցներին անհարկի վճարումները կոռուպացիա չեն համարվում և անգամ արդարացվում են՝ կապված այդ կատեգորիայի աշխատողների ցածր վարձատրության հետ: Այդ մասին են վկայում մասնավորապես «Հայ ժողովրդական ֆորում» հասարակական կազմակերպության կողմից տնային տնտեսությունները սպասարկող հանրային ծառայությունների վերաբերյալ հասարակական կարծիքի սոցիոլոգիական հետազոտության արդյունքները: Ըստ դրանց՝ պոլիկլինիկա, հիվանդանոց և շտապ օգնություն դիմում հարցվածների համապատասխանաբար՝ 43.2, 47.0, 44.4 տոկոսը գտնում են, որ տրված ոչ պաշտոնական վճարները չի կարելի կաշառք համարել<sup>2</sup>:

---

<sup>2</sup> «Հայ ժողովրդական ֆորում» հասարակական կազմակերպության Տնային տնտեսությունները սպասարկող հանրային ծառայությունների վերաբերյալ հասարակական կարծիքի սոցիոլոգիական հետազոտության հաշվետվություն, էջ 20

Կոռուպցիայի այսօրինակ ընկալումը, ըստ որի իշխանության բարձրաստիճան օղակների անձանց գործողություններն աներկբա զնահատվում են կոռումպացված, իսկ սովորական հանրային ծառայողներինն ու քաղաքացիներինը՝ ոչ, տրամաբանորեն կոսպված է «վերևների» կամ խոշոր, և «ներքևների» կամ մանր կոռուպցիայի առաջացրած հետևանքների հետ: Մյուսնայն ժամանակ, այդպիսի ընկալումը շեշտադրում է այդ գործարքի մասնակից միայն մի կողմի ակնհայտ հանցավորությունը: Այս առումով նպատակահարմար է ևս մեկ անգամ շեշտել, որ կոռուպցիա բառի «cor» նախածանցն ի սկզբանե տախմանել է, որ կոռուպցիան երևույթ է, որն ունի գործողության համամասնակից: Այս առումով նաև՝ մանր կոռուպցիայի որոշ դրսևորումներ կոռուպցիայի հասարակական ընկալման տախմաններից դուրս տեսնելու գոյություն ունեցող միտումը բացասական է, քանի որ երևույթի փոքր ծավալները չեն կարող փոխել դրա էությունը: Մյուսժամանակ, դա ուղղակի նպաստում է նրան, որ կոռուպցիան առաջարկություն իրականացնող անձանց պատասխանատվություն չի հասցեագրվում: Սա հատկապես էական է աղքատության հաղթահարման առումով, քանզի «փոքր» կոռուպցիայի դրսևորումներն անմիջապես և շոշափելի ձևով են ազդում աղքատների վրա, իսկ երբեմն դրանք անհաղթահարելի պատնեշ են նրանց համար՝ որևէ կենսական ծառայություն ստանալու խնդրում:

Արդյունքում նշված միտումն ազդում է իշխանության և հասարակության հակակոռուպցիոն պայքարի արդյունավետ քաղաքականության իրականացման վրա: Կոռուպցիայի դեմ հանդուրժողականությունն այս պարագայում թույլ է տալիս ակամա զիջումներ և երևույթը կոծկելու հնարավորություն է ընձեռում:

## Կոռուպցիայի հետևանքները

Արդեն նշվել է կոռուպցիայի հիմնական վնասակարության ու հետևանքների մասին, մասնավորապես այն մասին, որ կոռուպցիան էական վնաս է հասցնում արդյունավետ կառավարմանը, տնտեսական աճին, սոցիալական կայունությանը, աղքատության հաղթահարմանը, իշխանությունների նկատմամբ վստահության նվազեցմանը, իսկ դրա որոշակի մակարդակի պարագայում սպառնում է ապակայունացնել հասարակության վիճակը և այլն: Ստորև ներկայացված են այդ պնդումների մասնրամասն պարզաբանումները:

- ❖ Կոռուպցիան հնարավորություն չի ընձեռում պետությանը հասնել իր առջև դրված խնդիրների կենսագործմանը: Եվրոհանձնաժողովի զարգացման ծրագրի նախկին գլխավոր տնօրեն Դիտեր Ֆրիշը նշում է, որ կոռուպցիան բարձրացնում է սպառնալից



ների և ծառայությունների արժեքը, ավելացնում է պետական պարտքի գումարը, հանգեցնում է ընդունված չափորոշիչների ուրակի նվազեցմանը՝ ի հաշիվ երկրորդական ապրանքների ու անորակ տեխնոլոգիաների օգտագործման: Երբ պետությունը կոռուպցիայի հետևանքով կնքել է անորակ, տնտեսապես անհետանկարային նախագծի պատվեր, ապա պետությունն ավելացնում է իր ծախսերը ոչ թե 10-20%, որոնք ծախսվել են կաշառքի նպատակով, այլ ըստ էության նախագծի 100%-ի չափով, քանի որ այն, ըստ էության, տնտեսապես արդարացված չէ:

- ❖ Կոռուպցիան կարող է փոխել քաղաքական ազդեցության օրինական ձևերը:
- ❖ Կոռուպցիան խաթարում է ներդրումային միջավայրը, որը մղում է մասնավոր բիզնեսին ստանալու գերշահույթներ՝ անկանխատեսելի իրավիճակներում:
- ❖ Կոռուպցիան ի վերջո թանկացնում է կառավարման ապարատը, հարկատուները վճարում են այդ նույն ծառայությունների համար մի քանի անգամ քանի:
- ❖ Կոռուպցիան բարոյագրկող ներգործություն է ունենում պետական ապարատի աշխատողների ազնիվ աշխատելու մղումների վրա, յուրաքանչյուրը հարց է տալիս իրեն, իսկ ինչու՞ ինքը պիտի լինի միակ ազնիվ աշխատողը:
- ❖ Թաքնված միջնորդավճարները կրճատում են այն միջոցների մուտքերը, որոնք այնուհետև պետական խողովակներով ուղղվում են հանրային կարիքների բավարարմանը:
- ❖ «Վերևների» իշխանության վերին օղակների կոռուպցիան, դառնալով հրապարակային, նվազեցնում է նրանց նկատմամբ վստահությունը և կասկածի տակ է դնում նրանց լեգիտիմությունը:
- ❖ Կոռումպացված կառավարման ապարատը խզերանդներն պատրաստ չէ պետական և հանրային շահերը վեր դասել իր անձնական շահերից:
- ❖ Կոռուպցիան իմաստագրկում է արդարադատությունը, սահմանափակում իրավական նորմերի գործունեության ոլորտը: Բնական արդյունք՝ կոնֆլիկտային իրավիճակում ճիշտ է նա, ով ունի շատ փող և բարոյախոզերանական նվազ արգելքներ:
- ❖ Կոռուպցիան հանգեցնում է նրան, որ սոցիալական զարգացման իրական գերակայությունները փոխարինվում են կեղծ արժեքներով:
- ❖ Բուհ-ում կաշառքով ընդունված քանակակազմը հասարակությանը գրկում է զգալի ինտելեկտուալ պոտենցիալից, քանի որ

տաղանդավոր երիտասարդները հաճախ նյութապես ի վիճակի չեն վճարել ուսուցման համար:

- ❖ Կոռուպցիան հանգեցնում է երկրում նոր ստեղծված համախառն արդյունքի ոչ արդյունավետ վերաբաշխման, բյուջետային միջոցների չիմնավորված ծախսումների: Արդյունքում տուժում են և հարկատուները, և սոցիալական ոլորտի բյուջետային շահառուները:
- ❖ Կոռուպցիան վտանգ է առաջացնում ժողովրդավարության համար, քանի որ բնակչությունը լավագույն դեպքում չի մասնակցում ընտրական գործընթացներին:
- ❖ Քաղաքական էլիտայի կոռումպացված լինելու մեջ հանդգլած ժողովրդին դժվար է ներառաչել հակակոռուպցիոն սրայքարի մեջ:
- ❖ Կոռուպցիան հիմք է հանդիսանում քրեաժին գործողությունների և կառույցների ձևավորման համար:

Անհրաժեշտ է նշել նաև, որ գոյություն ունի տեսական մոտեցում, ըստ որի հիմնավորվում է նաև կոռուպցիայի դրական ազդեցությունը: Մասնավորապես, այս մոտեցման կողմնակիցների հիմնավորող փաստարկներից է այն, որ կոռուպցիան հնարավորություն է ընձեռում շրջանցել պետական կարգավորման հետևանքով ներմուծված անհարկի տահմանափակումները, և դրանով իսկ կոռուպցիան նպաստում է ռեսուրսների արդյունավետ բաշխմանը և օգտագործման արդյունավետությանը: Այսպիսով, հանգում են այն եզրակացության, որ կոռուպցիոն մեխանիզմները կարող են օգտակար լինել հասարակության մեծամասնության համար, որով էլ պայմանավորված է կոռուպցիայի համատարած կայունությունը: Հետևապես, կոռուպցիան ունի նաև «օպտիմալ մակարդակ», որը խթանում և ոչ թե խաթարում է առաջընթացը:

## Պետական և մասնավոր հատվածների տարանջատման պահանջը

Կոռուպցիայի ընդարձակման պատճառներից մեկը քաղաքական և տնտեսական իշխանությունները չտարանջատելն է: Պետական և մասնավոր սեկտորների սերտաճման այս երևույթը բնորոշ է անցումային փուլում գտնվող գրեթե բոլոր երկրներին: Պետությունը, պետական բոլոր գործիչները և հաստատությունները պետք է իրագործեն պետական կառավարման գործառույթը՝ ի նպաստ հանրության բարեկացության, մինչդեռ մասնավոր հատվածի գործունեության շեշտադրումը անձնական ու կորպորատիվ շահի՝ շահույթ ստանալու գաղափարն է: Հաճախ է նշվում այն փաստը, որ պաշտոնատար անձինք կոռուպցիոն գործարքների մեջ

են մտնում ցածր աշխատավարձերի պատճառով, սակայն պետության իշխանական լիազորությունների և բիզնեսի սերտաճման պայագայում խնդիրը կայանում է պետական պաշտոնական դիրքը որպես շահավետ բիզնեսի բաղադրիչ կամ շարժիչ օգտագործելը: Դա իր հերթին նպաստում է մենաշնորհների ձևավորմանն ու արմատավորմանը, որը տնտեսական զարգացման իրական և ծանր խոչընդոտներից է:

## Կոռուպցիայի գնահատման եղանակները

Որևէ երևույթի դեմ պայքարը պահանջում է այդ երևույթի դրսևոյումների ի հայտ գալու ռիսկերի և իրական ծավալների գնահատում: Այս առումով, կոռուպցիայի դեմ պայքարը նշանակում է նաև կոռուպցիոն ռիսկերի ի հայտ գալու, ինչպես նաև իրական ծավալների համարժեք գնահատում: Այն իր հերթին պահանջում է գնահատման մեթոդաբանության և ապարատի ձևավորում, դրանց հիման վրա այդ ռիսկերի նվազեցման ու չեզոքացման միջոցառումների մշակում և դրանց իրագործման մոնիտորինգի իրականացում: Խիստ կարևոր է նաև անկախ գնահատողների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքների նկատմամբ համարժեք վերաբերմունքը:

Հայաստանում կոռուպցիայի աստիճանի և տարածվածության գնահատումների վերաբերյալ հետազոտություններն ու ուսումնասիրությունները կատարվել են միջազգային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների կողմից: Դրանց թվում են Համաշխարհային Բանկի, Միջազգային Արժուքային Հիմնադրամի, Եվրոպական Զարգացման և Վերակառուցման Բանկի. «Թրանսփերենսի ինտերնեշնլ» կազմակերպության գնահատումները: Հայաստանում կոռուպցիայի ուսումնասիրությունները հիմնականում կատարվել են հասարակական կազմակերպությունների կողմից:

Կոռուպցիայի ճշգրիտ գնահատման բաղադրություններից է այն, որ վերջինս դասվում է հանցագործության այն տեսակներին, որտեղ երկու կողմ է ներգրավված՝ կաշառք տվող և կաշառք վերցնող, որոնց շահերը համընկնում են, հետևաբար, այն իր բնույթով, այսպես կոչված, «առանց զոհի» հանցագործություն է: Որպես կանոն, նման գործողությունը տեղի է ունենում «ստվերում» և այնպիսի վարքագծի արդյունքում, ուր շատ դժվար է որակել կոռումպացված, ուստի խիստ սահմանափակ են հանցագործությունն ապացուցելու և հետապնդելու հնարավորությունները:

Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում կոռուպցիայի գնահատման մեթոդաբանական հիմք են հանդիսանում հարցումային հետազոտությունները, որի արդյունքներն ամփոփվում են կոռուպցիայի

ընկալումների ինդեքսներում՝ CPI (Corruption Perception Index): Վերը նշված հարցումները, որպես կանոն, իրականացվում են երկու տարբեր խմբերում՝ գործարար միջավայրի անձանց շրջանում, կամ մեկ այլ մոտեցմամբ՝ այդ ոլորտի փորձագետների շրջանում և քաղաքացիների կամ տնային տնտեսությունների շրջանում: Այս առումով կոռուպցիայի մեթոդաբանական հիմքը նույնն է, սակայն հաճախ տարբեր են գնահատման գործիքը կազմող հարցումների ցանկաչափն ու դրանց բովանդակային մասը, և այնուհետև, ինտեգրացվող ամփոփիչ ցուցանիշների համակարգը: CPI ինդեքսը հաշվարկելիս հաշվի են առնվում նախորդ երեք տարիների գնահատականները, որը հնարավորություն է տալիս նվազեցնել ոչ օրինաչափ, անապասելի շեղումների ազդեցությունը: Մասնավորապես՝ նման ծայրահեղ շեղումների պատճառ կարող են հանդիսանալ բարձր մակարդակի քաղաքական միջադեպերը, որոնք հանդիսանում են հասարակության կոռուպցիոն ընկալումների լուրջ գործոն, սակայն չեն արտացոլում կոռուպցիայի մակարդակի իրական պատկերը: Կոռուպցիայի ցուցանիշներն ազդեցատավորելիս անհրաժեշտություն է առաջանում հաշվի առնել տարբեր տվյալների էական ազդեցությունը գնահատման վրա, այդ նպատակով դրանց տրվում են տարբեր կշռային արժեքներ: «Թրանսփերենսի ինտերնեշնլ»-ը առաջարկել է մեծ կշռային արժեքներ վերագրել նոր տվյալներին, և փոքր՝ հին տվյալներին, օրինակ՝ 2005, 2004, 2003 թվականների համար համապատասխանաբար կիրառել 3,2,1 կշռային արժեքները:

Գոյություն ունի նաև կաշառք վճարողների հակվածության ինդեքսը BPI (Bribe Payers Propensity Index), մասնավորապես՝ այդ եղանակով են կառուցվում «Transparency International»-ի կոռուպցիայի գնահատման ինդեքսները:

Կոռուպցիայի գնահատման համակարգը կառուցվում է կառավարման ցուցանիշների համակարգի ամփոփման վրա, որի ընթացքում կիրառվում են բազմակողմանի ուսումնասիրություններ՝ հիմնվելով հարցումների, փորձագիտական եզրահանգումների, պաշտոնական, լրատվամիջոցների և այլ տեղեկատվական աղբյուրների վրա: Այս դեպքում ևս ցուցանիշների (ինդեքսների) որոշակի խմբավորման միջոցով դուրս են բերվում երևույթը որակական բնութագրող ազդեցատային ցուցանիշներ: Նմանօրինակ եղանակով են կառուցված Համաշխարհային Բանկի կոռուպցիայի գնահատման ինտեգրալ կամ ազդեցատային ցուցանիշները:

Մի կողմից՝ միասնական հարցման գործիքները հնարավոր են դարձնում միասնականացնել (ունիֆիկացնել) գնահատման ապարատը և համադրելի դարձնել տարբեր երկրների ուսումնասիրության ու գնահատման արդյունքները, մյուս կողմից՝ կապված կոռուպցիայի երևույթի բազմակողմանի դրսևորումների և այն առաջացնող խիստ տարբեր

միջավայրերի հետ, նման ստանդարտ գործիքների ճշգրիտ կիրառումը պահանջում է, որպեսզի այդ գործիքները կառուցելիս հաշվի առնվեն երկրների, մասնավորապես՝ անցումային փուլում գտնվող երկրների առանձնահատկությունները: Դա պայմանավորված է նրանով, որ կոռուպցիայի գնահատման մեթոդիկայի ճշտությունը կախված է երկրի տնտեսական, սոցիալական, կառավարման, օրենսդրական համակարգերի մոդելներից, դրանց կառուցվածքից, տնտեսական զարգացման աստիճանից, պատմական ավանդույթներից, մշակութային սովորույթներից և այլ գործոններից:

Հետևաբար, յուրաքանչյուր պետություն պետք է ընդունի կառավարման համակարգի ազնվության կամ կոռումպացվածության այնպիսի ցուցանիշների համակարգ, որի շնորհիվ հնարավոր լինի պարզել, թե որտեղ են կոռուպցիոն ռիսկերը կառավարման համակարգում: Կոռուպցիան ամենայն խորությամբ ուսումնասիրելու ինդյուս մեթոդորգիական յուժման առումով մասնագետների կողմից վերջին շրջանում կարևորվում է *պետական ազնիվ կառավարման համակարգի գաղափարը* (National Integrity System), որը ենթադրում է կոռուպցիոն ռիսկերի բացահայտում տվյալ երկրի համար պետական կառավարման համակարգի տարբեր բնութագրական բաղադրիչներում:

Տնտեսական համակարգում կոռուպցիան բնութագրելու նպատակով կիրառում են նաև *հասարակության կոռուպցիոն եկամտի հասկացությունը*: Այն պատահական մեծություն է՝ կախված բազմաթիվ պատահական գործոններից: Կոռուպցիոն իրավախախտումների և գործույթությունների վերաբերյալ վիճակագրական հավաստի տվյալներ չեն կարող լինել: Հասարակության կոռուպցիոն եկամուտը հավասար է կոռուպցիոն գործողություններում ընդգրկված բոլոր անձանց կոռուպցիոն եկամուտների մեծությամբ: Հարկ է նշել, որ կոռուպցիոն հանցավոր գործարքի կողմերի կոռուպցիոն եկամուտները համաչափ չեն կարող լինել: Կաշառք տվողը ակնկալում է կաշառքի գումարը մի քանի անգամ գերազանցող եկամտի ստացում, այնպես կաշառք տալը՝ «կիմնավորված» չի լինի:

Ստորև ներկայացվում են կոռուպցիայի գնահատման համար կիրառվող ցուցանիշներ, որոնք չեն կարող դիտվել որպես ինտեգրալ գնահատման գործիքներ, սակայն կարող են որոշակի պատկերացում տալ կոռուպցիայի մակարդակի մասին:

*Բնակչության կոռուպցիայի ենթարկվածության ինդեքսը* ցույց է տալիս սոցիումի կոռումպացվածության աստիճանը, որը բնութագրվում է որոշակի ժամանակահատվածում (տարվա ընթացքում) 1000 բնակչի հաշվով կոռուպցիոն իրավախախտումներում ընդգրկված անձանց քվարանսկով: Հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$IC = \frac{m_c \cdot 10^5}{N}, \quad \text{որտեղ՝}$$

$m_c$ -ն որոշակի ժամանակահատվածում (տարվա ընթացքում) կոռուպցիոն իրավախախտումներում ընդգրկված անձանց թվաքանակն է,

$N$  – ը՝ բնակչության թվաքանակը,

$10^5$  – ը՝ միասնական հաշվարկային բազան:

*Կոռուպցիայի ենթարկվածության հատուկ ինդեքսը՝* ( $IC_s$ ) ցույց է տալիս մեկ տարվա ընթացքում պետական և հանրային ծառայությունների (այդ թվում՝ առանձին պետական մարմինների և կառույցների մակայողակով) կոռումպացվածության աստիճանը, որը բնութագրվում է որոշակի ժամանակահատվածում (տարվա ընթացքում) կոռուպցիոն իրավախախտումներում ընդգրկված պետական ծառայողների թվաքանակով: Հաշվարկվում է հետևյալ քանաձևով.

$$IC_s = \frac{m_{cs}}{M}, \quad \text{որտեղ՝}$$

$m_{cs}$  –ը որոշակի ժամանակահատվածում կոռուպցիոն իրավախախտումներում ընդգրկված ծառայողների թվաքանակն է,

$M$  – ը՝ պետական կամ հանրային ծառայողների (կամ տվյալ մարմնի ծառայողների) ընդհանուր թվաքանակը:

Կոռուպցիայի գնահատման համար կիրառվող նման ցուցանիշները բազմաթիվ են, սակայն դրանք օբյեկտիվորեն ցույց չեն տալիս իրական պատկերը: Վերը նշված պատճառներով՝ կոռուպցիոն իրավախախտումների արձանագրումը խիստ դժվար է, քանի որ, բացի դրամաշարժության դեպքերից, նման հանցավոր գործարքներն իրականացվում են կողմերի հանցավոր համաձայնությամբ:

## Անցումային փուլին բնորոշ կոռուպցիայի առանձին դրսևորումները և առանձնահատկությունները

Անցումային փուլում գտնվող երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, հանրային ոլորտում բարեփոխումները, ծառայությունների մատուցման և որակի մատչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը պայմանավորված են դրանց իրականացման թափանցիկության և վերահսկողության հստակ համակարգի ձևավորման հետ:

Կոռուպցիայի առկայությունը պայմանավորված է երկրի քաղաքական-իրավական համակարգի, անցումային շրջանում պետականության կայացմանն ուղղված բարեփոխումների անկատարությամբ: Անկատար է նաև պետական վերահսկողության, այդ թվում՝ պետական գույքի, ֆինանսական միջոցների կառավարման համակարգը:

Անցումային ժամանակաշրջանի կոռուպցիայի բնութագրական դրսևորումներն են.

- բարեփոխումների գործընթացում կոռուպցիոն գործողությունների արագ ներթափանցման և արմատավորվման դեմ պայքարի ցածր արդյունավետությունը,
- օրենսդրությունը երկակի ստանդարտներով կիրառելու արատավոր պրակտիկան՝ պայմանավորված ինչպես օրենսդրական անկատար կառուցակարգերով, այնպես էլ՝ կիրառման վարչարարությամբ,
- կոռուպցիայի տարածվածության լայն դաշտը՝ տնտեսական և հասարակական կյանքի ոլորտներում:

Հայաստանի Հանրապետությունում որոշակիորեն կայացած են քաղաքացիական ծառայության ոլորտի բարեփոխումները: 2001 թվականին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը, սկսվեց նրանում ամրագրված սկզբունքների իրականացումը, 2002 թվականի Խոնավարին ստեղծվեց Քաղաքացիական ծառայության խորհուրդը, 2002 թվականի հուլիսին ընդունվեց քաղաքացիական ծառայողների աշխատավարձը կարգավորող օրենքը: Օրենքի հիման վրա իրականացվեցին դրանց կիրարկումն ապահովող կառուցակարգերը, մշակվեցին և իրականացվեցին.

- Պետական համակարգում առկա բոլոր պաշտոնների դասակարգումը քաղաքական, հայեցողական և քաղաքացիական ծառայողների, միաժամանակ առանձնացնելով սպասարկման և օժանդակման գործառույթները:
- ՀՀ նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, գործադիր մարմինների և օրենքով ստեղծ-

ված հանձնաժողովների և աշխատակիցների քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը:

- Պաշտոններից յուրաքանչյուրի նկարագրությունը, ինչը նպաստում է կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը:
- Պաշտոնյաների կողմից տարեկան հաշվետվաթյունների ներկայացման կառուցակարգը:
- Քաղաքացիական ծառայողների ատեստավորման, մրցույթների թափանցիկ անցկացման և դրանց նկատմամբ հասարակական վերահսկողության ապահովումը:
- Քաղաքացիական ծառայողների վերապատրաստումը:
- Միասնականացվեցին նախարարությունների կառավարման կառուցվածքը, կանոնադրությունները՝ հաշվի առնելով դրանց յուրահատկությունները:

Վերը նշվածները իշխանությունների կողմից ներդրված կոռուպցիայի դեմ պայքարի այն մեխանիզմներն են, որոնք հնարավորություն են բնօրինակում էապես նվազեցնել հովանավորությունը և այլ բացասական դրսևորումները քաղաքացիական ծառայության ոլորտում: ‘Դրա հետ մեկտեղ՝ պետական համակարգում դեռևս գոյություն ունեն կոռուպցիայի պահանջարկի ձևավորման ոլորտակի դրդապատճառներ: Դրանց շարքում առանձնանում են պետական ծառայությունում ընդգրկված աշխատողների.

- ❑ վարձատրության մակարդակի, նյութական խրախուսման, սոցիալական պաշտպանվածության համակարգերի անհամապատասխանությունը նրանց պատվիրակված իշխանական լիազորություններին և պարտականություններին,
- ❑ գործունեության շարժառիթներում շահերի բախման հետևանքով կոռուպցիոն օրինախախտումների թույլ գիտակցումը,
- ❑ կառավարման գործընթաց իրականացնողների անբավարար մասնագիտական պատրաստվածության մակարդակը,
- ❑ կոռուպցիոն գործողությունների համար պատժելիության ռիսկի ցածր աստիճանը:



Ըստ Համաշխարհային Բանկի հետազոտության արդյունքների<sup>1</sup>, ուսումնասիրված 20 երկրների շարքում, վարչական կոռուպցիայի ինդեքսի արժեքը Հայաստանում կազմել է 4.6 և զիջում է միայն առավել բարձր ինդեքս ունեցող երկու երկրների՝ Ադրբեջանին և Կիրգիզիային: Իշխանական լիազորությունների զավթման ինդեքսի աստիճանով Հայաստանը Սլովենիայի հետ միասին ստացել է նվազագույն գնահատականը՝ 7, միջին՝ 21, և առավել բարձր՝ 41 /Ադրբեջան/ ինդեքսների սլայդագայում: Այս պատկերը վկայում է, որ կոռուպցիոն դրսևորումները Հայաստանում առավել ազդեցիկ են բնակչության աղքատ խավերի համար, քանի որ վարչական կոռուպցիայի հետ բախվում են ինչպես տնային տնտեսությունները, այնպես էլ գործարարները: Այդ են վկայում նաև «Հայ ժողովրդական ֆորում» հասարակական կազմակերպության կողմից անցկացված հետազոտության արդյունքները:<sup>2</sup> Ըստ հարցվածների 71.9%-ի կարծիքի՝ կաշառակերությունը մեր կյանքի անբաժան մասն է, և միայն 5.8%-ն է համարում, «որ ամեն ինչ կարելի է անել օրինական ճանապարհով»: Կոռուպցիան փոխում է հանրային ծառայություն իրականացնողները գործելու շարժառիթները, արդյունքում պետությունը դադարում է ծառայել նրանց, ովքեր վճարում են իրեն, և փոխարենը սկսում է ծառայել նրանց, ովքեր վճարում են որոշումներ կայացնելու լիազորություն ունեցող անձանց: Համաձայն վերը նշված հետազոտություն հարցվողների կարծիքի, ինչպես նաև հետազոտության եզրահանգումների՝ կոռուպցիոն հարաբերությունները բարձրացնում են հանրային ծառայությունների մատչելիությունը բնակչության բավարար եկատաներ ունեցող խավերի համար, չնայած նրանց միաժամանակ չի գուհացնում դրանց մատուցման որակը, միևնույն ժամանակ՝ այդ ծառայությունների մատչելիությունը կտրուկ նվազում է աղքատ խավերի համար, հատկապես՝ գյուղական բնակչության շրջանում: Ըստ նույն հետազոտության՝ առավել կոռումպացված և ցածր մատչելիության աստիճան ունեցող ոլորտների շարքում են այն ծառայությունները, որոնք անհրաժեշտ են բոլորին, ներառյալ՝ աղքատներին, դրանք են՝ առողջապահության, սոցիալական ծառայությունների համակարգերը:

«Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների» ծրագրում նշված են կոռուպցիայի գոյության հետևյալ պատճառները.

- պետության նշանակության, դերի և ինդիլրների պատկերացումների խաթարումը,

<sup>1</sup> Anticorruption in Transition: A Contribution to the Policy Debate. WB. Washington, D.C. 2000

<sup>2</sup> Հայ ժողովրդական ֆորում, ՀԿ, Տնային տնտեսությունները սպասարկող հանրային տնտեսությունների վերաբերյալ հասարակական կարծիքի սոցիոլոգիական հետազոտություն հաշվետվություն, Երևան 2001

- իրավական պետության գլխավոր սկզբունքի՝ իրավունքի (օրենքի) գերակայության ուղղահարումը,
- օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների տարանջատման ոչ լիարժեքությունը,
- սոցիալապես և նյութապես խոցելի, ուռճացված պետական ապարատը, որը պետական կառավարումը դարձնում է անարդյունավետ,
- սովետային տնտեսության մեթոդի չափերը,
- ժողովրդավարական պետությանը բնորոշ ինստիտուտների անկատարությունը,
- նոր հասարակական հարաբերությունների ձևավորման գործում քաղաքական և տնտեսական ռազմավարությունը հասարակությանը մատչելի ներկայացնելու անարդյունավետությունը,
- օրենսդրության ձևավորման գործընթացում հակակոռուպցիոն գործունի թերագնահատումը,
- իրավապահ մարմինների և դատական համակարգի անբավարար գործունեությունը կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման և կոռուպցիոն տարրերին սրտասխանատվության ենթարկելու խնդրում, ինչպես նաև՝ պատժի անխուսափելիության սկզբունքի խախտումները,
- մայրու քաղաքացիական իրավունքների, գործող օրենսդրության, սոցիալական արդարության պաշտպանության մեխանիզմների անկատարությունը,
- պետական կառավարման գործառույթների պատշաճ հսկողության և վերահսկողության թուլությունը,
- ՁԼՄ-ների պասիվ կամ ընտրողական վերաբերմունքը և մասնակցությունը (յուսաբանումը) հասարակական և քաղաքական կյանքին:

## Համակարգային կոռուպցիա

Համակարգային կոռուպցիայի դեպքում կոռուպցիան դառնում է կառավարման համակարգի անբաժանելի մասը, որոշ դեպքերում՝ կառավարման գործառույթի շարժիչը: Համակարգային կոռուպցիան լայնորեն տարածված է գարգացող և անցումային փուլում գտնվող երկրներում: Չարգացած երկրներում կոռուպցիան, որպես կանոն, կարող է ներխուժել կառավարման համակարգի որևէ հատված, սակայն չի ստանում համակարգային բնույթ՝ շնորհիվ կառավարման համակարգերի և ժո-

յովորդավարության ինտիտուտների հստակ ձևավորվածության և կայացածության:

Անցումային փուլում գտնվող երկրներում անգամ հակակոտույցիոն անհրաժեշտ օրենսդրությունը և հետապնդման ապարատի առկայությունը չեն խանգարում կոռուպցիայի բնդարձակմանը համակարգային ձևայնացված բնույթով: Հատկանշական է, որ կոռուպցիայի համակարգային բնույթը զարգացավ ժողովրդավարության գործընթացներին գուցահեռ՝ դրանով իսկ արժեզրկելով շուկայական տնտեսության ու քաղաքական ազատությունների արժեքները: Համակարգային կոռուպցիան ծաղկում է այնտեղ, որտեղ պետական և մոնիցիդայալ ծառայողների վարձատրությունը ցածր է նվազագույն կենսաապահովման մակարդակից: Պետական ծառայողը այս պարագայում ալիս չի գնահատում իր ծառայությունն ու պաշտոնը, եթե այն կաշառքի հնարավորություն չի բնձնում: Պետական ծառայողը համարում է իր եկամուտները այլ աղբյուրների հաշվին: Եթե առաջատար և գլխավոր պաշտոնների վարձատրության հավելումները շոշափելի չեն, ապա համարժեք չի դրսևորվում նաև պաշտոնական առաջխաղացման մոտիվացիան, և յստ այդմ, առաջխաղացումը նվազ կախվածություն է ունենում ծառայողների մասնագիտական որակավորումից ու արժանիքներից: Համակարգային կոռուպցիայի դրսևորումներից է նաև այն, որ պետական և մոնիցիդայալ ծառայողները ձևավորում են իրենց անձնական բիզնեսը և «խորհրդատվական ծառայություններ» են մատուցում այն գերատեսչության հստակագրություն, որտեղ իրենք աշխատում են: Նյսանք շուկայական գներով պայմանագրային պատվերներ են իրականացնում այն աշխատանքների համար, որոնք մտնում են իրենց գերատեսչության պարտականությունների մեջ, որը շահերի բախման ակնհայտ դրսևորումներից է:

## Աղքատությունը և կոռուպցիան

Կոռուպցիայի հետևանքով իշխանությունների վերահսկողությունից դուրս կատարվող վերաբաշխումների արդյունքում էապես նվազում են այն միջոցների ծավալները, որոնք կարող էին ուղղակի կամ անուղղակի ուղղվել աղքատ խավերի կենսամակարդակի բարձրացման ապահովմանը:

Բնակչության աղքատ շերտերը, համարժեք չօգտվելով պետական ֆինանսների խորդակներով կատարվող բաշխումից, որպես հարկատու հանդիսանում են պարտադիր վճարումներ կատարողներ: Պետական և հանրային ոլորտի ծառայություններում վարչական կոռուպցիայի դրսևորումների հետևանքով, պարտադիր պետական ծառայություններ վեր են ածվում վճարովի ծառայություններ: Ըստ էության, աղ-

քատները դրանց համար ստիպված են վճարել ավելի շատ, քան մյուսները, ելնելով խրենց կողմից կատարվող ծախսերի կառուցվածքից:

Գործարար ոլորտում անօրինական վճարումների և հովանավորչության համընդհանուր դարձած երևույթների պարագայում աղքատները գործարար ձեռնարկումների դեպքում առավել, քան մյուսները, բախվում են լրացուցիչ դժվարությունների և բայությունների հետ: Սկզբնական բայությունները հաղթահարելու դեպքում, նրանք առաջինն են համարում ստվեյում գործույների շրջանակը, քանի որ դա պարտադրված է միջավայրում գերակայող կանոններով, որոնց չընդունելը մեկուսացնում և գրկում է կենսական անհրաժեշտ ձեռնարկատիրական եկամուտներից:

Մյուս կողմից՝ կոռուպցիայի հետևանքով շուկայական մրցակցության կանոններով գործող գործարարները և, առաջին հերթին փոքր բիզնեսի ոլորտի ձեռներեցները, հաճախ դուրս են շարտվում շուկայից և համարյալ են աղքատների շարքերը՝ հաճախ մրցակցության պայմանների հիմքերը խարխլող՝ մենաշնորհների թելադրանքով: Արդյունքում, երբ խիստ սահմանափակված են աղքատությունը սեփական գործունեությունից ստացվող եկամուտներով հաղթահարելու ուղիները, չի կայանում միջին խավը, աղքատությունը դառնում է վերարտադրվող երևույթ:

## Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական մոտեցումները

Գոյություն ունի համակարգային կոռուպցիայի դեմ պայքարի չորս հիմնական տարբերակված մոտեցում: Առաջին տարբերակը առաջարկում է բարեփոխել պետական կառավարման համակարգը: Այն առավել բարդ է և չունի պատրաստի պատասխաններ: Իշխանությունների կողմից սլահանջվում է քաղաքական կամքի դրսևորում՝ բարեփոխումները հետևողականորեն իրականացնելու համար:

Երկրորդ տարբերակը նոր իշխանության եկած լիդերների կողմից պետական ծառայության համակարգի վերևից ներքև վերակառուցումն է: Այս սցենարը հաջողությամբ իրականացվել է Ուգանդայում, որտեղ իշխանության արմատական փոփոխությունն իրականացվեց նոր քաղաքական ղեկավարության կողմից: Այս սցենարի մեջ է նաև Վրաստանի բարեփոխումների տարբերակը՝ նախագահ Սահակաշվիլու գլխավորությամբ: Այստեղ հաջողության գրավականը կախված է նրանից, թե կբավարարի՞ նոր իշխանությունների ժամանակը և նպատակաուղղվածությունը՝ բարեփոխումներն ավարտին հասցնելու համար:

Երրորդ տարբերակը, դա պարտադրված իշխանավորությունն է երկրի նախկին ղեկավարների ազատազրկմամբ (Բանգլադեշ) կամ մահապատժով (Գանա): Պատմական փորձը վկայում է, որ այս տարբերակը կարող է լինել հաջողված, այնպես էլ՝ անարդյունք:

Չորրորդ տարբերակը «անկլավի» կամ «ազնվության կղզյակի» հայեցակարգն է, որը փորձարկվել է Էկվադորում: Գաղափարախոսությունը կայանում է նրանում, որ պետական ծառայության առանձին օրակներ սահմանազատվում են պետական ամբողջ համակարգից, որպեսզի կոռուպցիայի դեմ պայքարը իրականացվի առանձին օրակում, և հաջողված փորձը այնուհետև տարածվի ամբողջ համակարգի վրա:

Հայաստանում պետական ծառայության նման կղզյակներից կարելի նշել իրավաբանական անձանց ռեգիստրի պետական ծառայությունը, որտեղ առավելապես վերացվել են կոռուպցիոն երևույթները: Ընդհանուր առմամբ, Հայաստանում իրականացվում է հակակոռուպցիոն պայքարի առաջին տարբերակը. պետական հակակոռուպցիոն ծրագրի հիման վրա խնդիր է դրված բարեփոխել պետական կառավարման ամբողջ համակարգի որակը: Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն արդյունավետ պայքարի քաղաքականությունը իրականացնելու նպատակով՝ դեռևս 2001 թվականի հունվարին ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվեց ՀՀ հակակոռուպցիոն ծրագրի հետ կապված աշխատանքները համակարգող հանձնաժողով՝ վարչապետի գլխավորությամբ: Այնուհետև՝ 2002 թվականի հունվարին Համաշխարհային Բանկի Ինստիտուցիոնալ զարգացման հիմնադրամի դրամաշնորհի օժանդակությամբ ձևավորվեց հակակոռուպցիոն ծրագրի մշակող աշխատանքային խումբը: ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 1522-Ն որոշմամբ հաստատվեց «Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների» ծրագիրը: Նույն թվականին ՀՀ նախագահը նշանակեց կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով խորհրդական:

Կոռուպցիայի արդյունավետ պայքարի համակարգը ենթադրում է լայն ու բազմակողմանի միջոցառումների կիրառում, ներառյալ՝ քաղաքական, տնտեսական, բարոյաևեթիկական, կրթական և այլն: Կոռուպցիայի դեմ պայքարի համակարգում առաջնությունը պետք է տրվի դրա կանխարգելմանը և ոչ պատժիչ միջոցառումներին:

Հակակոռուպցիոն պայքարի ռազմավարությունը, որպես երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական և կառավարման համակարգերի բարեփոխումների իրականացման բաղկացուցիչ, կարող է արդյունավետ լինել, երբ նշված ոլորտները կանոնակարգող մոտեցումները պարունակում են կոռուպցիայի կանխարգելման համարժեք հակակշիռներ և կոռուցակարգեր:

Աղքատության հիմնախնդրի հաղթահարումը ուղղակիորեն կապված է կոռուպցիոն երևույթների վերարտադրությունը սահմանափակելու, դրա նոր, առավել փտանգավոր տարատեսակները գեներացնելու ունակությունը կանխելու պայքարի արդյունավետության հետ:

## Հակակոռուպցիոն բարեփոխումների հիմնարար սկզբունքները և համազգային վարքագծի կանոնները

**Առաջին.** չպետք է փորձել հասնել անիրատեսական նպատակների: Անհրաժեշտ է որոշել, թե որ ոլորտներում է հնարավոր լավագույն արդյունքի ձեռքբերումը և ուժերը կենտրոնացնել դրանց ուղղությամբ: Մի քանի «արագ հաղթանակների» արժեքը ավելին է, քան վիճակը լավացնելու ընդհանուր խոստումները: «Արագ հաղթանակները» հանրությանը տեսանելի ցուցադրում են այն, որ փոփոխությունները իրատեսական են և հնարավոր:

**Երկրորդ.** մշտապես հարկ է ընդգծել, որ բարեփոխումները իրականացվում են ի նպաստ սպառողների: Դա թույլացնում է հանրության բնական վախճ բարեփոխումների նկատմամբ: Գիտակցելով, որ կանոնները փոփոխվել են, մարդիկ կզնան բարեփոխումների ետևից, և դա կկանխի կոռուպցիայի հետագայում վերադարձը և հնարավորությունը:

**Երրորդ.** անհրաժեշտ է հասարակության մեջ ձևավորել ազնվություն խրախուսելու մթնոլորտ: Եթե բարեփոխիչները անազնիվ են, հասարակությունը հիասթափություն է ունենալու բարեփոխումների նկատմամբ, և բոլոր ջանքերն ու միջոցները մնալու են անարդյունք: Սակայն ազնվությունը վերջնական նպատակը չէ, այլ այն միջոցն է, որով իշխանության կրողները հասարակությանը պետք մատուցեն այն ծառայությունները, որոնք նա իրավասու է ստանալ:

Այս առումով հիշարժան են Մեծ Բրիտանիայի Նոլանի հանձնաժողովի 1995 թվականին մշակած 7 համընդհանուր սկզբունքները, որոնք ուսանելի ու կիրառելի են հանրային կյանքի բոլոր կողմերի համար:

1. **Անշահախնդրությունը:** Ըստ որի՝ պաշտոնատար անձինք պարտավոր են կայացնել որոշումներ, ելնելով միայն հանրային շահերից: Նրանք չպետք է առաջնորդվեն իրենց, իրենց ընտանիքների կամ բարեկամների ֆինանսական կամ այլ նյութական շահերին հասնելու նպատակներով:
2. **Անկաշառությունը:** Ըստ որի՝ պաշտոնատար անձինք չպետք է իրենց դնեն ֆինանսական կամ այլ կախվածության մեջ առանձին անձանցից կամ կազմակերպություններից, որոնք կարող են ազդել նրանց մասնագիտական պարտականությունների իրականացման վրա:
3. **Օբյեկտիվությունը:** Ըստ որի՝ պաշտոնատար անձինք պատասխանատու պաշտոնների նշանակումների,

պատվերների տրամադրման, պարզևատրումների ներկայացման ժամանակ և նման այլ դեպքերում պարտավոր են առաջնորդվել բացառապես թեկնածուների արժանիքներով:

4. Հաշվետու լինելը: Ըստ որի՝ պաշտոնատար անձինք հաշվետու են հանրությանը՝ ընդունած որոշումների և իրականացված գործողությունների համար: Նրանց գործունեությունը պետք է թափանցիկ լինի ամենամանրակրկիտ վերստուգումների համար:
5. Թափանցիկությունը: Ըստ որի՝ պաշտոնատար անձանց որոշումներն ու գործողությունները հանրության համար առավելապես պետք է լինեն բաց և թափանցիկ: Պաշտոնատար անձինք պարտավոր են հիմնավորել իրենց որոշումները, իսկ տեղեկատվությունը թաքցնելը թույլատրվում է բացառապես այն դեպքերում, երբ դա պահանջում են հանրության բարձրագույն շահերը:
6. Ազնվությունը: Ըստ որի՝ պաշտոնատար անձինք պարտավոր են հրապարակայնորեն հայտարարել պաշտոնական պարտականությունների առնչությամբ անձնական բոլոր շահերի մասին և ձեռնարկել միջոցներ, որպեսզի դրա արդյունքում առաջացած կոնֆլիկտները լուծվեն ի շահ հանրության:
7. Ղեկավարումը: Ըստ որի՝ պաշտոնատար անձինք, իրականացնելով ղեկավարում ու ցուցաբերելով անձնական օրինակ, պետք է պահպանեն վերը նշված սկզբունքները:

## Վերահսկողության արդյունավետ համակարգը

Միջազգային պրատիկայում պետության վերահսկիչ մարմինները բազմաթիվ են՝ սկսած ֆինանսական հաշվետվության ենթարկող մարմիններից՝ արտաքին և ներքին, վերջացրած՝ անկախ հակակոռուպցիոն գործակալություններով: Փորձը վկայում է, որ վերահսկողության առավել արդյունավետ մարմինները պետական գույքի և ֆինանսական միջոցների իսանդեպ արտաքին ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմիններն են՝ ի դեմս երկրի բարձրագույն վերահսկիչ մարմնի, որը բոլոր երկրներում կարևոր դերակատարում ունի կոռուպցիոն երևույթների բացահայտման և կանխարգելման գործում: Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրությամբ և օրենքով նման լիազորություններով օժտված մարմին է ՀՀ Ազգային ժողովի Վերահսկիչ պալատը:

## Հակակոռուպցիոն պայքարի սկզբունքը

Հակակոռուպցիոն պայքարի արդյունավետության նախապայմանը նրա համալիր բնույթն է: Միջազգային փորձը վկայում է, որ կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության մեջ գերակայությունը, որպես կանոն, տրվում է կանխարգելիչ մոտեցմանն ու միջոցառումներին, միևնույն ժամանակ, դրանք համարժեք ձևով գույություն են հաշվետու լինելու, հարկադրանքի և ներգործության պատժողական տարբեր մեխանիզմներով, այնպես, որ «բարձր շահույթ – պատժվելու ցածր ռիսկ»՝ նպաստավոր պայմանները փոխարինվեն «սկսած ցածր շահույթից – պատժվելու բարձր ռիսկ»՝ խիստ պայմաններով:

## Տնտեսական բարեփոխումները և ստվերային տնտեսությունը

Տնտեսական, սոցիալական և կառավարման ոլորտի կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման ընթացքում ի հայտ եկող անհամաձայնությունները հաճախ առաջացնում են տարբեր համակարգերի անհամատեղելիություն՝ ստեղծելով դրական փոխներգործության տահմանափակում կամ ուղղակի բացառում, շահերի բախումներ, օբյեկտիվ արգելքներ և հակասություններ: Բարեփոխումների իրագործման անհետևողականությունը, իր հերթին, հանգեցնում է էական շեղումների, որը իմաստագրվում է ձեռնարկված միջոցառումները և տվյալ ոլորտում առաջացնում նոր և առավել բարդ հիմնահարցեր:

Տնտեսական և սոցիալական բարեփոխումների թույլ փոխկապակցվածության և դրանց իրագործման անհետևողականությունը բնութագրող պատճառներից է «բարեփոխումների հոգնածության» երևույթը, որը բնորոշվում է՝ բարեփոխումների մասշտաբների ավելացման պարագայում հետադարձ կապի թույլ աստիճանով, ֆինանսական միջոցների և համարժեք կարողությամբ մասնագետների պակասով, բարեփոխումների շտաբային կրահանգավորող և մոնիտորինգի թույլ կենտրոնով, տնտեսական երևույթների իներցիոն ուժի ոչ արժանահավատ գնահատմամբ, ինչպես նաև՝ բարեփոխումները առանձնացված գործառույթային սկզբունքով կառավարելու մոտեցման գերակայությամբ, որին այն բնորոշ չէ, և փոխարենը պահանջում է գործընթացի ամբողջական կառավարման մոդելների կիրառում՝ հիմնված նախանշված արդյունքների նպատակային կառավարման մոտեցումների վրա (Result-Based Management):



Վերը նշված դրսևորումները, դրանց բնորոշ հակասություններով, նվազեցնում են իրականացվող բարեփոխումների սպասվելիք արդյունքների ձեռքբերման հնարավորությունը և առաջացնում են նյութական, այդ թվում՝ ֆինանսական միջոցների, ինչպես նաև՝ ժամանակի կորուստներ, և այսպիսով բազմապատկում են ուղղակի վնասների մեծությունը՝ կապված այդ հիմքի վրա ձևավորվող ու մուլտիպլիկատիվ ընդարձակվող կոռուպցիան երևույթների հետ:

Կոռուպցիան հանգեցնում է կապիտալի կորստի և հարկերից խուսափելուն: Տնտեսվարողները, ապավինելով կոռուպցիոն մեխանիզմներին, հաճախ անցնում են ստվերային դաշտ:

Ստվերային տնտեսության դեմ պայքարի բացառիկ արդիականությունը երևույթի մասշտաբների հետ մեկտեղ պայմանավորված է նրանով, որ ստվերային տնտեսության դեմ պայքարը այն առանցքն է, որտեղ ուղղակիորեն խաչաձևվում են պետության, հասարակության, տնտեսվարող սուբյեկտների, առանձին քաղաքացիների շահերը:

Հայաստանում ստվերային տնտեսության հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն չի տնեցել և չունի արտահայտված քրեաժին բնույթ, դրա շարժառիթները կայանում են հարկերից և այլ պարտադիր վճարներից խուսափելու միջոցով բիզնեսը կայացնելու, կամ հակառակը՝ գերշահույթներ ապահովելու մեջ:

Ստվերային տնտեսության և կոռուպցիայի դեմ մղվող պայքարը կարող է արդյունավետ լինել միայն համակարգային համալիր մոտեցումների իրականացման դեպքում՝ ներառյալ օրենսդրական և վարչարարական բնույթի միջոցառումները: Այդ պայքարի հիմնական գերակայություններից պետք է հանդիսանա հարկային քաղաքականության և վարչարարության լծակներով այն հաղթահարելու ուղղությունը, որի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է իրականացվող միջոցառումների հետևողականությամբ:

## Պետական ֆինանսական համակարգի թափանցիկ գործունեության սկզբունքները

Բյուջետային գործընթացի ծրագրավորման, թափանցիկության, հաշվետվությունների արժանահավատության աստիճանը և դրա օրինականության պահպանումը, հարկային գործընթացի արդյունավետության հետ մեկտեղ, հանդիսանում են իշխանությունների հանդեպ ժողովրդի, երկրի հանդեպ գործընկեր և դոնոր երկրների, միջազգային կազմակերպությունների կողմից վստահության ամենակարևոր երաշխիքները:

Բյուջետային գործընթացի կոռուպցիոն բազմազան դրսևորումները պայմանավորված են այդ աղբյուրից իրականացվող ֆինանսավորման անվերադարձ ու անհատույց բնույթով, որը պահանջում է ձևավորել բյուջետային գործընթացի առանձնահատուկ կանոնակարգում, վերահսկում և հրապարակայնության ապահովման կառուցակարգեր:

Պետական ֆինանսական համակարգի թափանցիկ գործունեության սկզբունքներն ամրագրված են Արժութային Միջազգային Հիմանդրամի (IMF) հարկաբյուջետային (ֆիսկալ) թափանցիկ կանոններում, որը ներառում է հետևյալ բաժիններն ու դրույթները.

### *1. Դերի և պատասխանատվության պարզությունը*

- 1.1. Կառավարության հատվածը պետք է տարանջատվի մնացած հանրային հատվածից, ինչպես նաև՝ տնտեսությունից: Կառավարության կառավարման քաղաքականությունն ու դեկավարումը պետական համակարգում պետք է լինի պարզ և հրապարակայնորեն բացահայտված:
  - 1.1.1. Կառավարության կառուցվածքն ու գործառույթները պետք է լինեն պարզորոշ սահմանված:
  - 1.1.2. Իշխանությունների տարբեր ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր, դատական և կառավարության տարբեր մակարդակների պատասխանատվությունները պետք է լինեն հստակ սահմանված:
  - 1.1.3. Պետք է սահմանվի բյուջետային և արտաբյուջետային գործունեության հստակ և կոդիֆիցացնող կառավարման համակարգ:
  - 1.1.4. Կառավարության և պետական այլ կառույցների՝ կենտրոնական բանկ, հանրային ֆինանսական ինստիտուտներ և այլն, հարաբերությունները պետք է հիմնվեն հստակ կառուցակարգերի վրա:
  - 1.1.5. Մասնավոր հատվածում պետական կառավարման համակարգի գործունեությունը պետք է իրականացվի թափանցիկ ու բաց ձևով, հիմնվելով ոչ դիսկրիմինացիոն հստակ կանոնների ու գործընթացների վրա:
- 1.2. Հարկաբյուջետային կառավարումը պետք է հիմնվի հստակ օրենսդրական ու վարչական կառուցակարգերի վրա:
  - 1.2.1. Հանրային միջոցների պարտավորությունները կամ ծախսերը պետք է կառավարվեն համակողմանի բյուջետային օրենսդրությամբ և մատչելի վարչարարական կանոններով:
  - 1.2.2. Հարկերը և պարտադիր այլ վճարները պետք է կատարվեն որոշակի հստակ օրենսդրական հիմքով: Հարկերը և այլ կանոնակարգող նորմերը պետք է դյուրին չափվեն, լինեն հասկանալի, կիրառության համար ունենան պարզ չափորոշիչներ և շրջահայաց վարչարարություն:

1.2.3. Հանրային ծառայողների վարքագծի (էթիկայի) չափորոշիչները պետք է լինեն հստակ և հնարավորինս հրապարակային:

## *2. Հանրության համար տեղեկատվության մատչելիությունը*

2.1 Հանրությունը պետք է ամբողջովին ապահովված լինի տեղեկացվելու կառավարության անցած, ներկա և ապագա ֆինանսական գործունեության վերաբերյալ:

2.1.1 Բյուջեի փաթեթը, վերջնական հաշիվները և այլ հանրային ֆինանսական հաշվետվությունները պետք է համարժեք ծածկեն կառավարության (կենտրոնական) բյուջետային, արտաբյուջետային գործունեությունը, և կառավարության կոնսոլիդացված ֆինանսական հաշվետվությունը պետք է հրապարակվի:

2.1.2 Տարեկան բյուջեի տեղեկատվությունը պետք է համադրվի նախորդ երկու ֆինանսական տարվա և առաջիկա երկու տարվա հիմնական խոշորացված կանխատեսումային ցուցանիշների հետ:

2.1.3 Ամբողջական բյուջեի մասը պետք է կազմեն կառավարության հարակից ծախսերի և պարտավորությունների ֆինանսական առաձևահատկությունները և քվազի (կելծ, պսևր) ֆիսկալ գործունեության բնույթը ներկայացնող հաշվետվությունները:

2.1.4 Կառավարությունը պետք է հրապարակի պարտքերի և ֆինանսական ակտիվների ամբողջական պատկերը՝ լստ դրա կառուցվածքի և առանձին մակարդակներին:

2.1.5 Այն դեպքում, երբ պետական ենթամակարդակների գործունեությունը էական է դասվում, պետք է հրապարակվեն ընդհանուր կոնսոլիդացված ֆինանսական ցուցանիշները:

2.2 Պարտավորությունները պետք է հանդիսանան սլաքբերաբար հրապարակվող ֆինանսական տեղեկատվության մասը:

2.2.1 Հրապարակվող ֆինանսական տեղեկատվությունը պետք է հանդիսանա կառավարության օրինական պարտավորությունը:

2.2.2 Պետք է սահմանված լինի հարկաբյուջետային տեղեկատվության հրապարակման հաճախականությունը:

## *3. Բյուջեի քափանցիկ մշակումը, իրականացումը և հաշվետվությունը*

3.1. Բյուջետային փաթեթը պետք է սլաքաբանի ֆինանսական քաղաքականության նպատակները, մակրոտնտեսական կառուցակարգը, բյուջեի քաղաքականության հիմքը և նույնականացնի հիմնական ֆինանսական ռիսկերը:

3.1.1. Հարկաբյուջետային նպատակների քաղաքականության և ֆիսկալ կայունության գնահատումների հաշվետվությունները պետք է հանդիսանան տարեկան բյուջեի կառուցակարգի հիմքը:

3.1.2. Պետական բյուջեի և այլ մակարդակի բյուջեների միջև փոխհարաբերությունների՝ բյուջեի հաշվեկշռման կամ փոխառության սահմանափակումների պահանջներին ներկայացվող հարկաբյուջետային կանոնները պետք է հստակ սահմանված լինեն:

3.1.3. Տարեկան բյուջեն պետք է կազմվի և ներկայացվի մակրոտնտեսական բազմակողմանի քանակական պատկերն արտահայտող կառուցակարգի և բյուջեի հիմնական կանխատեսումային ցուցանիշների հիման վրա:

3.1.4. Տարեկան բյուջեի քաղաքականության նորամուծությունները պետք է հստակ ներկայացված լինեն:

3.1.5. Հարկաբյուջետային հիմնական ռիսկերը պետք է հնարավորինս նույնականացված և գնահատված լինեն, ներառյալ՝ տնտեսական զարգացման ենթադրական սցենարները, չնախատեսված ծախսումները և այլն:

3.2. Բյուջեի տեղեկատվությունը պետք է ներկայացվի քաղաքականության վերլուծության և հաշվետվության հիման վրա:

3.2.1. Բյուջետային ցուցանիշները պետք է հաշվառվեն համախառն հիմքով՝ տարանջատելով մուտքերը, ծախսերը, զուտ ֆինանսավորումը կամ վարկավորումը: Ծախսերը պետք է դասակարգվեն ըստ տնտեսական, գործառնական և գերատեսչական ձևերի: Արտաբյուջետային ծախսերը պետք է հաշվառվեն նույն դասակարգմամբ:

3.2.2. Բյուջեի խոշոր ծրագրերի գծով նպատակային ձեռքբերումների ցուցանիշները պետք է արտացոլվեն հաշվետվություններում, օրինակ՝ սոցիալական վիճակը բնութագրող ցուցանիշները:

3.2.3. Կառավարության բյուջեի հաշվեկշիռը պետք է ունենա ստանդարտ ամփոփիչ ցուցիչներ, որոնք պետք է հիմնավորվեն համարժեք այլ հարկաբյուջետային ցուցիչներով:

3.2.4. Այն դեպքում, երբ ոչ կառավարական հանրային հատվածի կառույցներն ընդգրկված են էական քվազի ֆիսկալ գործունեության մեջ, ապա հանրային հատվածի հաշվեկշիռը պետք է հաշվետվությամբ ներկայացվի:

3.3. Բյուջեի ծախսումների, եկամուտների հավաքագրումն իրականացնելու և մոնիտորինգի ընդունված գործելակարգերը պետք է հստակ սահմանված լինեն:

3.3.1. Բյուջետային համակարգը պետք է ունենա բազմակողմանի ու ինտեգրված հաշվառման համակարգ, որը թույլ կտա ձևավորել արժանահավատ բազա՝ ծախսումների գնահատման համար:

3.3.2. Պետական գնումները, աշխատողների գործունեության կանոնակարգումը պետք է ստանդարտացված ու մատչելի լինեն բոլոր շահագրգիռ կողմերի համար:

3.3.3. Բյուջեի իրականացումը պետք է ենթարկվի ներքին աուդիտի և աուդիտի գործեակարգը պետք է բաց լինի:

3.3.4. Ազգային հարկային ծառայությունը պետք է օրենսդրորեն պաշտպանված լինի քաղաքական ազդեցություններից և պարբերաբար հանրությանը ներկայացնի իր գործունեության արդյունքները:

3.4. Օրենսդրի և հանրության համար պետք է սահմանված լինի հարկաբյուջետային հաշվետվությունների համակարգ:

3.4.1. Օրենսդիր մարմնին պետք է ներկայացվի բյուջեի կիսամյակային հաշվետվությունը: Բյուջեի եռամսյակային հաշվետվությունները պետք է հրապարակվեն:

3.4.2. Ֆինանսական տարվա վերջում բյուջեի վերջնական հաշվետվությունը (հաշիվները) պետք է ներկայացվեն օրենսդիր մարմնին:

3.4.3. Օրենսդիր մարմնին տարեկան կտրվածքով պետք է ներկայացվեն բյուջետային ծրագրերի իրականացման համադրելի արդյունքները:

#### *4. Արժանահավատության երաշխիքները*

4.1. Ֆինանսական ցուցանիշները պետք է ընդունելի լինեն ցուցանիշների որակական չափորոշիչների առումով:

4.1.1. Բյուջեի ցուցանիշները պետք է թղթակցեն եկամուտների և ծախսերի վերջին միտումներին, մակրոտնտեսական զարգացումներին, և ճիշտ բնութագրեն քաղաքական պարտավորությունները:

4.1.2. Տարեկան բյուջեն և դրա ֆինանսական հաշիվները պետք է ցույց տրվեն հաշվապահական հաշվառման հիմքով (դրամարկղային կամ հաշվեգրման սկզբունքով), և տվյալների հավաքագրումն ու ներկայացումը պետք է իրականացվեն դրանց չափորոշիչների կիրառմամբ:

4.1.3. Հարկաբյուջետային ցուցանիշները պետք է ունենան որակական հիմնավորում, մասնավորապես՝ ֆիսկալ հաշվետվության ցուցանիշները պետք է ներքուստ չհակասեն, թղթակցեն և ճշտված լինեն այլ աղբյուրների ցուցանիշների հետ:

4.2. Հարկաբյուջետային տեղեկատվությունը պետք է հանդիսանա անկախ հետազոտության առարկա:

4.2.1. Ազգային աուդիտորական մարմինը կամ դրան հավասարազոր մարմինը, որը անկախ է գործադիրից, իրականացնում է պետական բյուջեի հաշվետվության (հաշիվների) ֆինանսական արժանահավատության գնահատումը և դրա ներկայացումը օրենսդրին ու հանրությանը:

4.2.2. Ֆինանսական, մակրոտնտեսական կանխատեսումների և այլ բոլոր ենթադրությունների իրակականցման համար, որոնց վրա հիմնվում է բյուջեն, պետք է հրավիրվեն անկախ փորձագետներ:

4.2.3. Ազգային վիճակագրական ծառայությունը ինստիտուցիոնալ անկախ հիմքով պետք է ապահովի ֆինանսական ցուցանիշների որակի ստուգումը:

### Սեփականության իրավունքի պաշտպանությունը և հետմասնավորեցման շրջանի հիմնախնդիրները

Ազատական շուկայական տնտեսության կայացման հիմնական նախապայմաններից է սեփականության ինստիտուտի պահպանման երաշխիքների առկայությունը:

Հետմասնավորեցման հիմնախնդիրներն արժեզրկում են մասնավորեցման ընթացքում սպասվելիք ուղղակի արդյունքները: Կազմակերպությունների նպատակային վերակազմակերպումների և արհեստածին սնանկությունների միջոցով աեղի է ունենում մասնավորեցման ընթացքում ստեղծված բաժնետիրական ընկերություններում կապիտալի վերաբաշխում և միևնույն արժեքների սեփականության իրավունքի ոտնահարում: Այս պարագայում իշխանությունների խնդիրն է այն սեփականատերերի իրավունքների պաշտպանությունը, ովքեր ձևավորելու են կորպորատիվ սեփականատերերի լայն շերտը և հասարակության միջին խավը:

### Մրցակցության պաշտպանությունը

Հավասար պայմաններով մրցակցային միջավայրը տնտեսության մեջ ապահովում է ռեսուրսների ալոկացիայի արդյունավետ բաշխումը, շուկայի բոլոր մասնակիցների, այդ թվում՝ սպառողների շահերի պաշտպանությունը, և սեփականության իրավունքի գերակայության ճանաչման հետ մեկտեղ հանդիսանում է ազատական տնտեսության բնականոն զարգացման հիմնական նախապայմանը:

Տնտեսության ոլորտների մենաշնորհման հետևանքով արտադրանքի (ծառայությունների) ինքնարժեքի արհեստականորեն նվազեցման կամ բայծրացման արդյունքում շուկայի մասնակիցները՝ սպառողներն ու արտադրողները, ստանում են խեղաթյուրված գնային ազդակներ, որի հետևանքով տնտեսության որոշ հատվածներում դեֆորմացվում է վճարունակ պահանջարկի կառուցվածքը, դստարում են գործել առաջարկի և պահանջարկի վարքագծի դասական օրինաչափությունները:

Մրցակցության հավասար պայմաններով միջավայրի չկայացումը հանդիսանում է նաև տնտեսության մեջ կապիտալի ազատ շարժման խոչընդոտող էական գործոններից:

Լայնամասշտաբ կոռուպցիան, խթանելով անբարեխիղճ մրցակցությունը, խաչընդոտում է ոչ միայն օտարերկրյա, այլ նաև երկրի ներսում հնարավոր ներդրումները, ոլոր, ըստ էության, սահմանափակում է երկրի զարգացման հնարավորությունները: Կոռուպցիայի գնահատելի արժեքներից մեկն էլ չկայացած ներդրումներն են:

### Գործարարությունը սպասարկող պետական ծառայությունների ոլորտում կոռուպցիոն ռիսկերի սահմանափակումը

Գործարարությունը սպասարկող պետական ծառայությունների ոլորտում կոռուպցիոն ռիսկերը սահմանափակելու փորձված միջոցներ են հանդիսանում միջազգային պայլտիկայում լայնորեն կիրառվող.

➤ Պետական և մոնիցինգայալ ծառայությունների իրականացման ընթացքում, այդ թվում՝ կազմակերպություն ստեղծելու, գրանցելու, լիցենզավորելու, գործունեության համար տարբեր թույլտվություններ ստանալու դեպքում «միսսնական մեկ պատուհանից»՝ սկզբունքի կիրառումը, որով դիմող անձը օրենքով սահմանված ժամկետներում, հնարավորություն է ստանում խնդրատարկա ծառայության վերաբերյալ բոլոր պահանջներն ու պարզաբանումները ստանալ մեկ տեղից, համատեղված սպասարկումների միջոցով:

➤ Հակակոռուպցիոն պայքարի արդյունավետ ձևերից է օրենսդրությամբ «գրելու վարչական համաձայնության» սկզբունքի ամրագրումը, որով կանոնակարգվում են պետական կարգավորող և վերահսկող մարմինների կողմից տրվող լիցենզիաների և տարբեր թույլտվությունների տրամադրման գործընթացը: Սկզբունքի կիրառումը ենթադրում է թույլտվությունը կամ լիցենզիան հայցող կողմի համար օրինական կարգով ստացված, երբ սահմանված ժամկետի վերջում լիազորված պետական (տեղական) կառավարման մարմինը այն չի մերժում կամ հայցողին չի պատասխանում:

Տնտեսության ոլորտում պետական կարգավորման և վերահսկման գործառույթների սահմանափակման միջազգային պրակտիկայում ընդունված ուղիներից են.

➤ Դրանց պատվիրակումը մասնագիտական միություններին: Մասնավորապես՝ ստանդարտացված առանձին գործառույթներ կարող են պատվիրակվել առևտրաարդյունաբերական պալատին և այլ մասնագիտական միություններին:

- Ինքնակառավարվող կազմակերպությունների զարգացումը, որի միջոցով բիզնեսը ինքն է ստանձնում պետական կառավարման կարգավորող ու վերահսկող տարբեր գործառույթների իրականացումը, մասնավորապես՝ շուկայի ինստիտուցիոնալ մասնակիցների մասնագետների համար պահանջվող որակավորման իրականացումը և այլն:

Հակակոռուպցիոն պայքարի արդյունավետությունը պայմանավորված է բիզնեսի կողմից պետական մարմինների գործողությունների դյուրին բոլորարկումների հնարավորությամբ, ինչպես ուղղակի, այնպես էլ դատական կարգով, հիմնվելով մասնավորապես երկու հիմնական կառուցակարգերի վրա, առաջին՝ տնտեսական օրենսդրության մեջ երկիմաստ, վիճահարույց նորմերի հստակեցումներով, երկրորդ՝ բիզնես ասոցիացիաների կայացման և նրանց ջանքերով բիզնեսի շահերի պաշտպանության իրականացմամբ:

## Հակակոռուպցիոն պայքարի անհաջողության պատճառները

Պատմությունը վկայում է կառավարման բարեփոխումների և հակակոռուպցիոն պայքարի բազմաթիվ անհաջողություններ, երբ տրվում են խոստումներ, սակայն դրանք չեն իրագործվում: Ռիոչ դեպքերում նպատակները լինում են անկեղծ, սակայն հիմնախնդիրների ծանրությունը հնարավոր չի լինում հարթախարել չհամակարգված մոտեցումներով:

Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական պատճառներն են.

- Զաղաքական կամքի բացակայությունը և կոռումպացված ասպարատի դիմակայությունը:
- Անիրատես խոստումները և նպատակները, որոնք հանգեցնում են փտախության ռեսուրսի սպառման:
- Իրականացվող բարեփոխումների անավարտ ու չկոսյինացվող բնույթը, վերջնական ալյարներների համար պատասխանատուների բացակայությունը:
- Բարեփոխումների ու հակակոռուպցիոն պայքարի առանցքի կառուցումը օրենսդրորեն ներգործելու հնարավորությունների վրա, առանց համարժեք վարչարարության, կամ հակառակը՝ խիստ պատժուղական (ռեպրեսիոն) գործողությունների իրականացումը, իշխանական լիազորությունների գերազանցումներով, որը առաջացնում է կոռումպացված նոր իշխանական վերնախավի ձևավորում:



- Օրենքների ընտրողական՝ երկակի ստանդարտներով կիրառումը «վերևների» և «ներքևների» նկատմամբ:
- Բարեփոխումների նպատակների ոչ հստակ և իրատեսական ուրվագծումը, որը խեղաթյուրում է պայքարը և նվազեցնում է հանրության վստահությունը այն իրագործողների նկատմամբ:
- Բարեփոխումների համար անհրաժեշտ ինստիտուտների չձևավորումը այն հատվածներում, որտեղ իրականացվող բարեփոխումները իրատեսական են, որի արդյունքում գեներացված պայքարի գործընթացը կանգ է առնում:
- Պետությունը, գործարար ոլորտը և քաղաքացիական հասարակությունը չունեն և չեն ներդրում համարժեք հակակոռուպցիոն տեխնոլոգիաներ:

Խախտվում է պայքարի պատժողական և կանխարգելիչ միջոցների հավասարակշռվածությունը՝ հոգուտ առաջինի:

## Հակակոռուպցիոն պայքարի մասնակցության սուբյեկտները

Հակակոռուպցիոն պայքարում մասնակցության սուբյեկտներ են հանդիսանում պետությունը՝ ի դեմս իշխանության բոլոր ճյուղերի, քաղաքացիական հասարակությունը՝ քաղաքացիները, հասարակական տարբեր միավորումները, ներառյալ՝ հասարակական կազմակերպությունները, միությունները և այլն: Այդ պայքարում բոլոր նշված մասնակիցները կարող են ունենալ ակտիվ կամ պասիվ դիրք, որը պայմանավորված է բազմաբնույթ գործոններով: Կոռուպցիայի պայքարի արդյունավետությունը պայմանավորված է մի կողմից՝ իշխանությունների կողմից այդ պայքարն իրականացնելու քաղաքական կամքով, և մյուս կողմից՝ քաղաքացիական հասարակության ակտիվ դիրքորոշմամբ: Քաղաքացիական հասարակության ինստիտուտները երկրի հասարակական կյանքում ձեռք չեն բերել ներգործության համար անհրաժեշտ ակտիվ լծակներ:

*Ի՞նչ է իրենից ներկայացնում քաղաքացիական հասարակությունը:* Քաղաքացիական հասարակությունն իր մեջ ներառում է այն կազմակերպություններն ու կառույցները, որոնք տարանջատված են պետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններից, սակայն համագործակցում են նրանց հետ տարբեր միջոցներով ու եղանակներով: Այսպիսով, քաղաքացիական հասարակությունը դա համախումբն է այն կազմակերպությունների ու կառույցների, որոնք դուրս են պետական ապարատի ներգործությունից: Ալեքս դե Տոկվիլը նշում է, որ այն դեպքում,

երբ քաղաքացիներն ակտիվ մասնակցում են հանրային կյանքին, նրանք ակնկալում են իրենց իշխանություններից բարձր չափաորոշիչների պահպանում և կամովին ենթարկվում են այն կանոններին, որոնք իրենք են սահմանել<sup>1</sup>: Անտեսելով քաղաքացիական հասարակությանը՝ իշխանությունները ոչ միայն խոչընդոտում են ժողովրդավարությանը, այլ նաև իր նկատմամբ բնակչության վստահությանը:

Քաղաքացիական հասարակությունն ունի գիտելիքներ ու որոշակի կարողություններ պայքարելու կոռուպցիայի դեմ, ընդ որում, այդ հնարավորություններից հաճախ գուրկ են իշխանությունները: Նման պայքարը բխում է քաղաքացիական հասարակության շահերից, քանի որ ինքն է հանդիսանում դրա զուրկ:

Իշխանությունները, գործարար ոլորտը և քաղաքացիական հասարակությունը կազմում են հարաբերությունների այն եռանկյունին, որը կանխորոշում է հակակոռուպցիոն պայքարի արդյունավետությունը: Կոռուպցիան կարող է արմատներ արձակել այդ եռանկյունու երեք բևեռներում: Այդ իսկ առումով հակակոռուպցիոն արդյունավետ պայքարը կարող է իրականացվել այդ երեք կողմերի մասնակցությամբ: Իշխանությունները պարտավոր են ապահովել քաղաքացիական հասարակության գործունեության հսմար անհրաժեշտ օրենսդրական բազան՝ խոսքի ազատությունը, ոչ կառավարական կազմակերպությունների ստեղծման և գործունեության հնարավորությունը:

Քաղաքականության հարցերի շուրջ որոշումները պետք է կայացվեն ներքին և հանրային քննարկումների արդյունքում, խուսփելով դրանց ընդունումը սահմանափակ թվով պետական ծառայողների կողմից՝ առանց լուրջ վերահսկողության: Քաղաքական որոշումների ընդունումը չպետք է մարդկանց փոքրաթիվ խմբի մենաշնորհի դառնա, իսկ որոշումների հիմքում պետք է դրվի ամբողջ հանրության բարեկեցության գաղափարը: Կառավարության ներսում քաղաքականության մշակման վրա թափանցիկ և պրոֆեսիոնալ աշխատող փորձագետների խմբի գոյությունը կհանգեցնի պետության ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը և նվազագույնի կհասցնի կոռուպցիոն ռիսկը, ապահովելով արդյունավետ գոյծընթաց ու դրանում քաղաքացիական հասարակության մասնակցությունը: Հանրությանը պետք է ներգրավել քաղաքականության մշակման գործընթացում՝ կանոնավոր ֆորումների, խորհրդակցությունների միջոցով, ինչպես ներկայացուցչական խմբերի հետ ուղղակի հանդիպումների, այնպես էլ անկախ փորձագետների միջոցով: Դրանով կբարձրանա իրագործվող քաղաքականության որակն ու արդյունավետությունը:

---

<sup>1</sup>Putman, Robert D., Making Democracy Work. P. 89: цитата из Alexis De Toqueville. *Democracy in America*. P.513-514.

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Եվրոպական պայմանագրեր  
ETS թիվ 173

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԱԶԱՅՆԱԳԻՐ  
Ստրասբուրգ, 27 հունվարի, 1999 թ.:

Նախարան

Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունները և ներքուստորագր-  
յալ մյուս պետությունները

Համարելով, որ Եվրոպայի Խորհրդի նպատակն իր անդամների  
մեջ է՛լ ավելի մեծ միասնականության նվաճումն է,

Գնահատելով առյժմևհա Համաձայնագիրը ստորագրող մյուս երկրնե-  
րի հետ համագործակցության զարգացման արժեքավորությունը,

Համոզված լինելով քրեական իրավունքի բնագավառում  
կոռուպցիայից հասարակության պաշտպանությանն ուղղված  
ընդհանուր քաղաքականության իրականացման առաջնայնու-  
թյան անհրաժեշտության մեջ, ներառելով համապատասխան օ-  
րենսդրության և նախազգուշական միջոցների ընդունումը,

Ընդգծելով, որ կոռուպցիան սպառնում է իրավունքի գե-  
րիշխանությանը, ժողովրդավարությանն ու մարդու իրավունք-  
ներին, վիժեցնում է այդպիսի կառավարումը, անաչառու-  
թյունն ու սոցիալական արդարությունը, խախտում է մրցակցու-  
թյունը, խոչընդոտում է տնտեսական զարգացմանը, վտանգի է  
ենթարկում ժողովրդավարական ինստիտուտների կայունու-  
թյունն ու հասարակության բարոյական հիմքերը,

Համարելով, որ կոռուպցիայի դեմ գործուն պայքարը քրեական բնագավառում պահանջում է միջազգային արագ և լայն համագործակցություն,

Ռեզոնելով վերջին դեպքերը, որոնք ավելի են նայաստում միջազգային փոխընթացման ու համագործակցությանը, ներառյալ՝ ՄԱԿ-ը, Համաշխարհային Բանկը, Միջազգային Արտաբժույթային Հիմնադրամը, Համաշխարհային Առևտրային Կազմակերպությունը, Եվրոպական Համագործակցության և Զարգացման Կազմակերպությունն ու Եվրոպական Միության Գործողությունները,

Հաշվի առնելով կոռուպցիայի դեմ գործողությունների Ծրագիրը, որն ընդունվել է Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոնֆտեի կողմից 1996 թ. նոյեմբերին անմիջապես եվրոպական արդարադատության նախարարների XIX Կոնֆերանսի առաջարկներից հետո (Վալետտա, 1994),

Այդ առիթով հիշելով Եվրոպայի Խորհրդի կոռուպցիայի դեմ ուղղված գործունեության մեջ ոչ անդամ երկրների մասնակցության կարևորության մասին,

Հետագայում հիշելով, որ եվրոպական սրդարադատության նախարարների կողմից իրենց XXI Կոնֆերանսում (Պրահա, 1997թ.) ընդունված թիվ 1 Բանաձևը առաջարկել է կոռուպցիայի դեմ գործողությունների Ծրագրի անվերապահ կատարում և կոչ է արել, մասնավորապես, վաղօրոք ընդունել քրեական իրավունքի մասին համաձայնագիր, որն ապահովի կոռուպցիայի մեջ կորուքինացված մերկացում, նման իրավասխատուների դատական հետապնդման համագործակցության ուժեղացում, ինչպես նաև՝ գործուն վերահսկիչ մեխանիզմ, որը հավասար հիմունքներով բաց լինի ինչպես անդամ, այնպես էլ ոչ անդամ երկրների համար,

Հիշելով, որ Եվրոպայի Խորհրդի պետությունների և կստավարությունների դեկավարները որոշել են Ստրասբուրգում իրենց Երկրորդ հանդիպման ժամանակ հոկտեմբերի 10-ին և 11-ին հասնել ընդհանուր պատասխանի՝ ի հակակշիռ աճող կոռուպցիայի նետած մարտահրավերի, և ընդունել են Գործողությունների Ծրագիր, որը նպատակ ունի կոռուպցիայի դեմ պայքարում համագործակցության զարգացում, ներսոյալ՝ կազմակերպված հանցավորության ու փողի լվացման հետ առնչվող

նրա կապերը, և նախարարների կոմիտեին հանձնարարել են, ի թիվս այլոց, ապահովել կոռուպցիայի դեմ ուղղված գործողությունների Ծրագրին համապատասխան միջազգային իրավական գործիքների արագ ավարտում,

Ավելին, հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարի Քսան ղեկավարող սկզբունքների վերաբերյալ (97) 24 Բանաձևը, որն ընդունվել է 1997 թ. նոյեմբերի 6-ին նախարարների կոմիտեի 101-րդ Նստաշրջանում, ընդգծում է կոռուպցիայի դեմ պայքարի Գործողությունների Ծրագրին համապատասխան միջազգային իրավական գործիքների մշակման շուտափույթ ավարտման անհրաժեշտությունը,

Նկատի ունենալով 1998 թ. մայիսի 4-ին նախարարների կոմիտեի իր 102-յոժ Նստաշրջանում ընդունած (98)7 Բանաձևը, որը հավանություն է տվել «Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի» (GRECO) մասնակի և ընդլայնված ձևավորմանը, և որը նպատակ ունի կատարելագործել կոռուպցիայի դեմ պայքարելու իրենց անդամների ունակությունը՝ այդ բնագավառում իրենց պարտավորությունների կատարումն ապահովելու ճանապարհով,

Համաձայնության եկան հետևյալի մասին.

## ԳԼՈՒԽ 1. ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

### *Հոդված 1. Տերմինների կիրառումը*

#### *Սույն Համաձայնագրի նպատակներով.*

ա) «Պետական պաշտոնատար անձ» տերմինը Պետության ազգային օրենսդրության մեջ վկայակոչվող «պաշտոնական անձ», «պետական ծառայող», «քաղաքապետ», «նախարար» կամ «դատավոր» տերմինների բնորոշումն է, որտեղ տվյալ անձն իրականացնում է այդ պարտականությունները և կիրառելի է քրեական օրենսդրության մեջ,

բ) վերն ընդգծված «Դատավոր» տերմինը պետք է ներառի դատախազներին և դատավորական պաշտոններ զբաղեցնող անձանց,

գ) այլ Պետության պետական պաշտոնատար անձի մասնակցությամբ դատավարության դեպքում, մեղադրող Պե-

տությունը պետական պաշտոնատար անձի բնորոշումը կարող է կիրառել նյնքանով, որքանով այդ բնորոշումը համընկնում է իր ազգային օրենսդրությանը,

դ) «Իրավաբանական անձ» տերմինը պետք է նշանակի ցանկացած կազմակերպություն, որն ունի ազգային օրենսդրությանը համապատասխան նման կարգավիճակ, բացի պետական պարտականություններ իրականացնող Պետությունները կամ պետական մարմինները և միջազգային կազմակերպությունները:

## **ԳԼՈՒԽ 2. ՄԻՋՈՅՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ԸՆԴՈՒՆԵԼ ԱԶ-ԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ**

*Հոդված 2. Տեղական պետական պաշտոնատար անձանց ակտիվ կաշտակերությունը*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն ազգային օրենսդրության մեջ որպես քրեորեն պատժելի ալարք ճանաչել դիտավորյալ կատարած, խոստման, առաջարկության կամ հանձնման ճանապարհով, ում կողմից էլ որ լինի, անմիջապես կամ անուղղակի առաջարկներ, ցանկացած ոչ իրավական պետական ցանկացած պաշտոնատար անձին, անմիջապես իր կամ ինչ-որ մեկի համար առավելություններ տրամադրել, որպեսզի այդ պաշտոնատար անձը գործի կամ չգործի իր պարտականությունների կատարման ընթացքում:

*Հոդված 3. Պետական պաշտոնատար անձանց պասիվ կաշտակերությունը*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն ազգային օրենսդրության մեջ որպես քրեորեն պատժելի ալարքներ ճանաչելու պետական ցանկացած պաշտոնատար անձի կողմից դիտավորյալ արված պահանջը կամ ստացումը անմիջապես կամ կողմնակի ճանապարհով, ցանկացած ոչ իրավական առավելություն տալ պաշտոնատար ցանկացած անձին, իր համար անձամբ կամ էլի ինչ-որ մեկի համար, կամ նվիրատվության ընդունում կամ նմանատիպ առավելության տրամադրման խոստում

այն նպատակով, որ այդ պաշտոնատար անձը գործի կամ չգործի իր պայտականությունների կատարման ընթացքում:

*Հոդված 4. Ազգային Պետական ժողովների անդամների կաշառակերությունը*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն ազգային օրենսդրության մեջ որպես քրեորեն պատժելի ճանաչել 2-րդ և 3-րդ հոդվածներում հիշատակված այն արարքները, երբ դրանցում մասնակից է օրենսդրական կամ վարչական իրավասությունների կատարող պետական ցանկացած ժողովի անդամ հանդիսացող ցանկացած անձ:

*Հոդված 5. Օտարերկրյա Պետական պաշտոնատար անձանց կաշառակերությունը*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն ազգային օրենսդրության մեջ որպես քրեորեն պատժելի ճանաչել 2-րդ և 3-րդ հոդվածներում հիշատակված այն արարքները, որոնցում մասնակից է ցանկացած այլ Պետության պետական պաշտոնատար անձ:

*Հոդված 6. Օտարերկրյա Պետական ժողովների անդամների կաշառակերությունը*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն ազգային օրենսդրության մեջ որպես քրեորեն պատժելի ճանաչել 2-րդ և 3-րդ հոդվածներում հիշատակված այն արարքները, որոնցում մասնակից է ցանկացած այլ պետության մեջ օրենսդրական կամ վարչական պարտականություններ կատարող պետական ցանկացած ժողովի անդամ հանդիսացող ցանկացած անձ:

*Հոդված 7. Ակտիվ կաշառակերությունը մասնավոր սեկտորում*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն ազգային օրենսդրության մեջ որպես քրեորեն պատժելի ճանաչել ձեռնարկատիրական գործունեության իրականացման ժամանակ դի-

տավոյրյալ կատարած արարքները, խոստման ճանապարհով առաջարկի ուղղակի կամ անուղղակի կերպով ցանկացած անձանց ցանկացած ոչ իրավական առավելությունների փոխանցումը, որոնք ղեկավարում են մասնավոր սեկտորի ձեռնարկությունները կամ աշխատում են այնտեղ ցանկացած այլ պաշտոնում, իրենց կամ էլի ինչ-որ մեկի համար, այն նպատակով, որպեսզի նրանք գործեն կամ չգործեն՝ խախտելով իրենց պարտավորությունները:

*Հոդված 8. Պասսիվ կաշտակերությունը մասնավոր սեկտորում*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն ազգային օրենսդրության մեջ որպես քրեորեն պատժելի ճանաչել ձեռնարկատիրական գործունեության իրականացման ժամանակ դիտավորյալ կատարած արարքները, անմիջապես կամ կողմնակի կերպով մասնավոր սեկտորի ձեռնարկությունները ղեկավարող կամ այնտեղ ցանկացած պաշտոնում աշխատող ցանկացած անձանց կողմից իրենց կամ էլի ինչ-որ մեկի համար ցանկացած ոչ իրավական առավելությունների փոխանցումը, կամ դրանց խոստումների պահանջման կամ ստացման ճանապարհով, կամ նվիրատվության կամ նման տիպի առավելության ստացում այն նպատակով, որպեսզի նրանք գործեն կամ չգործեն՝ խախտելով իրենց պարտավորությունները:

*Հոդված 9. Պաշտոնատար անձանց կաշտակերությունը Միջազգային կազմակերպություններում*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն ազգային օրենսդրության մեջ որպես քրեորեն պատժելի ճանաչել 2-րդ և 3-րդ հոդվածներում հիշատակված այն արարքները, որոնցում մասնակից է ցանկացած պետական, միջազգային կամ վերազգային կազմակերպության կամ մարմնի, որի անդամ է հանդիսանում տվյալ Կողմը, պաշտոնատար անձ կամ ներքին կանոնների շրջանակներում մեկնաբանվող ցանկացած վարձու աշխատակից և ցանկացած անձ, անկախ այն բանից, երկրորդական է թե ոչ, որն իրականացնում է այդպիսի պաշտոնատար անձանց կամ գործակալների պարտականություններին համապատասխանող պարտավորություններ:



*Հոդված 10. Միջազգային խորհրդարանական նստաշրջանների անդամների կաշառակերությունը*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն ազգային օրենսդրության մեջ որպես քրեորեն պատժելի ճանաչել 4-րդ հոդվածում հիշատակված այն արարքները, որոնցում մասնակից են միջազգային կամ վերազգային կազմակերպությունների, որոնց անդամ է հանդիսանում տվյալ կողմը, ցանկացած անդամներ:

*Հոդված 11. Միջազգային դատարանների, դատավորների և պաշտոնատար անձանց կաշառակերությունը*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն ազգային օրենսդրության մեջ որպես քրեորեն պատժելի ճանաչել 2-րդ և 3-րդ հոդվածներում հիշատակված այն արարքները, որոնցում մասնակից են ցանկացած միջազգային դատարանի, որի իրավազորությունը ճանաչվել է տվյալ Կողմի կողմից, դատավորական պաշտոններ զբաղեցնող ցանկացած անձինք, կամ պաշտոնատար անձինք:

*Հոդված 12. Առևտուր՝ ազդեցությանը*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն ազգային օրենսդրության մեջ որպես քրեորեն պատժելի ճանաչել դիտավորյալ կատարած արարքները, խոստման, հանձնման կամ նվիրատվության ճանապարհով, ուղղակի կամ անուղղակի կերպով, ցանկացած անձին ցանկացած ոչ իրավական առավելությունների տրամադրումը, ով հաստատում է, ով ունակ է ոչ իրավական ազդեցություն ցուցաբերել ցանկացած անձի որոշման ընդունման համար, որոնք հիշատակված են 2-րդ, 4-ից 6-րդ և 9-ից 11-րդ հոդվածներում, անկախ այն բանից, թե ում համար է նախատեսված ոչ իրավական առավելությունը, իր, թե էլի ինչ-որ մեկի համար, ինչպես նաև խնդրանքը, նվիրատվության ստացումը կամ ընդունումը, կամ նմանատիպ առավելության խոստումը այդ ազդեցության համար, անկախ այն բանից, ազդեցությունը ցուցաբերված է թե ոչ և հանգեցնող է այդպիսի ենթադրվող ազդեցությունը ցանկալի արդյունքի:

*Հոդված 13. Կոռուպցիայից ստացված եկամուտների լվացում*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն ազգային օրենսդրության մեջ որպես քրեորեն պատժելի ճանաչել այնպիսի արարքներ, որոնք հիշատակված են Եվրոպայի Խորհրդի փողի լվացման, հանցագործության խուզարկությունից ստացված եկամուտների առգրավման մասին Համաձայնագրում: (ETS թիվ 141), համաձայն 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի Համաձայնագրում հիշատակված պայմանների, երբ հիմնական իրավախախտումը բաղկացած է ցանկացած իրավախախտումներից, որոնք ճանաչված են սույն Համաձայնագրի 2-ից 12-րդ հոդվածներին համապատասխան այնքանով, որքանով որ Կողմը այդ իրավախախտումների համար վերապահումներ և հայտարարագրեր չի արել, կամ նման իրավախախտումները փողի լվացման մասին իր օրենսդրության տեսակետից ծանր չի համարել:

*Հոդված 14. Իրավախախտումներ՝ կապված հաշվապահական հաշվառման հետ*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել ազգային օրենսդրության մեջ ճանաչել քրեական կամ այլ սանկցիաների ենթակա ներքուշարադրյալ գործողությունները կամ անգործողությունները, որոնք կատարված են դիտավորյալ, 2-ից 12-րդ հոդվածներում հիշատակված իրավախախտումների կատարման, կոծկման, կամ քողարկման նպատակով, այնքանով, որքանով որ յուրաքանչյուր Կողմ արել է իր վերապահումները կամ հայտարարագրերը:

ա) հաշիվ-ապրանքագրի կամ հաշվապահական այլ փաստաթղթի կամ գրառման կազմում կամ օգտագործում, որոնք պարունակում են կեղծ կամ ոչ լրիվ տեղեկություններ,

բ) վճարման կատարման մասին անօրինական գրառման կատարում:

*Հոդված 15. Գործակցություն*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել ազգային օրենսդրության մեջ քրեորեն պատժելի ճանաչել այն ա-

լարքները, որոնք նպաստում կամ պրոդում են սույն Համաձայնագրի հողվածներին համապատասխան ճանաչված ցանկացած քրեորեն պատժելի արարքների կատարմանը:

*Հոդված 16. Անձեռնմխելիություն*

Սույն Համաձայնագրի պայմանները չպետք է շոշափեն անձեռնմխելիության վերացմանը վերաբերող Պայմանագրի, Արձանագրության կամ Օրենքի, ինչպես նաև գործադիր տեքստերի պայմանները:

*Հոդված 17. Իրավագործություն*

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է լնդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են քրեորեն պատժելի իրավախախտումների նկատմամբ իրավագործություն սահմանելու համար, համաձայն սույն Համաձայնագրով ճանաչված 2-14 հոդվածների, որտեղ.

ա) իրավախախտումը կատարվել է պետության ուղջ տարածքում կամ դրա որևէ մասում,

բ) հանցագործը այդ պետության քաղաքացիներից մեկն է, պետական պաշտոնատար անձանցից մեկը, կամ ազգային պետական ժողովներից մեկի անդամը,

գ) հանցագործությանը մասնակից է նրա պետական պաշտոնատար անձանցից կամ ազգային պետական ժողովների անդամներից որևէ մեկը, կամ 9 - 11 հոդվածներում հիշատակված ցանկացած անձ, որը միաժամանակ այդ պետության քաղաքացին է:

2. Յուրաքանչյուր պետություն իր վավերացման գրերի ստորագրման կամ հանձնման ժամանակ, որը հռչակագրի ձևով հասցեագրված է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարին, կարող է հայտարարել, որ իրեն է իրավունք վերապահում չկիրառել կամ միայն կոնկրետ դեպքերում կամ հանգամանքներում կիրառել սույն Հոդված 1-ին բ) և գ) կետերում կամ նրա ցանկացած մասում շարադրված իրավագործ կանոն-ները:

3. Եթե Կողմը օգտվել է սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված վերապահման այդ հնարավորությունից, ապա Կողմը պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Համաձայնագրի համաձայն քրեորեն պատժելի ճանաչված իրավախախտման վրա իրավասության սահմանման համար, այն դեպքերում, երբ ենթադրվող հանցագործը գտնվում է Պետության տարածքում, և Պետությունը չի հանձ-

նում նյաւն մյուս Կողմին, նույնիսկ հանձնման մասին պահանջից հետո, բացառապէս ելնելով հանցագործի ազգային պատկանելութիւնից:

4. Համաձայնագիրը չի բացառում քրեական որևէ հնարավորութիւն, որն իրականացնում է Կողմը՝ համաձայն իր ազգային օրենսդրութեան:

*Հոդված 18. Կորպորատիվ (մեկուսախմբակային) պատասխանատվութիւն*

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի օրենսդրական և այլ այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են իրավաբանական անձանց պատասխանատվութեան ենթարկելն ապահովելու համար, քրեական այնպիսի իրավախախտումների համար, ինչպիսիք են՝ ակտիվ կաշառակերութիւնը, ազդեցութեամբ կամ փողի լվացմամբ առևտուրը, որոնք, համաձայն սույն Համաձայնագրի, ճանաչված են ֆիզիկական ցանկացած անձի կողմից իր շահի համար կատարած, ոչը գործել է կամ ինքնուրույն, կամ իրավաբանական անձի մարմնի կազմում, և, ի դեմս տվյալ իրավաբանական անձի, զբաղեցնում էր ղեկավար պաշտոն հետևյալի հիման վրա.

ա) իրավաբանական անձի ներկայացուցչական իրավասութիւնների,

բ) իրավաբանական անձի ներսում վերահսկողական իրավասութիւնների, ինչպէս նաև, վերջ նշված իրավախախտումների դեպքում, տվյալ ֆիզիկական անձին որպէս մասնակից կամ դրոյիչ պատասխանատվութեան կանչելու նպատակով:

2. Բացի արդեն 1-ին կետում նախատեսված դեպքերի, յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի անհրաժեշտ միջոցներ, որպէսզի ապահովի իրավաբանական անձի պատասխանատվութեան կանչվելը այն դեպքերում, երբ 1-ին կետում նշված ֆիզիկական անձի կողմից հսկողութեան բացակայութիւնը հնարավոր է դարձրել 1-ին կետում հիշատակված այդ իրավաբանական անձի օգտին, քրեորեն պատժելի իրավախախտումների կատարումը այդ իրավաբանական անձի միջոցով:

3. Համաձայն 1-ին և 2-րդ կետերի, իրավաբանական անձի պատասխանատվութիւնը չպետք է բացառի քրեական դատավարութիւնը ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնք կատարել են 1-ին կետում հիշատակված հանցանքներ կամ դրոյել, մասնակից են եղել դրանց:

### *Հոդված 19. Սանկցիաների և միջոցառումներ*

1. Հաշվի առնելով քրեական հանցագործությունների ծանր բնույթը, որոնք ճանաչված են սույն Համաձայնագրի համապատասխան, յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի 2-ից 14-րդ հոդվածների համապատասխան ճանաչված քրեական այն հանցագործությունների նկատմամբ գործուն համամասնական և արգելիչ սանկցիաների և միջոցառումների, ներառյալ՝ մի քանի անձանց կողմից կատարած արարների համար նախատեսված ազատազրկում, որոնք կարող են հանգեցնել էքստրադիցիայի:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է երաշխավորի, որ 18-րդ - հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համապատասխան պատասխանատվության ենթարկված իրավաբանական անձինք պետք է ենթարկվեն արդյունավետ, համամասնական և արգելող քրեական ու ոչ քրեական սանկցիաների, ներառյալ՝ դրամական սանկցիաները:

3. Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ, որոնք իրեն հնարավորություն կտան առգրավել կամ այլ եղանակով զրկել միջոցներից կամ քրեական իրավախախտումներից ստացած եկամուտներից, որոնք ճանաչված են սույն Համաձայնագրի համապատասխան, կամ զրկել սեփականությունից, որի արժեքը համապատասխանում է այդ եկամուտներին:

### *Հոդված 20. Հատուկ իրավասություններ*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի անհրաժեշտ միջոցառումներ, որպեսզի անձինք կամ կազմակերպությունները մասնագիտանան կոռուպցիայի դեմ պայքարում: Նրանք պետք է տվյալ Կողմի իրավաբանական համակարգերի հիմնարար սկզբունքներին համապատասխան անհրաժեշտ անկախություն ունենան, որպեսզի ի վիճակի լինեն իրենց պարտականությունները կատարել արդյունավետ և ցանկացած ոչ իրավական ճնշումից անկախ: Կողմը պետք է երաշխավորի, որ այդպիսի մարմինների անձնակազմը համապատասխան պատրաստվածություն և ֆինանսական ռեսուրսներ ունի իր առջև դրված խնդիրները լուծելու համար:

*Հոդված 21. Համագործակցություն ազգային մարմինների միջև*

Յուրաքանչյուր Կողմ պետք է բնդունի անհրաժեշտ միջոցառումներ, երաշխավորելու համար այն, որ պետական պաշտոնատար անձինք, ինչպես նաև ցանկացած պաշտոնատար անձ, համաձայն ազգային օրենսդրության, համագործակցեն այն մարմինների հետ, որոնք պատասխանում են քրեական իրավախախտումների հետաքննության և դատական հետապնդման համար.

ա) վերջիններիս, իրենց նախաձեռնությամբ տեղեկատվություն տալու ճանապարհով, երբ խելամիտ հիմքեր կան ենթադրելու, որ կատարվել է 2-ից 14-րդ հոդվածներին համապատասխան ճանաչված քրեական իրավախախտումներից ցանկացածը, կամ՝

բ) իրավապահ մարմինների պահանջով անհրաժեշտ ողջ լրատվություն տրամադրելու ճանապարհով:

*Հոդված 22. Վկաների և արդարադատության հետ համագործակցող անձանց պաշտպանություն*

Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցառումներ՝ ապահովելու գործուն և պատշաճ պաշտպանությունն այն անձանց.

ա) ովքեր հաղորդում են 2-ից 14-րդ հոդվածներին համապատասխանող քրեական իրավախախտումներ կամ համագործակցում են քննչական և դատախազական մարմինների հետ այլ կերպ,

բ) ովքեր հանդես են գալիս որպես վկա և վկայություն են տալիս տվյալ իրավախախտման վերաբերյալ:

*Հոդված 23. Միջոցառումներ հանցանշանների հավաքման և եկամտոտների բռնագրավման սլարգեցման վերաբերյալ*

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի օրենսդրական և այլ միջոցառումներ, ներառյալ՝ ազգային օրենսդրությանը համապատասխան քննչական հատուկ եղանակների կիրառումը, որոնք հնարավորություն են տալիս հեշտացնել սույն Համաձայնագրի 2-ից 14-րդ հոդվածներին համապատասխանող քրեական իրավախախտումների վերաբերյալ հանցանշանների հավաքումն ու նույնականացումը, հայտնաբերել ու բռնագրավել միջոցները և ստեղծել կաշառակերությունից ստացված և-

կամուտները կամ սեփականությունը, որի արժեքը համապատասխանում է այդ եկամուտներին՝ ենթակա սույն Համաձայնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետում շարադրվածին:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցառումներ, զինելու իր դատարանները կամ իրավասու այլ մարմիններ լիազորություններով, որոնք կբույստորեն հրամայել՝ ներկայացնելու կամ հանձնելու քանկային, ֆինանսական կամ առևտրային փաստաթղթեր՝ սույն հոդվածի 1-ին կետում հիշատակվող գործողությունների իրականացման նպատակով:

3. Բանկային գաղտնիքը չպետք է խոչընդոտի սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նախատեսված միջոցառումներին:

### ԳԼՈՒԽ 3. ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ, ՆԿԱՏՄԱՄԻ

#### *Հոդված 24. Վերահսկողություն*

Պետությունների խումբն ընդդեմ կաշառակերության (GRECO) պետք է վերահսկի սույն Համաձայնագրի կատարումը:

### ԳԼՈՒԽ 4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

#### *Հոդված 25. Ընդհանուր սկզբունքներ և միջոցառումներ միջազգային համագործակցության վերաբերյալ*

1. Կողմերը միմյանց հետ պետք է համագործակցեն քրեական գործերի վերաբերյալ միջազգային համագործակցության համապատասխան միջազգային գործիքների պլյուքերի կամ միակ կամ փոխադարձ օրենսդրության հիման վրա համաձայնեցված միջոցառումների համաձայն և նրանց ազգային օրենսդրությանը համապատասխան, որը թույլատրում է սույն Համաձայնագրին համապատասխանող քրեական իրավախախտումների լայնածավալ հետաքննություն և դատական հետապնդում:

2. Այնտեղ, որտեղ չկա Կողմերի միջև ուժի մեջ մտած միջազգային գործիք կամ միջոցառում, որի մասին նշված է 1-ին կետում, պետք է կիրառվեն 26-ից 31-րդ հոդվածները:

3. Սույն գլխի 26-ից 31-րդ հոդվածները պետք է կիրառվեն նաև այնտեղ, որտեղ դրանք առավել նախընտրելի են 1-ին կետում հիշատակված միջազգային գործիքների կամ միջոցառումների հոդվածներից:

## *Հոդված 26. Փոխօգնություն*

1. Կողմերը միմյանց պետք է թույլատրեն փոխօգնության ամենալայն միջոցները այն իշխանությունների կողմից արված հարցումները աբազ քննելու եղանակով, ովքեր, համաձայն իրենց ազգային օրենսդրության, լիազորված են սույն Համաձայնագրին համապատասխանող քրեական իրավախախտումների համար հետաքննություն վարել կամ դատական հետապնդման ենթարկել:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն, փոխադարձ իրավական օգնությունը կարող է մերժվել, եթե Կողմը գտնում է, որ հարցման բավարարումը կվնասի իր հիմնադրական շահերին, ազգային անկախությանը կամ հասարակական կարգին:

3. Համաձայն սույն գլխի, Կողմերը չպետք է վկայակոչեն բանկային գաղտնիքը՝ որպես համագործակցության մերժման հիմնավորում: Այնտեղ, որտեղ դա պահանջում է ազգային օրենսդրությունը, Կողմը կարող է պահանջել, որպեսզի համագործակցության հարցումը, որը ենթադրում է բանկային գաղտնիքի վերացում, վավերացվի դատավորի կամ դատական այլ պաշտոնյաների, ներառյալ՝ դատախազների կողմից. այդ բոլոր անձինք գործում են քրեական իրավախախտումների դեպքում:

## *Հոդված 27. Էքստրադիցիա*

1. Սույն Համաձայնագրին համապատասխանող քրեական իրավախախտումները պետք է համարվեն իրավախախտումներ, որոնց համար ցանկացած պայմանագրում սահմանվում է էքստրադիցիա հանցագործների հանձնման մասին Կողմերի մեջ և նրանց շրջապատում: Կողմերը պարտավորվում են ներառնել նման իրավիճակները որպես իրավախախտումներ, որոնց համար ցանկացած պայմանագրում սահմանվում է էքստրադիցիա կողմերի մեջ և նրանց շրջապատում:

2. Եթե էքստրադիցիան պայմանագրի գոյության պայման դարձնող Կողմը հանձնման մասին հարցում է ստանում մյուս Կողմից, որի հետ չունի հանցագործների հանձնման պայմանագիր, ապա այդ Կողմը սույն Համաձայնագիրը կարող է դիտարկել որպես հանձնման համար իրավական հիմք՝ սույն Համաձայնագրին համապատասխանող ցանկացած քրեական իրավախախտումների նկատմամբ:

3. Այն Կողմերը, որոնք էքստրադիցիան չեն դարձնում պայմանագրի գոյության պայման, սույն Համաձայնագրին հա-



մապատասխանող քրեական իրավախախտումները պետք է ընդունեն որպես իրավախախտումներ, որոնց համար սահմանված է միմյանց միջև էքստրադիցիա:

4. էքստրադիցիան պետք է անցկացվի հարցում արված Կողմի օրենսդրությամբ նախատեսված կամ հանցագործների հանձնման պայմանագրերի հետ կիրառելի պայմաններով, ներառյալ՝ հիմքերը, որոնց համար հարցում արած Կողմը կարող է կրաժարվել էքստրադիցիայից:

5. Եթե սույն Համաձայնագրին համապատասխանող քրեական իրավախախտման համար էքստրադիցիան մերժվել է բացառապես հետախուզվող անձի ազգային պատկանելության հիման վրա կամ այն պատճառով, որ հարցում արած Կողմը գտնում է, որ իրավասություն ունի տվյալ իրավախախտման նկատմամբ, ապա հարցում արած Կողմը պետք է գործը, դատական հետապնդման նպատակով, ներկայացնի իր իրավասու մարմիններին, եթե այլ պայմանավորվածություն չկա հարցում արած Կողմի հետ, և պետք է վերջնական որոշման մասին, հարկավոր ժամկետում, զեկուցի հարցում անող Կողմին:

#### *Հոդված 28. Պատահական յրատվություն*

Առանց վնաս հասցնելու սեփական հետաքննություններին կամ դատական գործընթացներին, Կողմը կարող է առանց նախնական հարցման մյուս Կողմին փաստերի մասին տեղեկություն ուղարկել, եթե գտնի, որ նման տեղեկության բացահայտ դառնալը կարող է օգնել այն ստացող Կողմին սույն Համաձայնագրին համապատասխանող կամ համաձայնության սույն գլխում մյուս Կողմից հարցում առաջ բերելու ընդունակ քրեական իրավախախտումների վերաբերյալ հետաքննության հատուցման կամ վարման, կամ էլ դատական գործընթացի դեպքում:

#### *Հոդված 29. Կենտրոնական մարմին*

1. Կողմերը պետք է նշանակեն կենտրոնական մարմին, կամ, անհրաժեշտության դեպքում՝ կենտրոնական մարմիններ, որոնք պետք է պատասխանատու լինեն, համաձայն սույն Համաձայնագրի արված հարցումների, ուղարկման և սրատասխանների ստացման, նման հարցումների կատարման կամ դրանց կատարման նպատակով իրավասու մարմիններին փոխանցման համար:

2. Կողմերից յուրաքանչյուրը վավերագրերի ստորագրման, ավանդատվության, ընդունման, հաստատման կամ միավորման ժամանակ պետք է Նվրուպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարին փոխանցի սույն հոդվածի 1-ին կետի կատարման նպատակով նշանակված մարմինների անուններն ու հասցեները:

### *Հոդված 30. Ուղիղ կապ*

1. Կենտրոնական մարմինները միմյանց հետ պետք է ուղղակիորեն կապված լինեն:

2. Արտակարգ իրավիճակներում փոխօգնության մասին հարցումները կամ տեղեկությունները կարող են առաքվել ուղղակիորեն դատական մարմիններ, ներառյալ՝ հարցում կատարող Կողմի դատախազների կողմից հարցում արվող Կողմի համապատասխան մարմիններին: Նման դեպքերում, միասնական, հարցում անող Կողմի կենտրոնական մարմնի միջոցով պատճենը պետք է ուղարկվի հարցում արվող Կողմի կենտրոնական մարմին:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-յա կետերի համաձայն, ցանկացած հարցում կամ տեղեկություն կարող է հաղորդվել Ինտերպոլի, քրեական ոստիկանությունների միջազգային կազմակերպությունների միջոցով:

4. Այն դեպքերում, երբ հարցումը կամ տեղեկությունը արված է սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն, և տվյալ մարմինը իրավասու չէ այդ հարցով զբաղվելու, հարցումը պետք է հասցեագրվի համապատասխան ազգային մարմին և այդ մասին ուղղակիորեն տեղեկացվի հարցում անող Կողմին:

5. Սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն, հարցումներն ու տեղեկությունները, որոնք կապված չեն հարկադրական գոյծությունների հետ, կարող են հարցում անող Կողմի իրավասու մարմիններից ուղղակիորեն փոխանցվել հարցում արվող Կողմի իրավասու մարմիններին:

6. Պետություններից յուրաքանչյուրը վավերագրերի ստորագրման, ավանդատվության, ընդունման, հաստատման կամ միավորման ժամանակ կարող է տեղեկացնի Նվրուպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարին, որ առավել արդյունավետության նպատակով, սույն գլխի համաձայն, հարցումները պետք է ուղարկվեն իր կենտրոնական մարմին:

### *Հոդված 31. Տեղեկություն*

Համաձայն սույն գլխի, հարցում արված Կողմը հարցում անող Կողմին պետք է անմիջապես տեղեկացնի նրա խնդրանքով ձեռնարկված գործողությունների ընթացքի և վերջնական արդյունքի մասին: Նաև հարցում արված Կողմը հարցում անող Կողմին պետք է անհապաղ տեղեկացնի պահանջվող գործողությունների իրագործումը անհնարին դարձնող կամ զգալիորեն հետաձգող ցանկացած հանգամանքի մասին:

### **ԳԼՈՒԽ 5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ**

### *Հոդված 32. Ստորագրելը և ուժի մեջ մտնելը*

1. Սույն Համաձայնագիրը պետք է բաց լինի Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների և դրա մշակմանը մասնակցող ոչ անդամ պետությունների ստորագրման համար: Այդպիսի պետությունների կարող են տալ իրենց համաձայնությունը անբակցված:

ա) ստորագրմամբ, առանց վերապահությունների վավերացման, ընդունման կամ հաստատման վերաբերյալ,

բ) վավերացման ենթակա, ընդունման կամ հաստատման ստորագրմամբ, որին հաջորդում է վավերացումը, ընդունումն ու հաստատումը:

2. Ընդունված, հաստատված և վավերացված համաձայնագրերը պետք է ի պահ տրվեն Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Բարտուղարին:

3. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որը հաջորդում է եռամսյա ժամկետը լրանալու այն թվին, երբ 14 Պետություններ, համաձայն I-ին կետի, իրենց համաձայնությունը տվեցին Համաձայնագրի պայտապիր լինելու վերաբերյալ: Կոռուպցիայի դեմ պետությունների խմբավորման (GRECO) անդամ չհանդիսացող ցանկացած նման Պետություն. Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը, ինքնաբերաբար դառնում է դրա անդամը:

4. Համաձայնագրի պայտապիր լինելու վերաբերյալ հետազայում իր համաձայնությունն արտահայտող և ստորագրած ցանկացած Պետության Համաձայնագիր ուժի մեջ կմտնի եռամսյա ժամկետը լրանալու հաջորդ ամսվա առաջին օրը, երբ այդ Պետությունը, համաձայն I-ին կետի պայմանի, իր համաձայնությունն է տվել Համաձայնագրի պայտապիր լինելու վերաբե-

րյալ: Ստորագրած ցանկացած Պետություն, որը կոռուպցիայի դեմ պետությունների խմբավորման (GRECO) անդամ չէ, վավերագրման պահին, այդ Պետության նկատմամբ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, ինքնաբերաբար դառնում է դրա անդամը:

### *Հոդված 33. Համաձայնագրին միանալը*

1. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո, Եվրախորհրդի նախարարների կոմիտեն, Համաձայնագիրը ստորագրած պետությունների հետ խորհրդակցելով, կարող է Եվրոպական ընկերակցության, ինչպես նաև խորհրդի անդամ չհանդիսացող և Համաձայնագրի մշակմանը մասնակցություն չցուցաբերած ցանկացած Պետության հրավիրել՝ մտնելու Համաձայնագրի մեջ, մեծամասնության կողմից ընդունված, Եվրախորհրդի կանոնադրության 20 դ) հոդվածով նախատեսված և Պետությունների Համաձայնագրով ստորագրած, նախարարների կոմիտեում նստելու լիազորություն ունեցող ներկայացուցիչների միաձայն քվեարկությամբ:

2. Եվրոպական ընկերակցության և այնտեղ մուտք գործող ցանկացած պետության վերաբերյալ, համաձայն վերահիշյալ 1-ին կետի, Համաձայնագիրը ուժի մեջ պետք է մտնի Եվրախորհրդի Գլխավոր Զարտուղարին անդամակցությունների հավատարմագրերի ավանդատվությունների եռամսյա ժամկետը լրանալու հաջորդ ամսվա առաջին օրը: Սույն Համաձայնագիր մուտք գործող Եվրոպական ընկերակցություն և ցանկացած Պետություն ինքնաբերաբար պետք է դառնա կոռուպցիայի դեմ պետությունների խմբավորման (GRECO) անդամ, եթե այդ Պետության նկատմամբ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, մուտքագրման պահին, այդ խմբավորման անդամ չէ:

### *Հոդված 34. Տարածքային կիրարկություն*

1. Ցանկացած Պետություն կարող է վավերագրերի ստորագրման, ավանդատվության, ընդունման, հաստատման կամ մուտք գործելու պահին կանխապայման դնել այն տարածքի կամ տարածքների նկատմամբ, որոնց վրա տարածվում է սույն Համաձայնագիրը:

2. Կողմերից ցանկացածը, ավելի ուշ, Եվրախորհրդի Գլխավոր Զարտուղարին ուղղված հռչակագրի միջոցով կարող է սույն Համաձայնագիրը տարածել հռչակագրում մատնանշ-

ված ցանկացած այլ տարածքում: Այդպիսի տարածքի վերաբերյալ Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Գլխավոր Զարտուղարի կողմից հռչակագրի ստացումից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա 1-ին օրը:

3. Վերոհիշյալ 2 կետերին համապատասխանեցված ցանկացած հռչակագիր, այդ հռչակագրում կանխապայման դրված ցանկացած տարածքի վերաբերյալ, կարող է դուրս բերվել Եվրախորհրդի Գլխավոր Զարտուղարին հասցեագրված ծանուցագրի միջոցով: Դուրս բերվելը պետք է ուժի մեջ մտնի Գլխավոր Զարտուղարի՝ ծանուցագիրը ստանալուց հետո, եռամսյա ժամկետը լրանալու հաջորդ ամսվա առաջին օրը:

### *Հոդված 35. Հարաբերությունները այլ համաձայնագրերի և պայմանագրերի հետ*

1. Սույն Համաձայնագրի չի շոշափում հատուկ հարցերի վերաբերյալ միջազգային բազմակողմանի համաձայնագրերից բխող իրավունքներն ու պարտականությունները:

2. Համաձայնագրի Կողմերը միմյանց հետ կարող են կնքել Համաձայնագրում շոշափվող հարցերի վերաբերյալ երկկողմանի և բազմակողմանի համաձայնագրեր՝ նրա դիրքի անբախանդման կամ լրացման, կամ էլ դրանում դրված սկզբունքների կիրառման պարզեցման նպատակով:

3. Եթե երկու կամ ավելի Կողմեր այդքան համաձայնագիր կամ պայմանագիր են կնքել սույն Համաձայնագրով քննվող առարկայի վերաբերյալ, կամ այլ կերպ հարաբերություններ են հաստատել այդ առարկայի նկատմամբ, ապա նրանք իրավունք ունեն այդ համաձայնագիրը կամ պայմանագիրը կիրառել կամ համապատասխան ձևով կարգավորել իրենց հարաբերությունները սույն Համաձայնագրի փոխարեն, եթե դա հեշտացնում է միջազգային համագործակցությունը:

### *Հոդված 36. Հռչակագիր*

Ցանկացած Պետություն վավերագրերը ստորագրման կամ պահպանման տալու համար հանձնման, ընդունման, հաստատման կամ մտցնելու պահին պաշտոնապես հայտարարում է, որ որպես քրեորեն պատժելի իրավախախտումներ է ընդունում արտասահմանյան պետական պաշտոնատար անձանց ակտիվ կամ պասիվ կաշառակերությունը, համաձայն 5-րդ հոդվածի, միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց կա-

չատակերությունը, համաձայն 9-րդ հոդվածի, կամ միջազգային դատարանների դատավորների կամ պաշտոնատար անձանց կաշատակերությունը, համաձայն 11-րդ հոդվածի, միայն այն չափով, ինչքանով որ այդ պետական պաշտոնատար անձը կամ դատավորը կատարում է իր սլարտականությունների խախտող գործողություններ կամ խուսափում դրանցից:

### *Հոդված 37. Վերապահություններ*

1. Յանկացած Պետություն, վավերագրերի ստորագրման, պահպանման համար հանձնման, բնդունման, հաստատման կամ մտնելու պահին, իրեն իրավունք է վերապահում իր օրենսդրության համաձայն, որպես քրեորեն պատժելի իրավախախտումներ շրնդունել 4-րդ, 6-8-րդ, 10-րդ և 12-րդ հոդվածներում հիշատակված ամբողջովին կամ մասնակիորեն կատարած արարքները, կամ 5-րդ հոդվածում սահմանված պասիվ կաշատակերությունը:

2. Յանկացած Պետություն վավերագրերի ստորագրման կամ պահպանման համար հանձնման, բնդունման, հաստատման կամ մտնելու ժամանակ կարող է հայտարարել, որ օգտվում է 17-րդ հոդվածի 2-րդ կետում նախատեսված կանխապայման դներու իրավունքից:

3. Յանկացած Պետություն վավերագրերի ստորագրման կամ պահպանման համար հանձնման, բնդունման, հաստատման կամ մտնելու ժամանակ կարող է հայտարարել, որ համաձայն 26-րդ հոդվածի 1-ին կետի, կիրաժարվի փոխադարձ օգնությունից, եթե հարցումը շոշափում է այնպիսի իրավախախտումներ, որոնք հարցում անող երկրում քաղաքական են համարվում:

4. Վկայակոչելով սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, ոչ մի Պետություն չի կարող դներ ավելի կանխապայման, քան այդ դրույթներին հաջորդող հիշատակված հինգ կանխապայմանը: Մի այլ կանխապայման չպետք է արվի: 4-րդ, 6-րդ և 10-րդ հոդվածներին վերաբերվող միաբնույթ կանխապայմանների պետք է համարվեն 1-ին կանխապայման:

### *Հոդված 38. Հոշակագրերի և կանխապայմանների իրավաբանական ուժն ու վերանայումը*

1. 36-րդ հոդվածում հիշատակված հոշակագրերը և 37-րդ Հոդվածում հիշատակված կանխապայմանները գործում են շա-

հազրգիտ Պետությունների վերաբերյալ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 3 տարի ժամանակամիջոցում: Սակայն նման հոչակագրերն ու կանխապայմանները կարող են նորոգվել նույն տևողությամբ:

2. Հոչակագրի ժամկետը լրանալուց 12 ամիս առաջ Եվրախորհրդի Գլխավոր Քարտուպարությունը պետք է շահագրգռված Պետություններին ծանուցի ժամկետի լրացման մասին: Ոչ ուշ, քան 3 ամիս առաջ Պետությունը պետք է Գլխավոր Քարտուղարին տեղեկացնի հոչակագիրը կամ կանխապայմանն ուժի մեջ թողնելու, փոփոխություն մտցնելու կամ հետ վերցնելու մասին: Ծահագրգռված Պետությունների կողմից ծանուցման բացակայության դեպքում Գլխավոր Քարտուղարությունը պետք է այդ Պետությանը տեղեկացնի, որ նրա հոչակագիրը կամ կանխապայմանը համարվում է ինքնաբերաբար երկարացված 6 ամսով: Տվյալ Պետության կողմից իր հոչակագիրը կամ կանխապայմանը մինչ ժամկետն անցնելը ուժի մեջ թողնելու կամ ուղղելու մասին ծանուցում չտալը կարող է հոչակագրի կամ կանխապայմանի ուժի կորցման հետևանք դառնալ:

3. Եթե Կողմը հոչակագիրը կամ կանխապայմանը համապատասխանեցնում է 36-րդ և 37-րդ հոդվածներին, ապա պետք է կոռուպցիայի դեմ պետությունների խմբին (GRECO), վերսկսելուց առաջ կամ խնդրանքով, բացատրություն տա հոչակագրի կամ կանխապայմանի երկարացումն արդարացնող հիմնավորումների մասին:

### *Հոդված 39. Ուղղումներ*

1. Ցանկացած Կողմ կարող է ուղղումներ կատարել սույն Համաձայնագրում, որոնք պետք է փոխանցվեն Եվրախորհրդի անդամ Պետություններին և յուրաքանչյուր ոչ անդամ Պետությանը, որը մուտք է գործել սույն Համաձայնագրով կամ հրավիրված է մուտք գործելու սույն Համաձայնագրով, համաձայն 33-րդ հոդվածի դրույթների:

2. Կողմի առաջարկած յուրաքանչյուր ուղղում պետք է փոխանցվի քրեագիտական խնդիրների վերաբերյալ Եվրոպական կոմիտե (CDRC), որն առաջարկված ուղղման մասին իր կարծիքը պետք է ներկայացնի նախարարների կոմիտե:

3. Նախարարների կոմիտեն պետք է քննարկի առաջարկված ուղղումը և քրեագիտական խնդիրների վերաբերյալ Եվրակոմիտեի (CDRC) ներկայացրած կարծիքը: Այնուհետև, ոչ

անդամ Պետությունների Համաձայնագրի Կողմերի հետ խորհրդակցությունից հետո, կարելի է ընդունել այդ ուղղումը:

4. Համաձայն սույն հոդվածի 3-րդ կետի, նախարարների կոմիտեի ընդունած ցանկացած ուղղման տեքստը պետք է ուղարկվի Կողմերին՝ հաստատման համար:

5. Համաձայն սույն հոդվածի 3-րդ կետի, ընդունված ցանկացած ուղղում պետք է ուժի մեջ մտնի 30-րդ օրը, այն բանից հետո, երբ բոլոր Կողմերը Գլխավոր Քարտուղարին կտեղեկացնեն իրենց ուղղման հաստատման մասին:

#### *Հոդված 40. Վեճերի հանգուցալուծում*

1. Քրեագիտական հարցերի գծով Եվրակոմիտեն (CDRC), Եվրախորհրդին առնթեր, պետք է տեղեկացվի սույն Համաձայնագրի բացատրությունների և կիրառման մասին:

2. Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հարցում Կողմերի միջև վեճի դեպքում, Կողմերը պետք է իրենց ընտրությամբ, բանակցությունների ճանապարհով կամ այլ խաղաղարար միջոցներով հասնեն հանգուցալուծման, ներառյալ՝ քրեագիտական հարցերի գծով Եվրակոմիտեի դատարան վեճի ներկայացմամբ, որի որոշումները պետք է պարտադիր լինեն Կողմերի համար, կամ էլ միջազգային դատարան՝ շահագրգռված Կողմերի համաձայնությամբ:

#### *Հոդված 41. Լուծարում*

1. Ցանկացած Կողմ ցանկացած պահին կարող է խզել սույն Համաձայնագիրը՝ Եվրախորհրդի Գլխավոր Քարտուղարին հասցեագրած ծանուցման միջոցով:

2. Այդպիսի խզումը պետք է ուժի մեջ մտնի Գլխավոր Քարտուղարի ծանուցումը ստանալու եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա 1-ին օրը:

#### *Հոդված 42. Ծանուցում*

Եվրախորհրդի Գլխավոր Քարտուղարը Եվրախորհրդի անդամ Պետություններին, որոնք մուտք են գործել սույն Համաձայնագրով, պետք է ծանուցի.

ա) ցանկացած ստորագրման,

բ) վավերագրերի ավանդատվության, ընդունման, հաստատման կամ մտցման մասին,



զ) համաձայն 32-րդ և 33-րդ հոդվածների, սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ցանկացած ամսաթվի մասին,

դ) 36-րդ և 37-րդ հոդվածների համար արված ցանկացած խոչակագրի կամ կանխապայմանի մասին,

ե) սույն Համաձայնագրին վերաբերող ծանուցման կամ տեղեկացման ցանկացած այլ ակտի մասին:

Որի հավաստիացման համար, լիովին յիագործված լինելով, ներքոստորագրյալներս ստորագրեցինք սույն Համաձայնագիրը:

Տրված է Ստրասբուրգում, 1999 թ. հունվարի 27-ին, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, տեքստերը լիովին վավերական են և պետք է 1 օրինակից ավանդատվեն Եվրախորհրդի արխիվ: Գլխավոր Զարտույարը վստահված պատճենների պետք է հանձնի Եվրախորհրդի յուրաքանչյուր անդամ Պետությանը, ոչ անդամ Պետությանը, որը մասնակցել է սույն Համաձայնագրի մշակմանը և սույն Համաձայնագրին մասնակցելու հրավիրված ցանկացած Պետությանը:

## ԵՎՐԱԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՍԱՍԲԼԵԱ

Կոռուպցիայի քաղաքացիական իրավունքի համաձայնագիր  
(ԿՔԻԿ) (Նախագիծ)

Փաստաթուղթ. 8402 6 մայիսի, 1999թ.

Չեկույց (1)

Իրավական հարցերի և մարդու իրավունքների կոմիտե

Չեկուցող՝ պրն. Ջեյմ Բարտոմեու Քասանի, Անդրա, Սոցիալիստ  
խմբից

Ըննարկումների համար նշված կոմիտեում տես՝ ԸՆԹԱՅԱԿԱՐ-  
ԳԻ կանոն 47

### ՀԱՍԱՌՈՏԱԳԻՐ

ԿՔԻԿ - ի նախագիծը, որը լրացնում է Կոռուպցիայի մասին 1998թ.  
ընդունած քրեական իրավունքի համաձայնագիրը, քաղաքացիական ի-  
րավունքի բնագավառում Եվրախորհրդի կողմից հաստատված առաջին  
միջազգային համաձայնագիրն է:

ԿՔԻԿ-ի նախագիծը վերաբերում է գործարար աշխարհի այն բնա-  
գավառներին, որոնք չեն կարող ընդգրկվել քրեական խիստ սահմանում-  
ներով, ինչպես նաև կոռուպցիայի արդյունքում առաջացած վնասի լրիվ  
փոխհատուցման, կնքված պայմանագրի անվավեր ճանաչման, կոռուպ-  
ցիայի փաստերի քարեխղճորեն հայտնող աշխատողների պաշտպա-  
նության հնարավորությունն է տալիս:

Ասանքլեան առաջարկում է ընդլայնել այս դրույթների ընդգրկու-  
թյունը, որպեսզի ներառվեն նաև այն երրորդ կողմերն էլ, որոնք կարող  
են տեղյակ լինել կոռուպցիայի դեպքի մասին: Որպես կանխարգելիչ մի-  
ջոցառում, այն նաև առաջարկում է առանձին դրույթներ վնասի պատ-  
ժիչ՝ լրացուցիչ հատուցման և վնասի լրիվ փոխհատուցման մասին:

### 1. ԿԱՐԾԻՔ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ասանքլեան նշում է, որ Կոռուպցիայի մասին քրեական իրա-  
վունքի համաձայնագրի մասին իր՝ 1998թ. թիվ 207 Կարծիքում, նշել է, որ  
կոռուպցիան սպառնալիք է ժողովրդավարության համար:

2. Նա ողջունում է ԿՔԻԿ-ի նախագծի մշակումը՝ որպես կոռուպ-  
ցիայի դեմ պայքարում Եվրախորհրդի հաստատած համաձայնագրից

մեկը: Նա նաև ողջունում է Կոռուպցիայի բազմադիսցիսիանայի խմբի (GMC) գաղափարը՝ կիրառել քաղաքացիական իրավունքի կանոնները ընդդեմ կոռուպցիայի՝ իրականացնելով բազմադիսցիսիանայի մոտեցում:

3. Չնայած համաձայնագրի նախագիծը չի սահմանում կողմերկրների տեղական դատարաններում քաղաքացիների կողմից ուղղակիորեն կիրառվող իրավունքներ, սակայն այն պարունակում է հատուկ պարտավորություններ այդ երկրների համար՝ նախաձեռնելու և հաստատելու կոռուպցիայից տուժած անձանց պաշտպանության մեխանիզմներ և գործընթացներ: Նախագիծը կառուցված է եվրոպական իրավական համակարգերի մեծ մասին հատուկ քաղաքացիական իրավունքի հիմնական սկզբունքներով, միաժամանակ ներառելով դրանք կոռուպցիայի դեմ պայքարի ընդհանուր ռազմավարության մեջ՝ տալով դրան գործադրման նոր պլան:

4. Ասամբլեան ողջունում է այն փաստը, որ համաձայնագիրը չի թույլատրում որևէ վերապահում:

5. Ասամբլեան հետևում է կոռուպցիայի հեռանքով պատճառված ամբողջ վնասի լրիվ վախճանում սկզբունքին, սակայն կարծում է, որ որպես կոռուպցիայի երևույթի կանխարգելիչ միջոց կարող է կիրառվել նաև վնասների պատժիչ հատուցումը:

6. Ասամբլեան ափսոսանք է արտահայտում այն փաստի կապակցությամբ, որ միայն կոռուպցիայի արդյունքում կնքված պայմանագրի կողմերը կարող են հետ կանչել իրենց համաձայնությունը՝ պայմանագիրը անվավեր ճանաչելու համար: Այս դրույթը կայտղ է ընդլայնվել, տարածվել նաև պայմանագրի գործադրումից օրինական շահ ունեցող երրորդ անձանց նկատմամբ:

7. Ասամբլեան նաև համարում է, որ մարդկանց պետք է խրախուսել հայտնելու կոռուպցիայի փաստերը, և միաժամանակ ափսոսում է, որ վերջինիս համար սահմանված սանկցիաների դեմ պաշտպանված են միայն աշխատողները: Ասամբլեան առաջարկում է, որ նման պաշտպանվածություն պետք է ապահովել նաև երրորդ անձանց նկատմամբ:

8. Ի վերջո, կապված կոռուպցիայի դեմ քրեական իրավունքի համաձայնագրի նախագծի հետ, Ասամբլեան համարում է, որ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ վավերացման թիվը պետք է կրճատվի:

9. Հետևաբար, Ասամբլեան խորհուրդ է տալիս, որ Նախարարների կոմիտեն կատարի հետևյալ ուղղումները.

- ✓ Հոդված 3-ում ավելացնել «ինչպես նաև վնասների պատժիչ, լրացուցիչ հատուցում» բառերը:
- ✓ Հոդված 8-ում ավելացնել երրորդ պայքերություն՝ հետևյալ շարադրությամբ. «Յուրաքանչյուր կողմ-երկիր իր ներքին օրենքում պետք է իրավունք ընձեռի օրինական շահ ունեցող ցանկացած երրորդ կողմին՝ դիմելու դատարան պայմանագիրը անվավեր

ճանաչելու համար, չնայած վնասների հատուցման պահանջի իրավունքի:

- ✓ Հոդված 9-ում ավելացնել « և երրորդ կողմերը» բառերը՝ «աշխատողների համար» բառերից հետո:
- ✓ Հոդված 13-ում ավելացնել հետևյալ պարբերությունը. «Այն կողմերը, որ ոչ ստորագրել, ոչ էլ վավեր են ճանաչել 1-ին պարբերությունում նշվածի վերաբերյալ համաձայնագրերը, պետք է երաշխավորեն միմյանց այս համաձայնագրով կարգավորվող հարցերի դատական կարգավորման մեջ հավասարաչափ փոխադարձ օգնություն»:
- ✓ Հոդված 15-ում պահանջվող վավերացումների թիվը կրճատել մինչև 10:

10. Ասամբլեան նաև խորհուրդ է տալիս, որ Նախարարների կոմիտեն համապատասխան միջոցառումներ ձեռնարկի կոռուպցիայի դեմ պետությունների խմբի (GRECO) աշխատանքներին Ասամբլեայի մասնակցության հնարավորությունը ապահովելու համար:

## II Պարոն Բարտոմեո Քասանիի բացատրական հուշագիրը

### *Ա/Ներածություն*

1. Ասամբլեան ողջունում է ԿՔԻԿ-ի նախագիծը, որը հաջորդելով Կոռուպցիայի դեմ քրեական իրավունքի համաձայնագրին, համալրում է կոռուպցիայի դեմ ուղղված համաձայնագրերի շարքը:

2. Պետք է առանձին շեշտադրել համաձայնագրի նորարական բնույթը, այն հանդիսանում է քաղաքացիական իրավունքի հիմնական կանոնների համակարգման նպատակով Եվրախորհրդի կողմից հաստատվող առաջին միջազգային համաձայնագիրը: Անդրադառնալով քաղաքացիական իրավունքին, Եվրախորհուրդը կարգավորում է մասնավոր անձանց միջև հարաբերությունները: Այս նորույթը ցանկացած օրինական միջոցով կոռուպցիայի դեմ պայքարելու բազմադիսցիպլինար մոտեցման արդյունք է:

3. Ավելին, համաձայնագրի ընդունումը հնարավոր է դարձնում հսկել անդամ-երկրների կողմից կնքվող համաձայնություններին: GRECO-ն, որի աշխատանքներում Ասամբլեան պետք է ընդգրկվի, պատասխանատու է լինելու մոնիտորինգի համար, ինչպես և կոռուպցիայի դեմ քրեական իրավունքի համաձայնագրի դեպքում:

4. Համաձայնագիրը բաց է ոչ անդամ-երկրների և Եվրահամայնքի համար:

5. Վերջապես, այն փաստը, որ համաձայնագրի նախագիծը թույլ չի տալիս որևէ բացառություն (վերապահում), ողջունելի է:

6. Ինչպես նշված է Կոռուպցիայի դեմ քրեական իրավունքի համաձայնագրի մասին Ասամբլեայի կարծիքում, վերջինս համարում է, որ համաձայնագիրը ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ վավերացումների թիվը (14) չափազանց մեծ է:

*Բ/ Համաձայնագրի նախագծի էությունը*

7. Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ իր ներքին օրենքում փոփոխություններ մտցնելու, որպեսզի համաձայնագիրը գործի արդյունավետ: Այն փաստ, որ համաձայնագրի նախագիծը չի սահմանում կողմ-երկրների համար համաձայնագրի համաձայնեցման ժամանակային սահմանափակում, նշանակում է, որ ներքին (տեղական) օրենքը պետք է թույլ տա՝ համաձայնագրի գործադրումը վավերացման պահից: Ցանկացած դեպքում, GRECO-ն պետք է համոզվի, որ սա տեղի է ունենում: Որոշ կողմ-երկրներ իրենց ներքին օրենքներում ստիպված կլինեն քիչ փոփոխություններ կատարել, քանի որ նրանք արդեն ունեն այս բնագավառին վերաբերող օրենսդրություն: Մյուս կողմ-երկրների համար, հակառակը, համաձայնագիրը կպարտադրի ներդնել նախկինում անժամանակ գույափականեր իրենց ներքին օրենսդրության մեջ:

8. Համաձայնագրի էությունը շատ ընդարձակ է, քանի որ այն վերաբերում է կոռուպցիայից բոլոր տուժածներին:

**Հոդված 2. Կոռուպցիայի սահմանումը**

9. Քաղաքացիական իրավունքի՝ կոռուպցիայի սահմանումը բավականին ընդարձակ է, ընդգրկելով գործունեություն (նիմնականում ձեռնարկատիրական), որ չի կարող ընդգրկվել քրեական խիստ սահմանումներով:

**Հոդված 3. Վնասի հատուցում**

10. Այս հոդվածով սահմանվում է կոռուպցիայի հետևանքով առաջացած ցանկացած վնասի լրիվ փոխհատուցում:

11. Ասամբլեան խրախուսում է վնասի լրիվ փոխհատուցման սկզբունքը: Պետք է ամեն ջանք թափվի խուսափելու համար վնասների մասնակի կամ սահմանված գումարով հատուցումից, ինչը կարող է երկար ժամկետի տեսանկյունից նշանակել, որ կոռուպցիան վճարում է:

**Հոդված 8. Պայմանագրերի վավերությունը**

12. Հողված 8-ի 2-րդ պարբերությունը պայմանագրի բոլոր կողմերին խոսվումը է տալիս, կոռուպցիայի բացահայտման դեպքում, հետ վերցնել իրենց համաձայնությունը և դիմել դատարան պայմանագիրը անվավեր ճանաչելու համար, անկախ վնասների հատուցման պահանջի իրավունքի:

13. Հետևաբար, այն միայն պայմանագրի կողմերի վրա է տալիս լիարժեք, ինչը ցավալի է: Պայմանագրի ուժի մեջ մնալը, որպես կանոն, պայմանագրի կողմերի ընդհանուր շահերից է բխում: Այս պատճառով կոռուպցիայի արդյունքում կնքված պայմանագրերը կարող են շարունակել վնաս պատճառել երրորդ կողմերին կամ հասարակությանը: Համապատասխանաբար, օրինական շահ ունեցող երրորդ կողմերը, որոնք պայմանագրի կողմեր չեն, նույնպես պետք է իրավունք ունենան դիմելու դատարան պայմանագիրը անվավեր ճանաչելու համար, եթե բացահայտել են կոռուպցիայի դեպքը:

### Հողված 9. Աշխատողների պաշտպանություն

14. Այս հողվածը ցանկացած անարդարացված սանկցիայի դեմ պաշտպանվածության հնարավորություն է տալիս այն աշխատակիցներին, որոնք կոռուպցիայի փաստի հիմնավոր կասկածներ ունեն և բարեխղճորեն հայտնել են իրենց կասկածները պատասխանատու անձանց կամ իշխանություններին:

15. Այս դրույթի նպատակն է երաշխավորել նրանց պաշտպանվածությունը, խրախուսել մարդկանց հայտնելու իրենց աշխատանքի ընթացքում բացահայտված կոռուպցիայի դեպքերի մասին: Անբարյացակամ կամ զրպարտիչ հայտարարություններից խուսափելու համար: Հողված 9-ը այս պաշտպանվածությունը վերագրում է որոշակի պայմանների: Մասնավորապես, աշխատակիցները պետք է պաշտպանված լինեն չարդարացված սանկցիաների դեմ և պետք է բարյացակամորեն հայտնեն իրենց կասկածները պատասխանատու անձանց կամ իշխանություններին և պետք է ունենան դրա համար հիմնավոր փաստեր:

16. Այնուամենայնիվ, պարզ չէ, թե ինչու այս պաշտպանվածության հնարավորությունը տրվում է միայն աշխատողներին: Երրորդ կողմերը, ինչպիսիք են անկախ հաշվապահները կամ աուդիտորները, նույնպես կարող են բացահայտել կոռուպցիայի փաստեր իրենց աշխատանքի ընթացքում: Ինչո՞ւ նրանք նույնպես պաշտպանված չեն: Այս երրորդ կողմերին, չնայած նրանք ընկերության աշխատուժի մեջ չեն մտնում, պայմանագրով թույլատրված է աշխատելու այդ ընկերության համար, և շատ հնարավոր է, որ նրանց պայմանագիրը չի վերակնքվի, եթե նրանք հայտնեն կոռուպցիայի փաստերի վերաբերյալ: Աշխատանքային (մասնագիտական) գաղտնիքի պահանջը նույնպես պետք է միշտ հստակ

առնվի, երբ որոշվում է, թե այսչո՞ք այս դրույթը պետք է ընդարձակվի՝ անկախ փարձագետներին նույնպես պաշտպանելու համար:

### Հոդված 13. Միջազգային համագործակցություն

17. Հոդված 13-ը հնարավորություն է տալիս կողմերին արդյունավետորեն համագործակցելու կառույցիայի դեպքում քաղաքացիական վարումների վերաբերյալ հարցերում, ներկայացնելով մի շարք օրինակներ: Վերոնշյալ բոլոր բնագավառները կարգավորվում են Եվրախորհրդից դուրս կնքված միջազգային համաձայնագրերով: Ուստի հավանական է, որ քաղաքացիական իրավունքի այս համաձայնագրի որոշ կողմեր չեն հանդիսանում այլ միջազգային համաձայնագրերի կողմեր: Այս պատճառով, օգտակար կլինի ներառել առանձին հոդված, համաձայն որի այն պետությունները, որոնք չեն հանդիսանում քաղաքացիական իրավունքի համաձայնագրում նշված միջազգային գործիքների կողմեր, նվազագույնը պետք է երաշխավորեն միմյանց համաձայնագրով կարգավորվող բնագավառներում դատական հարցերի փոխադարձ համարժեք օգնություն:

### Հոդված 15. Ստորագրումը և ուժի մեջ մտնելը

18. Ինչպես արդեն նշվեց, վավերացման համար պահանջվող երկրների թիվը (14) շատ բարձր է:

19. Ասամբլեան նույնպիսի դիտարկում կատարել է նաև Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի համաձայնագրի դեպքում, և շատ հնարավոր է, որ Նախարարների կոմիտեն նույնպիսի պատասխան կտա, ինչպես նախորդ դեպքում, ընդունելով, որ 14-ը մեծ թիվ է: Սակայն դրան կարելի է նաև բացատրություն տալ, այն է՝ «քաղաքականապես և տնտեսապես զգայուն բնագավառում միջազգային հսկողությունից ակնկալվում է միասնական և միաժամանակյա առաջխաղացում»:

20. Ի վերջո, Համաձայնագրի իրականացումը հսկվելու է GRECO-ի կողմից, որը կստեղծվի, երբ Կոռուպցիայի դեմ քրեական իրավունքի համաձայնագրի 14-րդ վավերացումը տեղի կունենա:

21. Համաձայն Կոռուպցիայի դեմ քրեական իրավունքի 24-րդ հոդվածի՝ Ասամբլեան արտահայտում է GRECO-ի աշխատանքներին մասնակցելու ցանկություն: Նախարարների կոմիտեն հաշվի է առել սա: Ասամբլեան ներկայումս իր պահանջը կրկնում է:

*Գ/ Եզրակացություններ*

22. Ասամբլեան կարծում է, որ շատ կարևոր է, որ Նախարարների կոմիտեն րևոտնի Կ.Բ.Ի.Կ-ը մինչև սույն տարվա վերջ: Ուստի նա առաջարկում է հետևյալ ուղղումները.
- Հոդված 3-ում վնասի լրիվ հատուցմանը զուգահեռ մտցնել դրույթ վնասի պատժիչ (լրացուցիչ) հատուցման վերաբերյալ՝ որպես կոռուպցիայի կանխարգելիչ:
  - Հոդված 8-ի բովանդակությունը ընդլայնելու համար ընդգրկել նաև երրորդ կողմերին, բացի պայմանագրի կողմերից:
  - Հոդված 9-ից հետո նոր դրույթ մտցնել աշխատողներին տրվող պաշտպանվածությունը տարածելու նաև երրորդ կողմերի վրա:
  - Հոդված 13-ում ավելացնել նոր դրույթ, որով եթե այն կողմերը, որոնք չեն հանդիսանում նույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված հարցերի վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կողմ, պետք է մինչև 2004 թ. դեկտեմբերին արձարժվող հարցերի դատական խնդիրների շարք վախճարձ համարժեք օգնություն:
  - Հոդված 15-ի 3-րդ պարբերություն. համաձայնագիրը ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ վավերացումների թիվը կլճատել:

Չեկուցող կոմիտե՝ Իրավական հարցերով և մարդու իրավունքների կոմիտե

Ասամբլեայի համար բյուջետային ներառումներ՝ չկան

Տեղեկանք կոմիտեին՝ Փաստաթուղթ 8341, տեղեկանք թիվ 2371 առ 30/03/1999

Նախագծի մասին կարծիքը ընդունվել է կոմիտեի կողմից 27/04 1999:



## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Եվրախորհրդի կրտսեան գր «Փողի լվացման նպատակների համար ֆինանսական համակարգերի օգտագործման կանխարգելման մասին» (91/308/EEC)

### ԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Հարգելով Եվրոպական Տնտեսական Ընկերության հաստատման մասին Պայմանագիրը, և, մասնավորապես՝ Հոդված 57(2) առաջին և երրորդ պարբերությունները և նույն Պայմանագրի 100 ա հոդվածը,

Հարգանք արտահայտելով հանձնաժողովից ստացված ամառապարկությունների նկատմամբ,

Համագործակցելով Եվրախորհրդարանի հետ,

Հարգանք արտահայտելով Տնտեսական և Սոցիալական հարցերի Կոմիտեի կարծիքի նկատմամբ,

Նկատի առնելով, որ երբ վարկային ֆինանսական հիմնարկությունները օգտագործվում են հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների լվացման համար (հետագայում «փողի լվացում»), ապա, ներգրավված հիմնարկությունների և ֆինանսական համակարգի, որպես մեկ ամբողջականի, ամբողջումն ու կայունությունը կարող են լուրջ տուժել, դրանով իսկ կորցնելով հասարակության նկատմամբ վստահությունը,

Նկատի առնելով, որ Ընկերակցության կողմից փողի լվացման դեմ ընդունված միջոցառումների անբավարարությունը կարող է հանգեցնել նրան, որ Մասնակից Երկրները իրենց ֆինանսական համակարգը պաշտպանելու նպատակով միջոցներ կձեռնարկեն, որոնք կարող են անհամատեղելի լինել միասնական շուկայի ստեղծման հետ, նկատի առնելով, որ իրենց հանցավոր գործունեությանը նեցուկ լինելու իսկապես փողը լվացող հանցագործները կարող են փորձել օգտվել կապիտալի շարժման և ֆինանսական ծառայությունների մատուցման ազատությունից, որը գոյծողության մեջ է ներգրավում ֆինանսական միացյալ տարածությունը, եթե Ընկերակցության մակարդակով որոշակի հանսձայնեցված միջոցներ չձեռնարկվեն,

Նկատի առնելով, որ փողի լվացումը ակնհայտ ազդեցություն ունի կազմակերպված հանցագործության աճի վրա ընդհանրապես, և թմրաբիզնեսի վրա մասնավորապես, նկատի առնելով, որ ավելի ու ավելի է աճում այն բանի գիտակցումը, որ փողի լվացման դեմ պայքարը իսանդիսանում է հանցավոր գործունեության այդ ձևին դիմակայելու ամեն-

նուսարյունավետ միջոցներից մեկը, որն իրենից հատուկ վտանգ է ներկայացնում Մասնակից Երկրների ընկերությանը,

Նկատի առնելով, որ փողի վաճման դեմ պայքարը պետք է տարվի գլխավորապես պատժիչ միջոցներով և դատական ու իրավապահ իշխանությունների միջև միջազգային համագործակցության շրջանակներում, ինչպես դա ընդունված է եղել Թմրամիջոցների Անօրինական Շրջանառության և Հոգեցնցող Նյութերի դեմ Միացյալ Ազգերի Համաձայնագրով թմրամիջոցների դեմ պայքարի բնագավառում, ընդունված Վիեննայում, 1988 թ. դեկտեմբերի 18-ին (հետագայում՝ Վիեննայի Համաձայնագիր), և, առավել ընդհանուր տեսքով, հանցավոր ողջ գործունեությանն նկատմամբ, վաճման, հսկողության, հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների բռնագլուխման և կալանք սահմանելու մասին Եվրոպայի Խորհրդի Համաձայնագրով, որը ստորագրման համար բացվել է Ստրասբուրգում, 1990 թ. նոյեմբերի 8-ին,

Նկատի առնելով, որ փողի վաճման պայքարում պատժիչ մոտեցումը, այնուամենայնիվ, չպետք է միակ ձևը հանդիսանա, քանի որ ֆինանսական համակարգը կարող է շատ արդյունավետ դեր խաղալ, նկատի առնելով, որ այդ համատեքստում հարկավոր է կիսնվել Եվրոպայի Խորհրդի 1990 թ. հունիսի 27-ի հանձնարարության և Բազելում 1988 թ. դեկտեմբերին Տասի Խմբի բանկերի վերահսկող մարմինների ընդունած Հոչակագրի սկզբունքների վրա որոնք երկուսն էլ խոշոր քայլ են հանդիսանում փողի վաճման նպատակներով ֆինանսական համակարգի օգտագործման կանխարգելման համար,

Նկատի առնելով, որ փողի վաճումը տեղի է ունենում միջազգային համատեքստում այնքանով, որպեսզի հնարավոր լինի ավելի լավ քողարկել միջոցների հանցավոր ծագումը, նկատի առնելով, որ բացառապես ազգային մակարդակով նախաձեռնված միջոցները, առանց հաշվի առնելու միջազգային կոորդինացումն ու համագործակցությունը, կունենան հույժ սահմանափակ ազդեցություն,

Նկատի առնելով, որ Ընկերակցության կողմից այդ բնագավառում ընդունված ցանկացած միջոց պետք է համաձայնեցվի միջազգային մակարդակով նախաձեռնված այլ գործողությունների հետ, նկատի առնելով այդ հարաբերություններում Ընկերակցության ցանկացած գործողություն, առավել ուշադրություն պետք է դարձվի այն հանձնարարականներին, որոնք մշակվել են 1989 թ. հուլիսին, Փարիզում, առավել զարգացած 7 երկրների հանդիպման ժամանակ, ֆինանսական աշխատակիցների հատուկ նշանակության խմբի կողմից, որոնք պայքարում են փողի վաճման դեմ,

Նկատի առնելով, որ Եվրոպական Խորհրդարանը պահանջեց մի քանի բանաձևերում հիմնավորել թմրամիջոցների դեմ պայքարի վերաբերյալ Ընկերակցության համընդհանուր ծրագիրը, ներառյալ՝ փողի լվացման կանխման հետ կապված նախազուշական միջոցները,

Նկատի առնելով, որ տվյալ Ղեկավար Հրահանգի նպատակների համար փողի լվացման սահմանումը վերցված է Վիեննայի Համաձայնագրում ընդունված սահմանումից, նկատի առնելով, որ, այնուամենայնիվ, փողի լվացումը տեղի է ունենում ոչ միայն թմրամիջոցների ոլորտում հանցավոր գործունեությունից ստացված եկամուտներից, այլ նաև այլ կարգի հանցավոր գործունեությունից (այնպիսիք, ինչպիսիք են կազմակերպված հանցագործությունն ու ահաբեկչությունը), Մասնակից Երկրները պետք է իրենց օրենսդրությունների և պայմանների շրջանակներում ընդարձակեն Ղեկավար Հրահանգների ազդեցությունը նրանով, որպեսզի եկամուտները նման գործունեությունից հանգեցնեն փողի լվացման համար սանկցիաների այն աստիճանի, որը կարողարացներ նման սանկցիաների կիրառումը,

Նկատի առնելով, որ Միության Անդամ Երկրների օրենսդրության մեջ փողի լվացման արգելքը, պահպանված Միության Անդամների համապատասխան միջոցներով ու պատիժներով, հանդիսանում է այլ երևույթի դեմ պայքարի անհրաժեշտ պայմանը,

Նկատի առնելով, որ վարկային և ֆինանսական հիմնարկությունների իրենց հաճախորդներից անձը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պահանջը, երբ վերջիններս մտնում են գործնական հարաբերությունների մեջ կամ կնքում են որոշակի սահմանազღծեր գերուզանցող գործարքներ, որոնք անհրաժեշտ են, որպեսզի փող լվացող անձինք, իրենց հանցավոր գործունեություններն անցկացնելու համար չօգտվեն անանունությունից, նկատի առնելով, որ այդպիսի կանոնները ևս, որքան հնարավոր է, պետք է տարածվեն ցանկացած հաշվեհամարի տիրոջ բենեֆիցարի վրա,

Նկատի առնելով, որ վարկային և ֆինանսական հիմնարկությունները պետք է անձը հաստատող պահանջված փաստաթղթերի պատճենները պահպանեն առնվազն հինգ տարի, ինչպես նաև վկայություններն ու ձայնագրությունները, որոնք կազմված են գործարքներին վերաբերվող փաստաթղթերից, կամ նշված փաստաթղթերի պատճենները, որոնք, համաձայն ազգային օրենսդրության, դատավարության ընթացքում փողի լվացման մասին ցանկացած հետաքննությունում, որպես ապացույց, համահավասար ընդունելի են,

Նկատի առնելով, որ վարկային և ֆինանսական հիմնարկությունների գանկացած գործարքների հետաքննության ժամանակ հատուկ ուշադրության ապահովումը, որոնք, իրենց բնույթով խիստ նման են փողի լվացման հետ կապված գործողություններին, անհրաժեշտ են ֆինանսական համակարգի կայունության և ամբողջականության պահպանման համար, ինչպես նաև, որպես ներդրում այդ երևույթի դեմ պայքարի գործում, նկատի առնելով, որ դրանց հետ կապված պետք է հատուկ ուշադրություն դարձնեն երրորդ պետությունների հետ գործարքներին, որոնք չեն կիրառում միջազգային շրջանակներում հաստատված և Ընկերակցության կողմից հավանության արժանացած Ընկերակցության սահմանած փողի լվացման դեմ համարժեք չափանիշները,

Նկատի առնելով, որ այդ նպատակների համար Մասնակից Երկրների կարող են վարկային և ֆինանսական հիմնարկություններին խնդրել գրավոր ձևով արձանագրել հետաքննությունների արդյունքները, որոնք նրանցից պահանջվում է կատարել, և այդ արդյունքները հասանելի դարձնել իշխանություններին, որոնք պատասխանատու են փողի լվացման վերացմանն ուղղված ջանքերի համար,

Նկատի առնելով, որ փողի լվացման համար ֆինանսական համակարգի օգտագործման հնարավորության կանխումը չի կարող իրականացվել իշխանությունների կողմից, որոնք պատասխանատու են այդ երևույթի դեմ պայքարի համար առանց համագործակցելու վարկային և ֆինանսական հիմնարկությունների և դրանց հսկող մարմինների հետ, նկատի առնելով, որ նման դեպքերում բանկային գաղտնիքը պետք է բացահայտվի, նկատի առնելով, որ կասկածելի գործարքների համար հաղորդումների պարտադիր համակարգը, որը երաշխավորում է, որ տեղեկությունը փոխանցվում է վերը նշված իշխանություններին առանց գործի մեջ ներգրավված հաճախորդների ծանուցման, հանդիսանում է նման համագործակցության իրականացման առավել արդյունավետ ճանապարհ, նկատի առնելով, որ հատուկ պաշտպանող դրույթը անհրաժեշտ է վարկային և ֆինանսական հիմնարկություններին, դրանց աշխատակիցներին և ղեկավարներին պատասխանատվությունից ազատելու համար, տեղեկությունների հրապարակման վրա սահմանափակությունների խախտման համար,

Նկատի առնելով, որ սույն Ղեկավար Հրահանգին հետևող իշխանություններից ստացած տեղեկությունը կարող է օգտագործվել միայն փողի լվացման դեմ պայքարի դեպքում, նկատի առնելով, որ Մասնակից Երկրները, լայնուամենայնիվ, կարող են ապահովել, որպեսզի այդ տեղեկությունը օգտագործվի այլ նպատակների համար,

Նկատի առնելով, որ վարկային և ֆինանսական հիմնարկությունների կողմից ներքին հսկողության ընթացակարգի սահմանումն ու այդ բնագավառում վերապատրաստման ծրագրերի հաստատումը լրացուցիչ պայմաններ են հանդիսանում, առանց որոնց սույն Ղեկավար Հրահանգում եղած այլ միջոցները կարող են անարդյունավետ համարվել,

Նկատի առնելով, որ, քանի որ փողի լվացումը կախող է տեղի ունենալ ոչ միայն վարկային և ֆինանսական հիմնարկությունների միջոցով, այլ նաև այլ կարգի պրոֆեսիոնալ և ձեռնարկատիրական գործունեությունից, Մասնակից Երկրները պետք է ամբողջովին կամ մասնակիորեն ընդլայնեն սույն Ղեկավար Հրահանգի դրույթների պայմանները, ընդգրկելու համար ձեռնարկատերերի այն մասնագիտություններն ու կարգերը, որոնց գործունեությունը, ամենայն հավանականությամբ, կախող է օգտագործվել փողի լվացման նպատակներով,

Նկատի առնելով այն բանի կարևորությունը, որ Մասնակից Երկրները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն Ընկերակցությունում համաձայնեցված գործողությունների իրականացման ապահովմանը այն դեպքերում, երբ լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ մասնագիտությունները կամ գործունեությունները, որոնց զբաղմունքների կարգավորման պայմանները ներդաշնակ են Ընկերակցության մակարդակին, օգտագործվել են փողի լվացման նպատակով,

Նկատի առնելով, որ փողի լվացումը արմատախիլ անելու ջանքերի արդյունավետությունը հիմնականում կախված է ազգային մակարդակով իրականացվող միջոցների սերտ համաձայնեցումից և ներդաշնակությունից, նկատի առնելով, որ նման համաձայնեցումն ու ներդաշնակությունը, որոնք իրականացվում են միջազգային տարբեր մարմինների կողմից, Ընկերակցության համատեքստում պահանջում է Միության Անդամ Երկրների և Հանձնաժողովի միջև համագործակցություն՝ փոխադարձ կապերի գծով կոմիտեի շրջանակներում,

Նկատի առնելով, որ Մասնակից Երկրներից յուրաքանչյուրի գործն է համապատասխան միջոցառումներն ընդունել և համապատասխան կերպով պատժել այդ միջոցառումների խախտման համար՝ երաշխավորելով Ղեկավար հրահանգի լրիվ կիրառումը:

## ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՀԱՆԳԸ

### ՀՈԴՎԱԾ 1.

#### *Սույն Ղեկավար հրահանգի նպատակների համար*

-«Վարկային հիմնարկություն» նշանակում է վարկային հիմնարկություն այն ձևով, ինչպես ձևակերպված է 77(789)EEC Հոդված 1-ի առաջին պարբերությունում՝ 89(646)EEC Ղեկավար հրահանգի վերջին լրացումներով, և իր մեջ ընդգրկում է մասնաճյուղեր Հոդվածի երրորդ պարբերության իմաստով, և տեղակայված այն վարկային հիմնարկների Ընկերակցությունում, որոնց գլխավոր (մայր) գրասենյակները Ընկերակցության սահմաններից դուրս են:

-«Ֆինանսական հիմնարկություն» նշանակում է վարկային հիմնարկությունից տարբերվող ձեռնարկություն, որի հիմնական գործողությունը հանդիսանում է մեկ կամ մի քանի գործառնությունների կատարում, որոնք 2-ից 12 և 14 համարների տակ ընդգրկված են 89(646)EEC Ղեկավար հրահանգին կից հավելվածում կամ ապահովագրական գործակալություն, որն անհրաժեշտ կերպով օժտված է 79(267)EEC Ղեկավար հրահանգի համապատասխան լիազորություններով՝ 90(619)EEC Ղեկավար հրահանգում արված վերջին լրացումներով, այն չափով, որ քանով որ գրառվում է սույն Ղեկավար հրահանգով նկարագրվող գործունեությամբ, այդ սահմանումն ընդգրկում է Ընկերակցությունում բաշխված ֆինանսական հիմնարկների մասնաճյուղեր, որոնց գլխավոր գրասենյակները գտնվում են Ընկերակցության սահմաններից դուրս,

-«Փողի լվացում» նշանակում է դիտավորությամբ իրականացված գործունեություն,

- Կունվերսիա կամ սեփականության փոխանցում, իմանալով, որ այդպիսի գույքը ձեռք է բերվել հանցավոր գործունեության ճանապարհով կամ այդպիսի գործունեությանը մասնակցելու արդյունքում՝ նպատակ ունենալով կոծկել կամ քողարկել գույքի անօրինական ծագումը, կամ համագործակցություն ցանկացած անձին, ով իր գործողությունների իրավական հետևանքներից խուսափելու նպատակով, ընդգրկված է այդպիսի գործունեության մեջ,

- Գույքի նկատմամբ իրավունքների իրական բնույթի, աղբյուրի, տեղաբաշխման, տիրելու, տեղափոխման կոծկումը կամ քողարկումը, ի-

մանալով, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեությունից կամ նման գործունեությանը մասնակից լինելուց,

- **Գույքի ձեռքբերումը, տիրումը կամ իմանալով, որ ստացման պահին գույքը ձեռք է բերվել հանցավոր գործունեությունից կամ նման գործունեությանը մասնակից լինելուց,**

- **Վերը նշված պարագրաֆներում հիշատակված ցանկացած գործունեությանը մասնակցելը, իրականացման նպատակով ընկերակցություն ստեղծելը, իրականացման փոյժը և իրականացման համար համագործակցության ցուցաբերելը, սալլրանքը, համագործակցությունն ու խորհրդատվությունը,**

Իմանալու, դիտավորության կամ նպատակի մասին, որոնք պահանջվում են որպես վերը նշված գործունեության տարրեր, կարելի է դատել անաչառ փաստացի հանգամանքների հիման վրա:

Փողի լվացումը կհամարվի այդպիսին անգամ այն դեպքում, երբ գործողությունները, որոնք ստեղծել են լվացման ենթակա գույք, իրականացվել են Մասնակից այլ Երկրների տարածքում կամ երրորդ երկրի տարածքում:

- **«Գույք»- հանդիսանում է ցանկացած տխայի գույք, լինի դա նյութական, թե ոչ նյութական, շարժական թե անշարժ, շուշափելի թե անշուշափելի, իրավաքանական փաստաթղթեր կամ փաստաթղթայնացված միջոցներ, որոնք վկայում են տիրելու կամ օրենքով նմանատիպ գույքից տոկոսներ ստանալու իրավունքի մասին:**

- **«Հանցավոր գործունեություն» նշանակում է հանցագործություն՝ նախատեսված Վիեննայի Համաձայնագրի 3(1)(ա) Հոդվածով և ցանկացած այլ հանցագործություն, նախատեսված որպես այդպիսին, յուրաքանչյուր Մասնակից Երկրի սույն Ղեկավար հրահանգի իրականացման նպատակին ծառայող:**

- **«Իշխանությունների իրավասու ներկայացուցիչներ»-նշանակում է իշխանությունների ազգային ներկայացուցիչներ, որոնք լիազորված են օրենքով կամ ենթաօրենսդրական ակտերով ստուգելու վարկային կամ ֆինանսական հիմնարկությունները:**

## ՀՈԴՎԱԾ 2.

Մասնակից Երկրները երաշխավորում են, որ սույն Ղեկավար հրահանգով բնորոշված փողի վացումն արգելվում է:

## ՀՈԴՎԱԾ 3.

1) Մասնակից Երկրները երաշխավորում են, որ վարկային և ֆինանսական հիմնարկությունները իրենց հաճախորդներից, որպես ապացույցների խկություն, պահանջում են անձը հաստատող փաստաթղթեր այն ժամանակ, երբ նրանք մտնում են գործնական հարաբերությունների մեջ, երբ նրանք հաշիվ կամ խնայողական հաշիվ են բացում, կամ այն ժամանակ, երբ առաջարկվում են պահպանող չիրկիզվող պահառաններ:

2) Անձը հաստատող փաստաթղթերի ներկայացման համար պահանջը կիրառվում է նաև հաճախորդների հետ տարվող ցանկացած գործարքի ժամանակ, ի տարբերություն պարագրաֆ 1-ում նշվածների, որտեղ առկա է 15.000 ԷԶՅՈՒ և ավել գումար, անկախ այն բանից, թե այդ գումարի գործողությունը միաժամանակ է կատարվում, թե մի քանի գործողությամբ, որոնք միմյանց կապված են ակնհայտ ձևով: Երբ գործարքի կնքման պահին ընդհանուր գումարը հայտնի չէ, ներգրավված հիմնարկությունը պետք է անցկացնի անձի հաստատում, հենց որ իրազեկ դառնա գումարի չափի մասին և հաստատի, որ հասել է սահմանին:

3) I և II պարագրաֆների դրույթների մասնակի փոփոխման ճանապարհով ապահովագրական վկայականների համար անձի հաստատմանը ներկայացվող պահանջները, որոնք թողարկվել են ապահովագրական հիմնարկների կողմից՝ համաձայն 79(267)EEC Ղեկավար հրահանգի, երբ նրանք զբաղվում են գործունեությամբ, որը գտնվում է այդ Ղեկավար հրահանգի գործողության շրջանում, չեն ներկայացվի այն դեպքերում, երբ յուրաքանչյուր տարվա համար հաշվարկված և պարբերաբար վճարվող ապահովագրավճարի գումարը կամ գումարները չեն գերազանցում 1.000 ԷԶՅՈՒ կամ երբ ապահովագրավճարի միակ վճարվելիք գումարը կազմում է 2.500 ԷԶՅՈՒ կամ ավելի քիչ: Եթե յուրաքանչյուր կոնկրետ տարվա համար պարբերաբար վճարվող ապահովագրավճարը գերազանցվել է կամ գերացանցվել է այն նպատակով, որպեսզի անցնի 1.000 ԷԶՅՈՒ-ի սահմանը, ապա այս դեպքում պահանջվում է անձի հաստատում:

4) Մասնակից Երկրները կարող են ապահովել, որպեսզի անձը հաստատելու պահանջը պարտադիր չլինի կենսաթոշակային կառուցվածքի ապահովագրական վկայականների համար այն պայմանով, որ այդպիսի ապահովագրական վկայականները չեն պարունակում մերժ-



ման կետ և չեն կարող օգտագործվել որպես գրավ՝ փոխառություն ստանալու նպատակով:

5) Այնպիսի կասկածների դեպքում, թե վերը հիշատակված պարագրաֆներում նշված հաճախորդները արդյոք գործում են իրենց անունից կամ եթե ակնհայտ է, որ նրանք չեն գործում իրենց անունից, ապա վարկային և ֆինանսական հիմնարկությունները հիմնավորված միջոցներ կձեռնարկեն իրական անձանց մասին, ում անունից գործում են տվյալ հաճախորդները տեղեկություններ ստանալու համար:

6) Վարկային և ֆինանսական հիմնարկությունների անձի այսպիսի հաստատում են իրականացնում նույնիսկ, երբ գործարքների գումարը սահմանված չափից ցածր է և այն դեպքում, երբ կա փողի լվացման կասկած:

7) Վարկային և ֆինանսական հիմնարկությունների չեն ենթարկվում անձի հաստատման սույն Հոդվածով նախատեսված պահանջներին, եթե հաճախորդը հանդիսանում է սույն Ղեկավար հրահանգում ընդգրկված Վարկային և ֆինանսական հիմնարկություն:

8) Մասնակից Երկրները կարող են նախատեսել, որ գործարքների կնքման համար 3-րդ և 4-րդ պարագրաֆներում հիշատակված պահանջները իրականացվում են, եթե սահմանվել է, որ գործարքի վճարը կկատարվի հաճախորդի անունով բացված հաշվի միջոցով, վարկային մեխանիզմով, որը, համաձայն առաջին պարագրաֆի պահանջների, մտնում է սույն Ղեկավար հրահանգի մեջ:

#### *ՀՈԴՎԱԾ 4.*

Մասնակից Երկրները երաշխավորում են, որ վարկային և ֆինանսական հիմնարկությունները, փողի լվացումն օգտագործելու համար ցանկացած հետաքննության ժամանակ, որպես ապացույց, կպահպանեն հետևյալը՝

- նույնացման պատճենները կամ պահանջվող վկայականը վկայակոչման դեպքում, իլի հաճախորդների հարաբերությունների ավարտից հետո, առնվազն հինգ տարվա ընթացքում,

- ապացույցները և գրառումները պահպանող գործարքների դեպքում, որոնք կազմված են բնօրինակ փաստաթղթերից կամ պատճեններից և թույլատրելի են դատավարությունում, համաձայն կիրառվող ազգային օրենսդրության, գործարքի կատարումից հետո, առնվազն հինգ տարի:

### *ՀՈԴՎԱԾ 5.*

Մասնակից Երկրները երաշխավորում են, որ վարկային և ֆինանսական հիմնարկությունները առանձնակի ուղարկությամբ կստուգեն ցանկացած գործարք, որն իր բնույթով առավել նման կհամարվի փողի լվացմանը:

### *ՀՈԴՎԱԾ 6.*

Մասնակից Երկրները երաշխավորում են, որ վարկային և ֆինանսական հիմնարկությունները, նրանց ղեկավարները և աշխատակիցները լիովին կհամագործակցեն փողի լվացման դեմ պայքարի համար իշխանությունների պատասխանատու ներկայացուցիչների հետ:

- Իշխանությունների այդ ներկայացուցիչներին իրենց իսկ նախաձեռնությամբ ցանկացած փաստի մասին տեղեկացնելով, որը կարող է փողի լվացման ինդիկատոր հանդիսանալ,

- կիրառվող օրենսդրությամբ հաստատված արարադրությանը համապատասխան, իրենց իսկ պահանջով, իշխանությունների այդ ներկայացուցիչներին տրամադրել ողջ անհրաժեշտ լրատվությունը,

1-ին պարագրաֆում հիշատակված տեղեկությունը ողարկվում է իշխանությունների այն ներկայացուցիչներին, ովքեր պատասխանատու են Միության Անդամ Երկրում, որի տարածքում գտնվում է փողի լվացման պայքարի համար տեղեկություն հարուրդող հաստատությունը: Վարկային կամ ֆինանսական հիմնարկությունների կողմից նշանակված անձը կամ անձինք տեղեկությունը հղում են սովորական ձևով՝ հողված 11 (1)-ով հաստատված ընթացակարգին համապատասխան:

1-ին պարագրաֆի համաձայն, իշխանությունների ներկայացուցիչներին տրամադրված տեղեկությունը կարող է օգտագործվել միայն փողի լվացման դեմ պայքարի կապակցությամբ: Մակայն մասնակից երկրները կարող են ապահովել, որպեսզի այդ տեղեկությունը օգտագործվի նաև այլ նպատակների համար:

### *ՀՈԴՎԱԾ 7.*

Մասնակից երկրները երաշխավորում են, որ վարկային և ֆինանսական հիմնարկությունները ձեռնպահ կմնան այն գործարքների անցկացումից, որոնք, ինչպես նրանք գիտե՞ն կամ կասկածում են, կարող են կապված լինել փողի լվացման հետ, մինչև նրանք կտեղեկացնեն հողվա-

ծում հիշատակված իշխանությունների ներկայացուցիչներին: Իշխանությունների նշված ներկայացուցիչները իրենց ազգային օրենսդրությամբ որոշվող պայմաններում կարող են հրահանգներ տալ գործողությունները չկատարելու վերաբերյալ: Այնտեղ, որտեղ կասկած կա, որ այդպիսի գործարքի անցկացումը կհանգեցնի կամ էլ հավանականություն կա, որ դա վնաս կբերի փողի լվացման մեջ կասկածելի բենեֆիցիարների հետապնդմանն ուղղված ջանքերին, ներգրավված հիմնարկությունները, գործարքի անցկացումից անմիջապես հետո, պետք է տեղեկացնեն իշխանության ներկայացուցիչներին:

#### *ՀՈԴՎԱԾ 8.*

Վարկային և ֆինանսական հիմնարկությունները և դրանց դեկավարներն ու աշխատակիցները ներգրավված հաճախողներին կամ այլ երրորդ անձանց չպետք է հայտնեն, որ տեղեկությունը, համաձայն 6 և 7 հոդվածների, փոխանցվել է իշխանություններին կամ այն մասին, որ կատարվում է փողի լվացման հետաքննություն:

#### *ՀՈԴՎԱԾ 9.*

Վարկային կամ ֆինանսական հիմնարկության աշխատակիցների կամ դեկավարների կողմից փողի լվացման դեմ պայքարի համար պատասխանատու իշխանություններին 6 և 7 հոդվածներում հիշատակված տեղեկության ուղղամտորեն հայտնումը իրենից գործարքով կամ իրավաբանական կանոնադրական կամ էլ վարչական պրովաժով տեղեկության հայտնման սահմանափակման խախտում չի ներկայացնում և վարկային կամ ֆինանսական հիմնարկությունների, դրանց դեկավարների կամ աշխատակիցների վրա ոչ մի բնույթի պատասխանատվություն չի դնում:

#### *ՀՈԴՎԱԾ 10.*

Մասնակից երկրները երաշխավորում են, որ եթե վարկային կամ ֆինանսական հիմնարկություններում իրավասու մարմինների ստուգումների ընթացքում կամ այլ ճանապարհով իրավասու մարմինները հայտնաբերում են փաստեր, որոնք կարող են փողի լվացման ապացույց ծառայել, ապա նրանք այդ մասին տեղեկացնում են փողի լվացման դեմ պայքարի համար պատասխանատու իշխանություններին:

### *ՀՈԴՎԱԾ 11.*

Մասնակից երկրները ապահովում են, որպեսզի վարկային և ֆինանսական հիմնարկությունները.

1) Մահմանեն ներքին վերահսկողության և հաղորդումների համապատասխան ընթացակարգեր, որպեսզի խոչընդոտեն և կանխեն փողի լվացման հետ կապված գործողությունները:

2) Ձեռնարկեն համապատասխան միջոցներ, որպեսզի իրենց աշխատակիցները ծանոթանան սույն Ղեկավար հրահանգում սարմանակվող դրույթներին: Այդ միջոցները պետք է ներառեն համապատասխան աշխատակիցների մասնակցությունը նախապատրաստական հատուկ ծրագրերում, որպեսզի օգնեն նրանց ճանաչելու սյն գործողությունները, որոնք, հավանաբար, կապված են փողի լվացման հետ և, նաև այն մասին, որպեսզի հրահանգավորեն նրանց, թե ինչպես պետք է վարվեն նման դեպքերում:

### *ՀՈԴՎԱԾ 12.*

Մասնակից երկրները պետք է ապահովեն, որպեսզի սույն Ղեկավար հրահանգի դրույթները ամբողջովին կամ մասնակիորեն տարածվեն մասնագետների, այլ ոչ այնպիսի կարգի ձեռնարկատերերի, ինչպիսիք են հողված 1-ում հիշատակված վարկային և ֆինանսական հիմնարկությունները, որոնք ներգրավված են գործունեության մեջ և որոնք, ամենայն հավանականությամբ, կարող են օգտագործվել փողի լվացման նպատակով:

### *ՀՈԴՎԱԾ 13.*

Լ. Փոխադարձ կապերի Կոմիտեն (հետագայում «Կոմիտե»), Կազմավորվելու է Հանձնաժողովի հովանու ներքո: Նրա խնդիրները հետևյալն են.

ա) օժանդակել սույն Ղեկավար հրահանգի ներդաշնակ կիրառմանը, առանց վնասելու պայմանագրի 169 և 170 հոդվածները՝ ցանկացած գործնական հիմնախնդիրների առիթով, և խորհրդատվությունների միջոցով, պետք առաջանում են կիրառման ժամանակ, և դրանց դեպքում տեսակետների փոխանակումը համարվի օգտակար.

բ) օժանդակել Միության Անդամ երկրների միջև սույն պայմանների և պարտավորությունների մասին առավել խիստ լրացուցիչ խորհրդատվություններին, որոնք նրանք կարող են ընդունել ազգային մակարդակով,

գ) անհրաժեշտության դեպքում ցանկացած հավելվածների և յուսուցումների մասին, որոնք պետք է արվեն Ղեկավար հրահանգում, կամ էլ ցանկացած համաձայնեցումների մասին, որոնք անհրաժեշտ կհամարվեն, մասնավորապես, ներդաշնակեցնեն հողված 12-ի ազդեցությունը, ծանուցել հանձնաժողովին,

դ) պարզել՝ հարկ կա՞ արդյոք մասնագիտությունը կամ ձեռնարկատիրական գործունեության կատեգորիան ընդգրկել հողված 12-ի ազդեցության ոլորտում, որտեղ սահմանվում է, որ նման մասնագիտությունը կամ ձեռնարկատիրական գործունեության կատեգորիան Միության Անդամ Երկրում օգտագործվել է փողի լվացման համար:

2. Կոմիտեի պարտականությունների մեջ պետք է մտնի իրավասու իշխանությունների կողմից առանձին դեպքերում ընդունված սյուշումների գնահատումը:

3. Կոմիտեն պետք է բաղկացած լինի Միության Անդամ Երկրների կողմից նշանակված անձանցից և հանձնաժողովի ներկայացուցիչներից: Զարտուղարությունը կապահովվի հանձնաժողովով: Նախագահը պետք է լինի հանձնաժողովի ներկայացուցիչ: Կոմիտեն հավաքվում է նախագահի կողմից կամ իր իսկ նախաձեռնությամբ, կամ՝ Միության Անդամ Երկրի պատվիրակության խնդրանքով:

#### *ՀՈԴՎԱԾ 14.*

Միության Անդամ Երկրներից ցանկացածը կձեռնարկի համապատասխան միջոցներ սույն Ղեկավար հրահանգի բոլոր պայմանների լրիվ կիրառման երաշխավորման համար և, մասնավորապես, կորոշի պատիժներ սույն Ղեկավար հրահանգով ընդունված միջոցառումների խախտման դեպքում:

#### *ՀՈԴՎԱԾ 15.*

Մասնակից Երկրները սույն Ղեկավար հրահանգով ընդգրկված բնագավառում, փողի լվացման կանխման համար, կայող են ընդունել կամ ուժի մեջ թողնել առավել խիստ դրույթներ:

#### *ՀՈԴՎԱԾ 16.*

1. Մասնակից երկրները, սույն Ղեկավար հրահանգի կատարման համար, անհրաժեշտ վարչական ակտերը, օրինական ակտերը և օրենքները ուժի մեջ կմտցնեն ամենաուշը մինչև 1993 թ. հունվարի 1-ը:

2. Այնտեղ, որտեղ մասնակից երկրները ձեռնարկում են այդ միջոցները, դրանք պետք է պարունակեն սույն Ղեկավար հրահանգի վկայակոչում, կամ էլ պետք է ուղեկցվեն այդպիսի վկայակոչությամբ պաշտոնական հրատարակման պահին: Այդ վկայակոչությունների տրման եղանակները պետք է հաստատված լինեն Միության Անդամ Երկրների կողմից:

3. Մասնակից երկրները հանձնաժողովին կփոխանցեն ազգային օրենքների հիմնական դրույթների տեքստը, որոնք նրանք կընդունեն սույն Ղեկավար հրահանգի կարգավորման բնագավառում:

#### *ՀՈԴՎԱԾ 17.*

1993 թ. հունվարի 1-ից մեկ տարի անց, երբ անհրաժեշտ կլինի և, առնվազը դրանից հետո 3 տարվա ընթացքում, հսնձնաժողովը կազմում է հաշվետվություն՝ սույն Ղեկավար հրահանգի իրականացման վերաբերյալ և ներկայացնում այն Եվրոսպայի Խորհրդարանին կամ Խորհրդին:

#### *ՀՈԴՎԱԾ 18.*

Սույն Ղեկավար հրահանգը վերագրվում է Միության Անդամ բոլոր Երկրներին:

Կազմված է Լյուքսեմբուրգում, 1991 թ. հունիսի 10-ին:

Միության փոխարեն նախագահ՝

Յու. Ս. Յունկեր

## ՎԱՐՔԻ ՕՐԵՆՍՈՒՐԸ

(Կոռուպցիայի դեմ պայքարի Անկախ Հանձնաժողով, Նոր Հարավային Ռուս, Ավստրալիա)

### *Ներածություն*

Վարքի օրենսգիրքը կառավարման կարևոր գործիք է, որը կարող է դրականորեն ձևավորել կազմակերպության մշակույթը: Շատ կազմակերպություններ համոզվել են, որ էթիկական հարցերի նկատմամբ որոշակիորեն հստակ մուտեցումը բարելավում է կազմակերպության համբավը, օգնում է գործին և անձնակազմի մեջ հպարտության զգացում դաստիարակելուն:

Յուրաքանչյուր կազմակերպության անձնակազմ իրեն պետք է այնպես պահի, որպեսզի պահպանի հավատն ու հասարակական փստակությունը կազմակերպության նկատմամբ: Ենթադրվում է, որ անձնակազմը, հատկապես պետական հիմնարկներում, իր աշխատանքը կկատարի արդյունավետ, ազնիվ, անաչառ ու բավական լավ: Հասարակայնությունը հուսով է, որ պետական ժամանակակից սեկտորը հարկման միջոցները կօգտագործի ավելի բացարձակ ու պատասխանատու կերպով:

Վարքի օրենսգիրքը սահմանում է կազմակերպության անձնակազմի վարքագծի ստանդարտներ, որոնք պետք է օգնեն լուծելու իրենց աշխատանքում հանդիպած էթիկական երկրնորանքները: Քանի դեռ չկան սահմանված կանոններ, որոնք պատասխանեն կազմակերպությունում ծագած էթիկական բոլոր հիմնախնդիրներին, վարքի օրենսգիրքը ապահովում է շրջանակներ, որանց սահմաններում անձնակազմը համաձայնում է աշխատել: Դա կարող է օգնել նաև կանխելու կոռուպցիան, ծանուցելով անձնակազմին այն վարքագծի մասին, որը կարող է պոտենցիալ կոռումպացված լինել կամ կարող է ուրիշի կողմից կոռումպացված թվալ: Օրինակ՝ օրենսգիրքը կարող է բնութագրել այնպիսի հարցեր շոշափող շահերի բախումները լուծող դեկավարություն, ինչպիսիք են՝ ինչպես արձագանքել նվերների կամ շահերի առաջարկներին, և ինչ անել, եթե դուք գտնում եք, որ առկա է կոռուպցիա: Թեկուզ շեշտը պետք է դրված լինի էթիկական լավ վարքագծի վրա, ծառայողները պետք է տեղեկացված լինեն նաև, թե ի՞նչ կա կամ ի՞նչ կարող է լինել, եթե խախտեն օրենսգիրքը:

Գործուն լինելու համար օրենսգիրքը պետք է բովանդակի ավելին, քան անորոշ սկզբունքներն են: Եթե այն, իբրք, կոչված է ամենօրյա աշխատանքում օգնելու անձնակազմին, ապա օրենսգիրքը պետք է ներառի հստակ ձևավորված սկզբունքներ և օրինակներ, որոնք կիրառելի են կազմակերպության կոնկրետ պարտականություններում: Անձնակազմը պետք է առաջնություն ան կազմակերպության այլ փաստաթղթերով, օրինակ՝ ղեկավարող սկզբունքներով, հրահանգներով և այնպիսի մեխանիզմներով՝ ինչպիսիք են գրույցը գործընկերոջ կամ ղեկավարի հետ, որոնք կարող են օգնել լուծելու հիմնախնդիրները, որոնք անմիջապես օրենսգրքում ընդգրկված չեն: Վարքի լավ օրենսգիրքը ակտիվ փաստաթուղթ է, որին դիմում է կազմակերպության ամբողջ անձնակազմը, այլ ոչ թե փոշի հավաքող մի փաստաթուղթ, որը դրված է գլխավոր կառավարչի գրասենյակի գրադարակում:

1991 թ. հուլիսին Նոր Հարավային Ուելսի ղեկավարը ոլորտում կայացրեց, որ պետական կառավարական բոլոր կազմակերպությունները պետք է մշակեն Վարքի օրենսգիրք և 1992թ.-ից մտցնեն իրենց ամենամյա հաշվետվության մեջ: 1993 թ. տեղական իշխանության մասին օրենքը Նոր Հարավային Ուելսում տեղական իշխանության մարմինների վրա դնում էր նմանատիպ պարտավորություն: Յուրաքանչյուր խորհուրդ 1994 թ. հունիսի 30-ին պետք է նախապատրաստեր և բնութագրեր Վարքի օրենսգիրքը, որը պետք է պահպանեին խորհրդի բոլոր անդամները, աշխատակիցները, պատվիրակները:

Նոր Հարավային Ուելսի պետական սեկտորի համար Վարքի օրենսգրքի նմուշը, որը հրապարակվեց 1996 թ. պետական գրադրվածության Բաժնի կողմից, Նոր Հարավային Ուելսի պետական սեկտորի ամբողջ անձնակազմի նվազագույն ստանդարտն է: Այն, իբրև հիմք, ապահովում է կազմակերպություններին մշակելու սեփական անհատական օրենսգրքեր:

Որպես կազմակերպություն դուք պետք է ոլորտ եք.

- ի՞նչ հոդվածներ են անհրաժեշտ մտցնելու ձեր Վարքի օրենսգրքի մեջ,
- որքա՞ն տեղեկություն է ձեզ պետք յուրաքանչյուր հոդվածի համար,
- ինչպե՞ս եք դուք մտածում ներգրավել ամբողջ անձնակազմին օրենսգրքի կատարման ու պահպանման համար,
- ի՞նչ հաճախականությամբ պետք է վերանայեք օրենսգիրքը:



## ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐ ՎԱՐՔԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՒ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Հասարակական սեկտորի բոլոր կազմակերպությունները պետք է մշակեն Վարքի օրենսգիրք, որը կազմակերպությունում ապահովում է ամբողջ անձնակազմի յուրաքանչյուր օրվա աշխատանքի էթիկական կառուցվածքը:

Որպեսզի օրենսգիրքը լինի արդյունավետ, այն չպետք է լինի որևէ տեղից ուղարկված կանոնների ժողովածու: Այն պետք է մշակված լինի յուրաքանչյուր կազմակերպության և նրա անձնակազմի կողմից, որպեսզի ընդգրկի նրա յուրահատուկ պահանջները: Բացի դրանից, նա կազմակերպությունում պետք է զարգացնի էթիկական կուլտուրան:

Օրենսգիրքը պետք է մշակվի խորհրդատվությունների միջոցով, ինչը թույլ կտա բոլոր աշխատակիցներին, այլ ոչ միայն կենտրոնական կառավարման գլխավոր կառավարիչներին, մեկնաբանել օրենսգրքի մեջ մտցվող հարցերը: Խնդրեք անձնակազմին, որպեսզի նրանք առաջարկություններ և ուղղումներ մտցնեն օրենսգրքի կազմման սկզբնական փուլերում, այլ ոչ թե միայն մեկնաբանեն նրա վերջնական նախագիծը:

Որպեսզի օրենսգիրքը մշակեք, պետք է.

- անձնակազմի տարբեր կատեգորիաներից ստանաք տեղեկություն,
- խնդրեք մասնաճյուղերի ղեկավարներին, որպեսզի նրանք ձևակերպեն առավել ընդհանուր էթիկական հիմնախնդիրները, որոնց հետ առնչվում է նրանց անձնակազմը,
- աշխատակիցների գոյություն ունեցող խմբերի հետ, ինչպիսին է, օրինակ, ծառայողների գործերով խորհրդատվական կոմիտեն, քննարկեք հիմնախնդիրները: Դուք կարող եք նաև տվյալներ ստանալ պետական սեկտորի այլ կազմակերպություններից, որոնք այդպես մշակել են իրենց սեփական օրենսգրքերը, կամ այլ հիմնարկներից, որոնք կապված են ձեր կազմակերպության հետ: Որքան կարելի է շատ ուսումնասիրեք տարբեր օրենսգրքեր և որոշեք, թե որ սեկտորները ձեզ պիտանի կլինեն, և որոնք՝ ոչ, որ հիմնա խնդիրներն են արդիական ձեր կազմակերպության անձնակազմի համար:

2. Պետական սեկտորի Վարքի բոլոր օրենսգրքերը պետք է ընդգրկեն ստանդարտ թեմաներ, որոնք արտացոլում են կազմակերպության յուրահատուկ պահանջները:

Գոյություն ունեցող օրենսգրքերի ամփոփումը, որոնք հիմնված են 1991 թ. Հարավային Նոր Ուելսի Վարքի օրենսգրքի օրինակի վրա, որը համատեղ կազմված է 1994 թ. Պետքարտուղարի դեպարտամենտի և ICAC կողմից, ցույց տվեց, որ բոլոր կազմակերպությունները յրենց Վարքի օրենսգրքերի մեջ մտցրեցին կազմակերպության արժեքների և սկզբունքների վերաբերյալ տեղեկություններ, նվերների և ծառայությունների վերաբերյալ հարցեր, ինչպես նաև պաշտոնական սեփականության, ծառայությունների և սարքավորումների միջոցների օգտագործման վարքագծի ստանդարտներ:

Կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը ընդգրկել է այսպիսի սեկտորներ.

- որտեղ ղյմնել հետագա օգնության կամ տեղեկությունների համար,
- աշխատակիցները իրավունքները,
- խտրականություն և հետապնդում,
- պարտականություններ, որոնք հակասության մեջ են գտնվում հավատքի և անձնական համոզմունքների հետ,
- որոշումների ընդունում,
- հասարակական մեկնաբանություններ,
- պաշտոնական տեղեկությունների օգտագործում,
- աշխատանք պետական սեկտորից դուրս,
- քաղաքական աշխատանք կամ շահեր:

Շատերն ընդգրկել են այսպիսի թեմաներ.

- Հարավային Նոր Ուելսի կառավարության իրավունքները,
- ծառայողների իրավունքների վերաբերյալ օրենսդրությունը:

Եթե դուք հեռանում եք պետական ծառայությունից, կազմակերպությունների և առաջարկվել է ընդգրկել նաև տեղեկություններ հետևյալ հարցերի վերաբերյալ.

- ICAC, որը հաղորդում է անձնակազմի պահանջների և անձնակազմի վրա դրանց ազդեցության մասին,
- հաղորդման ներքին համակարգը և ծառայողի խորհրդակցական պաշտպանությունը,

- պրոֆեսիոնալ առողջությունն ու անվտանգությունը,
- հաճախորդների սպասարկումը,
- շփումը նախկին ծառայողների հետ,
- էթիկայի վերաբերյալ այլ օրենսգրքերի կամ Վարքի պրոֆեսիոնալ օրենսգրքերի հղում:

3. Վարքի օրենսգիրքը պետք է պարունակի պետական սեկտորի գրեթե բոլոր կազմակերպություններին վերաբերող տեղեկություններ, բայց նա պետք է ներառի նաև օրինակներ, որոնք արտացոլում են հատուկ կանոնադրություն, կառուցվածք կամ ձեր կազմակերպության պարտականությունները:

Օրենսգիրքը պետք է գործի որպես որոշումների ընդունման ակտիվ օգնական, ապահովի օրինակներ, որպեսզի պարզաբանվեն էթիկական հիմնախնդիրները, որոնց հետ անձնակազմը կարող է բախվել, և տալ դրանց լուծման եղանակները: Ձեր կազմակերպության հատուկ ուշադրության արժանի ոլորտները կամ ռիսկը պետք է մանրակրկիտ քննարկվեն և ընդգրկվեն օրենսգրքի մեջ:

Շահապիտական դրոսապատճառներով բախումների սեկտորը կարող էր պարունակել տեղեկություններ այն մասին, թե ինչպես որոշել նման բախումը: Օրինակ՝ պաշտոնատար անձը, պայմանագիր կնքելով ընկերոջ կամ բարեկամի հետ, գնում է որևէ սարքավորում: Այդ սեկտորը կարող էր ընդգրկել նաև բախումների կառավարմանը վերաբերող գործնական տեղեկություն, եթե դա տեղի է ունենում խորհրդի ինչ-որ անդամի դիմումի քննարկումը բացառելուց, եթե նա այդ միջնորդությունում ֆինանսական շահ ունի:

Խորհրդապահական տեղեկության սեկտորը կարող է.

- Պարզել, թե խորհրդապահական տեղեկությունը, որը դուք լսել եք կամ ձեզ աշխատավայրում ասել են, գրավոր ձևով կամ այլ կերպ պահպանվել է համակարգչում:
- Տալ խորհրդապահական տեղեկությունների անօրինական օգտագործման օրինակներ, ինչպես օրինակ, այլ կազմակերպությունների անձնակազմին տեղեկություններ հայտնի դարձնելը, կամ հիմնվելով կառավարության որոշումների մասին տեղեկությունների վրա՝ սեփականության կամ բաժնետոմսերի սպեկուլյացիան:

Դուք կարող եք նաև ժամկետների վերաբերյալ ցանկանալ պարզել, թե ինչն է թույլատրելի, իսկ ինչը՝ ոչ, ասենք, կազմակերպության պաշարների օգտագործման ժամանակ: Այստեղ կարելի է ներառել այսպիսի կետեր.

- Աշխատակիցները կարող են օգտվել դեկավարության հեռախոսից, եթե խոսակցությունը կարճ է, զանգերը հաճախակի չեն և չեն խանգարում աշխատանքին:

- Դուք կարող եք դեկավարության թույլտվությամբ օգտագործել կազմակերպության պաշարները և, մասնավորապես, օգտվել անձնական նպատակներին ծառայող համակարգչից:

- Եթե դուք կազմակերպության սարքավորումից օգտվում եք անձնական նպատակներով, պետք է համոզված լինեք, որ դրանից օգտվում եք միայն ձեր անձնական ժամանակի ընթացքում, որ սարքավորումը սարքին է, և դրան պատշաճ ուշադրություն են դարձնում, որ դուք անպահովված եք ծախսվող նյութերով, օրինակ՝ թղթով, և դուք ձեզ կամ ձեր գործընկերներին չեք խանգարի կազմակերպության համար ձեր աշխատանքի կատարումով:

Անձնակազմը ընդհանուր առաջնորդող սկզբունքների կարիք ունի, բայց նրանց պետք է նաև տարբեր իրավիճակներում որոշումների մեջ գործնական օգնություն:

Տարբեր կազմակերպություններում շահերի և նվերների բաժնում կարող են տալ այնպիսի որոշակի խորհուրդներ, ինչպիսիք են.

- Դուք կայտոլ եք համեստ նախաճաշ անել, որն առաջարկված է աշխատանքային խմբին, բայց եթե դուք միակն եք, որին առաջարկվում է նախաճաշը, պետք է դրա համար վճարեք:

- Հիվանդանոցային անձնակազմը շնորհակալ հիվանդից կարող է ընդունել խորհրդանշական նվերներ շուկոլադի տուփի կամ ծաղիկների ձևով, բայց չի կարող ընդունել նվեր, եթե դա նույնատեսակի է, որպեսզի ազդի այն որոշման վրա, թե ինչպես է կատարված աշխատանքը կամ ձեռքբերված ասյունքը:

Օրենսգիրքը պետք է պարունակի նաև ընթացակարգի և կանոնների վերաբերյալ համապատասխան տեղեկություններ, ինչպես նաև այն մասին, թե անձնակազմը ինչպե՞ս կարող է դիմել իրենց, եթե նման տեղեկության համար կոնկրետ բնագավառում անհրաժեշտություն է ծագում: Օրինակ՝ «Կոռումպացված վարքի հաղորդման մասին» բաժնում դուք կարող եք տեղադրել որևէ մի բան, ինչպիսին է, օրինակ, «Դուք ավելի մանրամասն տեղեկություն կստանաք այն մասին, թե ի՞նչ պետք է հաղորդել,

ո՞ւմ հաղորդել և ի՞նչ տեղի կունենա այն տեղեկության հետ, որը դուք կտրամադրեք: Այս տեղեկությունը դուք կգտնեք կազմակերպության ներքին հաղորդումների քաղաքականության մասին փաստաթղթում, որը գտնվում է կազմակերպության տեղեկատուի մեջ»:

Ջանի որ օրենսգիրքը չի կայսող տալ էթիկայի կամ վարքի յուրաքանչյուր հիմնախնդրի պատասխանը, որոշ կազմակերպություններ ծառայողներին խրախուսում են, որպեսզի նրանք զործող օրենսգրքում գրեն այդպիսի հիմնախնդիրներ, փորձառու գործընկերների կամ ղեկավարության հետ քննարկեն իրենց հուզող ցանկացած հարց:

4. Վարքի օրենսգրքերը պետք է գրված լինեն պարզ, մատչելի և դրական շեշտադրումով:

Օրենսգրքում անհրաժեշտ է շեշտը հիմնականում դնել կազմակերպության բարոյականության դրական ձևավորման, քան համաձայնության և կարգապահության վրա:

Առաջնորդող սկզբունքները, որոնք սահմանված են հիմնականում բացասական արտահայտություններում, ինչպես օրինակ, «Կռահակալության և խտրականության չեն դիմանում», միտում ունեն ձևավորելու այն հաստատումը, թե անձնակազմը ինչ չպետք է անի: Թեպետ դուք պետք է ծառայողներին բացատրեք, որ խախտելով օրենսգիրքը, նրանք կարող են առնչվել կարգապահական սանկցիաներին կամ այլ հետևանքներին, այնուհանդերձ, դուք պետք է ընդգծեք, որ ազնիվ աշխատող և օրենսգրքին հետևող մարդիկ, կառուցվածքավարքի մասին անախարս դիմումների դեմ, կազմակերպության լիիրավ աջակցությանը կարժանանան:

Օրենսգիրքը, որը գրված է չափազանց բյուրոկրատական կամ իրավաբանական լեզվային ոճով, չգործող փաստաթուղթ է, քանի որ ծառայողների մեծամասնությունը այն չի կարդա կամ չի հիշի:

Օգտագործելով անհատական երանգ, «ձեզ» և «մենք» կարգի դերանուններ, մենք ընդգծում ենք պատասխանատվությունը և օգնում ենք անձնակազմին օրենսգիրքն ընդունել որպես փաստաթուղթ, որը վերաբերում է իրենց և իրենց կատարած աշխատանքին: Տեղական խորհուրդն, օրինակ, Վարքի օ-

օրենսգրքում կարող է մտցնել այնպիսի ներածություն, որ անձնակազմն այն ընդունի որպես իրենը:

- Վարքի օրենսգիրքը խորհրդի անդամներից յուրաքանչյուրի համար կիրառվում է հավասար չափով: Այն մշակված է այնպես, որպեսզի օգնի գործերը օրինավոր և ազնիվ կերպով վարել, բարձր պահել մեր համբավը և ամենօրյա ոլորտումների ընդունման հիմք տա:

5. Վարքի օրենսգիրքը պետք է ակտիվորեն պահպանվի ղեկավարության կողմից, իսկ օրենսգրքի բովանդակությունը բաժանվի կազմակերպության ողջ անձնակազմին:

Որոշ կազմակերպություններ աշխատակիցներին խնդրում են ստորագրել դիմումը, որ նրանք հասկանում են օրենսգրքի բովանդակությունը և պարտավորվում են հետևել դրան, իսկ մյուսներն էլ միայն խնդրում են, որպեսզի անձնակազմը գրավոր հաստատի, որ ստացել են օրենսգրքի պատճենը:

Մակայն օրենսգրքի հաստատումն իմաստ չունի, եթե դուք դրան չեք աջակցում կանոնավոր ուսուցմամբ, իրազեկության բարձրացմամբ կամ տեղեկատվական ժողովներով: Շատ հաճախ նոր աշխատողներին առաջարկում են կարդալ օրենսգիրքը և ստորագրել, որին այլևս երբեք չի անդրադառնալու, բացի այն դեպքերից, երբ աշխատանքի են ընդունում:

Որոշ կազմակերպություններում ձեզ անհրաժեշտ կլինի օրենսգրքի մասին հայտնել ոչ միայն մշտական անձնակազմին, այլ նաև ընտրովի պաշտոնատար անձանց, պայմանագրով աշխատող մարդկանց և այն կազմակերպություններին, որոնց հետ գործելու եք վարում:

Ղեկավարությունը պետք է պաշտպանի օրենսգրքի հիմնական արժեքներն ու անձնական օրինակ ցույց տա: Կարևոր է, որպեսզի ղեկավարները շարժվեն վարվեցողության նույն ստանդարտներով, ինչ-որ անձնակազմը: Ձեզ անհրաժեշտ է ապահովել այնպիսի ուսուցում, որպեսզի անձնակազմի հետ էթիկական հարցերի քննարկումը դառնա ղեկավարի աշխատանքի կանոնավոր ու հաճելի մի մասը: Ղեկավարներին անհրաժեշտ է պատրաստ լինել մի ամբողջ շարք սանկցիաների կիրառման, ե-

թե ծառայողները խախտում են Վարքի օրենսգիրքը, կսխալված նրանից, թե ուրիան լուրջ են խախտումները:

6. Կազմակերպությունները պետք է մշակեն իրենց Վարքի օրենսգրքի սատարմանն ուղղված գործունեղանակներ:

Վարքի օրենսգիրքը պետք է լինի գործող փաստաթուղթ, որը մշտապես բարձրացնում է կազմակերպության էթիկական կոլտուրյան և սատարում է անձնակազմի ընդունած որոշումներին:

Կարող են լինել օրենսգրքի տարածման մի շարք հնարավոր ռազմավարություններ.

- նոր ծառայողին աշխատանքի հրավիրելիս օրենսգրքի պատճենի կցումը նամակին,
- կանոնավոր կերպով օրենսգրքից հատվածներ կցել անձնակազմի համար նախատեսվող շրջաբերակումներում և տեղեկատվական տեղեկագրերում,
- օրենսգրքի կանոնավոր քննարկում ժուրովներում,
- տեսաերիզի վրա օրենսգրքի ներկայացման նախապատրաստության՝ ներառյալ էթիկական երկրնտրանքի, մի շարք հնարավոր սցենարներ,
- օրենսգրքի պատճենի տրամադրումը կազմակերպության ղեկավարությանը և գրադարանին՝ աշխատակիցների համար,
- անհրաժեշտության դեպքում օրենսգրքի թարգմանումը մի քանի լեզուներով,
- անձնակազմին օրենսգրքի մատչելի դարձնելը համակարգչային ցանցով,
- օրենսգրքի մասին պլակատների պատրաստում, որոնք պետք է տեղադրել կազմակերպության աշխատատեղերում,
- Վարքի օրենսգրքի քննարկումը դարձնել կադրերի պատրաստման դասընթացների կանոնավոր մասը,
- պայմանագրով աշխատող մարդկանց համար հրատարակել օրենսգիրք և պարզել՝ առաջնորդվում են արդյոք դրանով,
- հաճախորդներին տեղեկացնել կազմակերպության էթիկական ստանդարտների մասին, նաև այն մասին, թե ո՞ւմ կարող են նրանք պահանջ ներկայացնել այդ ստանդարտների խախտման դեպքում,
- օրենսգրքի հրապարակում տարեկան հաշվետվությունում:

Օրենսգրքի առանձնահատկությունների ներառումը կորպորացիայի պլանում, արտադրական համաձայնագրերում

կամ ծառայողների աշխատանքի մասին պայմանագրերում կա-  
րույ է օգնել օրենսգրքի էթիկական նպատակների միասնացմա-  
նը կազմակերպության հիմնական աշխատանքների մեջ:

**7.Վարքի օրենսգրքերը անհրաժեշտության դեպքում  
մշտապես պետք է վերանայվեն ու վերափոխվեն:**

Դուք պետք է հսկեք և հետևեք, որպեսզի օրենսգիրքը  
միշտ հրատապ մնա, որ աշխատակիցներն այն լավ հասկանան  
և դրանով առաջնորդվեն: Հարկ է նաև հետևել, թե ինչ չափով է  
օրենսգիրքը ազդել կազմակերպության էթիկական կուլտուրայի  
վրա:

Վերանայելով օրենսգիրքը, ձեզ անհրաժեշտ է այդ գոր-  
ծընթացի մեջ որքան հնարավոր է շատ աշխատակիցներ ներգ-  
րավել, բայց միևնույն ժամանակ պետք է նշել, որ հիմնական ու-  
շադրությունը դարձվում է օրենսգրքի որակյուն և օգտակարու-  
թյանը, ոչ թե նրանց անձնական վարքին կամ էթիկային:

Այս ամփոփիչ հոդվածից ստացված տեղեկությունը  
պետք է օգնի բարելավելու գոյություն ունեցող օրենսգիրքը և  
մշակելու ավելի լավ ռազմավարություններ՝ կազմակերպության  
բոլոր գործող պորտներում օրենսգրքի առավել արդյունավետ  
օգտագործման համար:

## ՀԱՐՑԵՐ ՄՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ունե՞ք արդյոք Վարքի օրենսգիրք:
2. Ձեր կազմակերպության օրենսգիրքն արդյո՞ք մշակվել է կազմակեր-  
պության տարբեր ոլորտների ողջ անձնակազմի օգնությամբ:
3. Ձեր օրենսգիրքը պետական ծառայողների համար օրենսգրքից  
ստանդարտ թեմաներ ընդգրկո՞ւմ է:
4. Ընդգրկե՞լ էք արդյոք, լրացուցիչ թեմաներ, հատկապես ձեր կազմա-  
կերպության հիմնախնդիրների լուծման համար:
5. Օրենսգիրքն ապահովո՞ւմ է բավարար քանակությամբ գործնական  
օրինակներ և ուղեցույցներ այն մարդկանց համար, ովքեր առնչվում  
են էթիկական այդ հիմնախնդիրների հետ:
6. Օրենսգիրքը մատչելի և պարզ լեզվո՞վ է գրված:
7. Անհրաժեշտ ուշադրություն դարձվո՞ւմ է փաստաթղթի անձնակա-  
նության և դրական երանգին, և ոչ թե կարգապահության խիստ  
պահպանմանը:



8. Արդյո՞ք օրենսգրքի բովանդակությունը մատչելի էք համարում ամբողջ անձնակազմին և համատերերին:
9. Ղեկավարությունն առաջնորդվո՞ւմ է արդյոք օրենսգրքով և օրինակ ծառայո՞ւմ է:
10. Աշխատակիցներն արդյո՞ք ակտիվորեն են աջակցում օրենսգրքի պահպանմանը:
11. Անհրաժեշտության ծագման դեպքում օրենսգրքում նոր հոդվածներ մտցվո՞ւմ են:
12. Ի՞նչ մեթոդներ եք օգտագործում, որպեսզի դրույեք անձնակազմին օգտվելու օրենսգրքից և ինչպե՞ս է դա ազդել կազմակերպության էթիկական կուլտուրայի վրա:
13. Կանոնավոր վերանայո՞ւմ եք ձեր վարքի օրենսգիրքը և անհրաժեշտության դեպքում արդիականացնո՞ւմ եք այն:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Շ. Ծաղիկյան Կոռուպցիա. Պատաճառները, հետևանքները-Եր.: Գոշ, 2001- 170 էջ
2. Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ. Իրականի և անիրականի միջև. տնտեսագիտական-քաղաքագիտական ուսումնասիրություն Եր., Տիգրան Մեծ, 2004 – 720 էջ
3. Ա. Քառյան Հարկային բեռի հավասարակշռման և հակամենաշնորհային որոշ խնդիրների կարգավորումը ՀՀ-ում: «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում» հանդես, 2004, 2 էջ 156- 161
4. Ա. Քառյան Կոռուպցիայի դրսևորումներն ու առանձնահատկությունները. Հակակոռուպցիոն պայքարի հիմնախնդիրները Հայաստանում: «Օրենք և իրականություն» ամսագիր, 2002թ, 13 (հունիս) էջ 22-24
5. Ա. Քառյան Կոռուպցիայի դիմագիծը և հակակոռուպցիոն պայքարի ուղղությունները Հայաստանում: «Հայացք տնտեսությանը» ՀՀ կառավարության տնտեսական քարեփոխումների վերլուծական – տեղեկատվական կենտրոնի տեղեկագիր 2002թ, 10, էջ 9-11
6. Revisiting Anti-Corruption Strategies: Title Toward Incentive –Driven Approaches, Daniel Kauffman
7. Tanzi V. Corruption, Governmental Activities And Markets, IMF Working Paper, 1994
8. Corruption and the Global Economy, Susan Rose-Akerman
9. Corruption and Anti-Corruption Strategies: Issues And Case Studies From Dveloping Countries, Alan Doig & Stephan Riley
10. Corruption and the EU Enlargement Process, Quentin Reed, Wiltonpark Conference 2001
11. Global Corruption Report 2001, Edited by Robin Hodesswith Jessie Banfield and Toby Wolfe, Transparency Interantional
12. Helping Countries Control Corruption: The Role of the World Bank, World Bank, Washington, D.C., 1997

13. Roman. Frydman, Kenneth Murphy, Andrzej Rapaszynski Capitalism with a Comrade's Face CEU Press, Budapest, 1998
14. Roman. Frydman, Andrzej Rapaszynski Privatization in Eastern Europe: is the State Withering Away? CEU Press, Budapest, 1994
15. Полтерович В. М. Факторы коррупции, Экономика и математические методы, 1998. Т.34 Вып. 3. стр 30-39
16. Роуз – Аккерман С. Коррупция и государство: причины, следствия, реформы, Москва, 2003.
17. Цагикян С. Роль общества в борьбе с коррупцией. Ереван “Антарес”, 2003-56стр.
18. Аслаханов А.А. Особенности российской коррупции // Проблемы борьбы с коррупцией. Сборник статей. М.: Учебно-консультационный центр «ЮрИнфоР», 1999.
19. Астафьев Л.В. К вопросу о понятии коррупции // Коррупция в России: Состояние и проблемы. Материалы научно-практической конференции (26-27 марта 1996 года). Выпуск 2. М., 1996.
20. Борзенков Г.Н. Уголовно-правовые меры борьбы с коррупцией // Вестник Московского университета. Серия 11. Право. 1993. № 1.
21. Босхолов С.С. Проблемы уголовной политики в сфере борьбы с коррупцией // Проблемы борьбы с коррупцией. Сборник статей. М., 1999.
22. Васин Ю.Г. О некоторых аспектах разработки поискового прогноза законодательной деятельности в сфере борьбы с коррупцией // Проблемы борьбы с коррупцией. Сборник статей. М., 1999.
23. Витвицкий А.А. Определение коррупции в английском уголовном праве // Правовые и организационные проблемы борьбы с коррупцией .М.: Академия МВД РФ, 1993.
24. Власихин В.А., В.М. Николайчик. Определения преступлений, относящихся к коррупции по американскому законодательству (обзор нормативных актов и литературы) // Проблемы борьбы с коррупцией. Сборник статей. М., 1999.
25. Волженкин Б.В. К вопросу о субъекте коррупционных правонарушений по проекту Уголовного кодекса Российской Федерации// Актуальные проблемы борьбы с

- коррупцией и организованной преступностью в сфере экономики. Вып.1. М., 1995.
26. Волженкин Б.В. Провокация или оперативный эксперимент? // Законность. 1996. № 6.
  27. Волженкин Б.В. Коррупция. СПб.: Санкт-Петербургский юридический институт Генеральной прокуратуры РФ, 1998.
  28. Гридчин А.А. Международное сотрудничество и проблемы доказывания фактов коррупции // Проблемы борьбы с коррупцией. Сборник статей. М., 1999.
  29. Закон Российской Федерации «О борьбе с коррупцией» (официальный проект) // Российская газета. 1993. 16 апреля.
  30. Закон РФ «О борьбе с коррупцией» (проект) // Организованная преступность - 2.М.: Криминологическая ассоциация, 1993.
  31. Илларионов В.П. Использование возможностей частных детективов и охранных предприятий в борьбе с коррупцией // Коррупция в России: Состояние и проблемы. Материалы научно-практической конференции (26-27 марта 1996 года). Выпуск 2. М., 1996.
  32. Ильин О. Динамика коррупции после введения нового Уголовного кодекса РФ // Чистые руки.1999.№1.
  33. Кабанов П.А. Коррупция и взяточничество в России: исторические, криминологические и уголовно-правовые аспекты. Нижнекамск, 1995.
  34. Кирпичников А.И. Взятка и коррупция в России. СПб., 1997.
  35. Комиссаров В.С. Уголовно-правовые аспекты борьбы с коррупцией // Вестник Московского университета. Серия 11. Право. 1993. № 1.
  36. Коррупция в России может стать самой серьезной проблемой в международных отношениях. Центр стратегических и международных исследований (США) // Чистые руки.1999.№1.
  37. Коррупция в США. Аналитический обзор - М.: Академия МБ РФ, 1993.
  38. Красиовский Г.Н. Международное сотрудничество в борьбе с коррупцией // Проблемы борьбы с коррупцией. Сборник статей. М., 1999.

39. Кувалдин В.П. Борьба с коррупцией в дореволюционной России // Коррупция в России: Состояние и проблемы. Материалы научно-практической конференции (26-27 марта 1996 года). Выпуск 2. М., 1996.
40. Кузнецова Н.Ф. Правонарушения и коррупция в сфере приватизации и распределения земель // Коррупция в России: Состояние и проблемы. Материалы научно-практической конференции (26-27 марта 1996 года). Выпуск 2. М., 1996.
41. Куксов В.Н. Коррупция и международные мошенники // Проблемы борьбы с коррупцией. Сборник статей. М., 1999.
42. Кучеров И.И. Проявления коррупции в сфере налогообложения // Проблемы борьбы с коррупцией. Сборник статей. М., 1999.
43. Лунеев В.В. Коррупция, учтенная и фактическая // Государство и право. 1996. № 8.
44. Максимов С.В. Предупреждение коррупции. Лекция. М.: Московский институт МВД РФ, 1994.
45. Максимов С.В. Коррупционная преступность в России: правовая оценка, источники развития, меры борьбы // Проблемы борьбы с коррупцией. Сборник статей. М., 1999.
46. Максимов С.В., Максимова С.И. Коррупция в России и проблемы гражданского образования детей // Организационно-правовые проблемы предупреждения преступности несовершеннолетних. Материалы межведомственной научно-практической конференции. М.: Академия управления МВД РФ, 1999.
47. Мишин Г.К. Коррупция: понятие, сущность, меры ограничения. М., 1991.
48. Ответственность за должностные преступления в зарубежных странах / Отв. ред. Ф.М. Решетников. М., 1994.
49. Пономарев П.Г. Понятие коррупции и уголовно-правовые средства ее сдерживания // Правовые и организационные проблемы борьбы с коррупцией. М.: Академия МВД РФ, 1993.
50. Проект Федерального закона «О борьбе с коррупцией» и пояснительная записка (Аслаханов А.А., Максимов С.В.) // Правовые и организационные проблемы борьбы с коррупцией. М.: Академия МВД РФ, 1993.

51. Райсмен В.М. Скрытая ложь. Взятки: «крестовые походы» и реформы. М., 1988.
52. Ринглер М. Сюзан. Расследование и уголовное преследование высокопоставленных должностных лиц государства: практические соображения американского прокурора // Проблемы борьбы с коррупцией. Сборник статей. М., 1999.
53. Россия и коррупция: кто кого? // Российская газета. 1998.
54. Россия и моровой опыт против одействия коррупции. Материалы конференции. Вып.1. М.: «Мир без коррупции», 1999.
55. R. Frydman, K. Murphy, A Rapaczynnski Capitalizm with a comrade's face CEUP Budapest, 1998
56. Скобликов П.А. Нужна ли России самостоятельная федеральная служба для борьбы с организованной преступностью и коррупцией? // Проблемы борьбы с коррупцией. Сборник статей. М., 1999.
57. Суховарова Е.Л., Нестеров А.В. Трансформация коррупции в условиях перехода к рынку // Коррупция в России: Состояние и проблемы. Материалы научно-практической конференции (26-27 марта 1996 года). Выпуск 2. М., 1996.
58. Темнов Е.И. Коррупция. Происхождение современного понятия // Актуальные проблемы теории и практики борьбы с организованной преступностью в России. Материалы научно-практической конференции. Вып.3. М.: Московский институт МВД РФ, 1994.
59. Цветков С.И. Международная коррупция и «отмывание денег» // Проблемы борьбы с коррупцией. Сборник статей. М., 1999.
60. Шишков А.А. О форме расследования коррупционных преступлений // Проблемы борьбы с коррупцией. Сборник статей. М., 1999.
61. Яни П.С. Актуальные проблемы квалификации служебных преступлений // Проблемы борьбы с коррупцией. М., 1999.

Հեղինակ՝ Արա Կլադիմիրի Քառյան, տնտեսագիտության թեկնածու, ««Լոգիկա» գործարար և ֆինանսատնտեսական անկախ հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի նախագահ, ամէլի քան 25 գիտական հոդվածների, դասագրքերի և ուսումնական նյութերի հեղինակ, 1995-1997 թվականներին աշխատել է ՀՀ կենտրոնական բանկի կարգավորման և վերլուծությունների վարչության պետ: 1997-1999 թվականներին զբաղվել է ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության արտահովազրական տեսչությունի: Ներկայումս հանդիսանում է ՀՀ Ազգային ժողովի ֆինանսափարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ: 1989 թվականից սկսած՝ տնցել է դասախոսական աշխատանքի, 1995 թվականից դասավանդում է ԵՊՀ-ի տնտեսագիտական ֆակուլտետում: 2002 թվականին որպես փորձագետ ընդգրկվել է ՀՀ կառավարության Հակակոռուպցիոն ուղղմախարության ծրագրի, ինչպես նաև Արբատության Հարթահարման Բազմախարական Ծրագրի (ԱՀԲԾ) մշակող աշխատանքային խմբերում:

ԱՐԱ ՔԱՌՅԱՆ

ԿՈՌՈՒՊՑԻԱ  
(բացատրական ձեռնարկ)

Տպաքանակ՝ 1000 օրինակ:

Տպագրված է «Գասպրիկո» տպագրատանը



